

**НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ**

**АРХЕОЛОГИЧЕСКИЕ РАСКОПКИ В АРМЕНИИ
№ 25**

**АГАРАК
I
РАННЕБРОНЗОВОЕ ПОСЕЛЕНИЕ
(2001-2008 гг.)**

Г. С. ТУМАНЯН

**ЕРЕВАН
Издательство "Гитутюн" НАН РА
2012**

**NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE RA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY**

**ARCHAEOLOGICAL EXCAVATIONS IN ARMENIA
№ 25**

**AGARAK
I
EARLY BRONZE AGE SETTLEMENT
(2001-2008)**

G. S. TUMANYAN

**YEREVAN
NAS RA "Gitutyun" Publishing house
2012**

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
№ 25

ԱԳԱՐԱԿ
I
ՎԱՂԲՐՈՆՁԵՂԱՐՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԸ
(2001-2008 թթ.)

Գ. Ս. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն
2012

ՀՏԴ 902/904
ԳՄԴ 63.4
Թ 941

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և
ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու իմբրագիր՝ պատմ. գիտ. թեկնածու Պ.Ս. Ավետիսյան

Թ 941 Թումանյան Գ. Ս.

Ագարակ. I. Վաղրրոնգեղարյան ընկալվալորը (2001-2008 թթ.),
Եր.: «Գիտություն» հրատ., 2012.- 148 էջ + 52 էջ ներդիր

Աշխատությունն ամփոփում է Ագարակի հուշարձանախմբի վաղրրոնգեղարյան ընկալվալորի հնագիտական ուսումնալիրության առաջին փուլը: Պեղումների արդյունքների հիման վրա փորձ է արվում ենագիտորեն ուրվագծել վաղրրոնգեղարյան ընկալելի համալիրը, ներկայացվում են կուր-արաքսյան մշակույթին ընդորոշ գտածոները՝ ըստ նյութի և գործառնական մշանակության: Թեմայի շրջանակներում շոշափվում են երկրագործության, մետաղամշակության, քարամշակության, խեցեգործության հեա կապված մի շարք հարցեր: Անլրադարձ է արվում կուր-արաքսյան բնակատեղի ընկալության աշխարեայացքային պատկերացումներին, հատկապես՝ ծիսա-պաշտամունքային և գեղագիտական համակարգերին: Գիրքը նախատեսված է հնագետների, պատմաբանների, մշակութարանների և, ընդհանրապես, վաղնջական մշակույթներով հետաքրքրվող ընթերցողների համար:

ՀՏԴ 902/904
ԳՄԴ 63.4

ISBN 978-5-8080-0928-8

© ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2012թ.

© Թումանյան Գ.Ս., 2012թ.

Խմբագրի կողմից

Անդրադառնալով Ազարակի պեղումներին, հարկ են համարում խոսելու այս հուշարձանի ուսումնասիրության հետ կապված ուշագրավ այն դրվագների մասին, որոնք ըստ էության նորություն են հայաստանյան հնագիտության համար:

Ազարակի ուսումնասիրության ծրագրով առաջին անգամ Հայաստանում պեղումներ կատարվեցին հայ հնագիտությանը նպաստելու նպատակով ստեղծված հիմնադրամի տրամադրած միջոցներով: Պետական ֆինանսավորման կտրուկ նվազման պայմաններում "Ամերիկյան Գֆոելլեր հիմնադրամ" ընկերությունը սիրահոծար հանձն առավ ֆինանսավորելու Ազարակի պեղումները: Նախադեպը չունեցող այս նախաձեռնության դերն ու նշանակությունը դժվար է գերագնահատել:

Առաջին տարվա պեղումների ավարտից հետո հնավայրը ՀՀ կառավարության որոշմամբ ստացավ պատմամշակութային արգելոցի կարգավիճակ: Նորանկախ Հայաստանի համար սա հուշարձանի դերն ու նշանակությունը կարևորող ռացառիկ որոշումները մեկը պետք է համարել:

Ուշագրավ արդյունքներ տվեցին նաև պեղումները: Պարզվեց, որ Ազարակը ընդհանուր հուշարձան է: Հինգ տարբեր տեղամասերում բացահայտվեցին վաղ բրոնզի դարաշրջանից մինչև ուշ միջնադար (մ.թ.ա. III հազարամյակի առաջին կեսից մինչև XVI/XVIII դարեր) ընկած ժամանակահատվածի մշակութային շերտեր, շինությունների մնացորդներ: Ներկայումս Ազարակում արձանագրվել են բնակեցման յոթ մշակութա-ժամանակագրական փուլեր՝ Ազարակ 1-7: Չնայած այն հանգամանքին, որ մինչ օրս պեղվել է հսկայական տարածք գբարեցնող հնավայրի մի փոքրիկ հատվածը, արդյունքները գոհացուցիչ են և զգալիորեն թարմացնում են տարածաշրջանի հնագույն անցյալի ուսումնասիրության աղբյուրազիտական հենքը: Ասանավորապես բացվել են տուֆի խոշոր քարերով կառուցված կլոր հատակագծով վաղ բրոնզեդարյան շինություններ, որոնք առաջին անգամ են արձանագրվում կուր-արաքսյան (չենգավիթյան) մշակույթը նշանավորող բնակատեղիում: Հնավայրում հայտնաբերված մեծաքանակ թղթակավե արձանիկներն ինքնատիպ են և ոճական մի շարք հատկանիշներով առանձնանում են վաղ բրոնզի հայտնի արձանիկներից:

Հուշարձանի ասրածքում բացվել է Վանի թագավորության շրջանի ժայռափոր դամբարան, ինչը նույնպես առաջին անգամ է փաստագրվում Արաքսից հյուսիս ընկած տարածքներում:

Դետաքրքիր տվյալներ են գրանցվել հնավայրի այն հատվածներում, որոնք մ.թ.ա. II-ի դարերից մինչև մ.թ. IV-V դարերն ընկած ժամանակահատվածում օգտագործվել են որպես գերեզմանոց: Այստեղ, ուշ անտիկ շրջանին բնորոշ նյութերով դամբարանների հետ, բացվել են քրիստոնյաների թաղումներ պարունակող թաղման կառույցներ: Շերտագրական տվյալները և քրիստոնյաների թաղումներում հանդիպող անտիկ շրջանին բնորոշ նյութերը թույլ են առաջիկա շեշտել, որ դրանք մ.թ. II-IV դարերի վաղագույն քրիստոնեական մի համայնքի անդամների թաղումներ են: Քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուն նախորդող ժամանակահատվածի քրիստոնեական համայնքի առկայության այս փաստը դեռևս լուրջ արժևորման կարիք ունի:

Բացի նշվածից, հնավայրի տարածքում հսկայական մակերեսների վրա փաստագրվեց ժայռափոր կերու-վածքներով հագեցած «ծիսական լանդշաֆտի» խիստ ինքնատիպ մի համալիր, որն իր ծավալներով և կերտվածքների բազմազանությամբ զգալիորեն գերազանցում է Հայկական լեռնաշխարհում և հարևան շրջաններում արձանագրված լանդշաֆտի մշակման այլ օրինակներին:

Ներկայացվող ուսումնասիրությունը հիմնականում կատարվել է Ազարակի հյուսիսային համալիրի առաջին տեղամասի պեղումների հիման վրա: Տեղամասում բացված վաղբրոնզեդարյան անխաթար շերտերը հնարավորություն են տալիս ամբողջական պառկերացում կազմելու Ազարակի հնագույն բնակավայրի մասին: Հարկ է նշել, որ երկար տարիների ընդմիջումից հետո, մենագրական ուսումնասիրությամբ մասնագետներին է ներկայացվում ժամանակակից Հայաստանի տարածքում պեղված վաղբրոնզեդարյան ինքնատիպ մի բնակավայր՝ անբասիբ գիտական նկարագրությամբ: Հերլինակի ուշագրավ դիտարկումները, հայտնաբերված նյութերի վերլուծություններն ուրույն խոսք են հայ հնագիտության ոլորտում և զալիս են լրացնելու տարածաշրջանի հնագույն մշակույթին նվիրված ուսումնասիրությունների շարքը:

Ներածություն

Ազարակի հուշարձանախումբը գտնվում է Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան հատվածում՝ Այրարատ ընաշխարհի նախալեռնային գոտում, Արագած լեռան հարավարևելյան փեշերին, պատմական Արագածոտն գավառի հնամենի Լլտաբակ բնակավայրից 7 կմ - դեպի արևմուտք¹: Այն տարածվում է Արագածոտնի մարզի Ազարակ և Ոսկեհատ (Պատառիճ) գյուղերի միջև եղած բարձր հարթակի վրա (≈ 200 հա), գրադեցնելով Ամբերդ գետակի բարձրադիր աջ (արևմտյան) ափը: Հուշարձանի կոորդինատներն են՝ Հս. 40° 17' 43,3" - 40° 17' 46,3" և Ալ. 44° 16' 35,8" - 44° 16' 42,0", այն տեղադրված է ծովի մակարդակից 1088 մ բարձրության վրա²: 2001-2008 թվականներին (երկու տարվա ընդմիջումով) այստեղ կատարված պեղումներն ընդգրկում են պատմա-մշակութային արգելոցի ընդարձակ տարածքի (Սկ. 1) մի փոքր մասը միայն՝ հյուսիսային համալիրի I ժայռահարթակը («Աինասի քարափներ»), որը գտնվում է Ազարակ գյուղի հարավարևմտյան եզրին և հյուսիսից սահմանակից է Երևան-Գյումրի ավտոմայրուղուն (Սկ. 2)³: Լև իրենից ներկայացնում է ≈ 8 մ բարձրությամբ տուֆե հրվանդան և զբաղեցնում է ավելի քան 0,5 հա տարածք: Թեև այստեղ նախկինում հնագիտական աշխատանքներ չեն կատարվել, սակայն հուշարձանախումբի պաշտամունքային նշանակության վերաբերյալ հրատարակվել են երկու հաղորդումներ⁴:

Նախքան պեղումները սկսելը հուշարձանի տարածքը ենթարկվել է համալիր հետազոտության: Այդ շրջանակներում կատարվել է նաև հնագիտական տեղազնություն, որի ընթացքում հավաքված խեցեղենը, մեծ մասամբ, պատկանում էր կուր-արաքսյան մշակույթին: Այսօր արդեն, ՀՀ ԳԱԱ հնագիտության և մզզագրության ինստիտուտի հնագիտական արշավախմբի բազմամյա պեղումների արդյունքները հա-

¹ Այստեղ վաստացի բերված է եյուսիսային համալիրի հեռավորությունը, այսինքն՝ եուշարձանախմբի նվազագույն հեռավորությունը մարզկենտրոնից:

² Badalyan, Avetisyan, 2007, 25.

³ Վերջինս անցնում է հնավայրի հյուսիսային համալիրի միջով, այն ռաժանելով երկու մասի:

⁴ Հովհաննիսյան, 1990: Հովհաննիսյան, 2001:

վաստում են, որ Ազարակի վաղբրոնգեդարյան բնակատեղին բնական բարձունքի վրա տեղադրված շենգակիթյան տիպի բլուր-բնակավայր է: Այն բազմաշերտ հուշարձան է, որտեղից առայժմ հայտնաբերված ժամանակագրորեն ամենավաղ հավաքածոների (Ազաբակ I) կազմված են կուր-արաքսյան մշակույթին բնորոշ արտեֆակտներից⁵: Կուր-արաքսյան մշակութային շերտն ընդգրկում է երկու հորիզոններ:

ա) Աշակութային ստորին հորիզոնը ներկայացված է բացառապես մանր խեցաբեկորներով, որոնք էլ պեղավայրում առայժմ ի հայտ եկած (վաղբրոնգեդարյան) հնագույն արտեֆակտներն են՝ ռստ շերտագրության: Այս առաջին հորիզոնի հզորությունը մեծ չէ. այն կազմված է հիմնաժայռը ծածկող նստվածքներից, որոնց հաստությունն ընդամենը 0,10-0,12 մ է: Ժայռի վրայի խճավազի այս շերտում ստուգողական սյեղումներ են կատարվել H₁₁, H₁₂, I₁₁, I₁₂, J₁₁ քառակուսիների սահմաններում: Մանր խեցատներ են հայտնաբերվել I₁₁ քառակուսում՝ N 1 կլոր կացարանի հատակի տակից և միջից, վերջինիս կցակառույցի հատակի տակից, I₁₁ և I₁₂ քառակուսիների $\approx 3,5$ մ լայնությամբ սահմանագոտուց, H₁₁ քառակուսում՝ N 2 կլոր կացարանի հատակից ցած՝ ժայռերի միջև եղած գոգավորությունից, H₁₂ քառակուսու կենտրոնական հատվածից (ժայռի մեջ արված փոսոբակների միջև ընկած տարածք), J₁₁-ի հյուսիսային հատվածից: Շերտագրորեն վաղագույն այս մանր խեցաբեկորներից և ոչ մեկը գարդաբանված չէ: N 1 կլոր կացարանի ու դրա կցակառույցի և N 2 կլոր կացարանի հատակների տակից գտնված խեցատներն ունեն սև, նարնջագույն կամ դեղնա-կարմրավուն փայլեցված մակերևույթ: Արանք, ակնհայտորեն, չեն առնչվում հիշյալ կլոր կացարաններին և սրանց բնակիչների գործունեության արգասիք չեն: I₁₁ և I₁₂ քառակուսիների սահմանագոտում, հիմնաժայռի վրայի ջրաբերուկների նստվածքներում (խորությունը՝ 2,60-2,67 մ) հայտնաբերված խեցանոթների փոքրիկ բեկորները, հիմնականում, օժտված են մուգ դարչնագույն, դեղնա-դարչնագույն, կարմիր կամ սև փայլեցված (երբեմն՝ փայլատ) մակերևույթով: Ժայռը ծածկող խճավազի շերտում J₁₁ քառակուսու հյուսիսային հատվածից⁶ առայժմ հայտնաբերվել են 17 չգարդաբանված մանր խեցաբեկորներ: Դրանցից երկուսն ունեն դարչնա-մոխրագույն, հինգը՝ դեղնա-կարմրավուն մակերևույթ: Մնացած 10

⁵ Ազարակի կուր-արաքսյան հնագիտական համալիրի պեղումների արդյունքների վերարերյալ տե՛ս Ավետիսյան, Գասպարյան, 2002, 12-13: Թումանյան, 2002, 14-17: Թումանյան, 2002ա: Аветисян, 2003. Թումանյան, 2005, 60-63, 65: Badalyan, Avetisyan, 2007, 24-33. Avetisyan, 2008, 39-40. Թումանյան, 2008, 69-71: Թումանյան, 2009:

⁶ J₁₁ քառակուսու պեղումները դեռ չեն ավարտվել:

խեցատներն օժտփած են սև փայլեցված մակերևութով և վարդագույն, դարչնագույն կամ սև աստառով ևրանցից երկուսը սրվող շուրթերի բեկորներ են, որոնցից առավել խոշորի (հաստությունը՝ 8 մմ) միջուկը միաշերտ է, կարծր, դրսից ու ներսից անգորապատ, իսկ համեմատաբար նրբախեցի անոթի միջուկը երկշերտ է, ծակոտկեն: Մեկ այլ խեցանոթից պահպանվել է ստորին փոքրիկ մասը և նստուկից գրեթե աննշան մի հատված: Վերջինիս միջուկը նույնպես երկշերտ է, քիչ ծակոտկեն: Ժայռը ծածկող 0,10-0,12 մ հաստությամբ նստվածքաշերտում հայտնաբերված բոլոր խմբերի չգարդաբանված տարագույն խեցարեկորները չափերով համարժեք են և իրենց մակերևութի հղկվածությամբ ու փայլով առավելապես համադրելի են կուր-արաքսյան մշակույթի «արագածյան» կոչվող վաղ փուլի խեցեղենի հետ: Առայժմ հնարավոր խելամիտ ենթադրությունն այն է, որ ժայռահարթակի վուայի նստվածքների շերտում հանդիպող վաղորոնգեդարյան խեցանոթների մանր բեկորներն սյստեղ են հայտնվել բնակատեղի առավել բարձրադիր հատվածներից՝ քվելով քրի հոսքից: Եթե այս ենթադրությունը ճիշտ է, ապա հավանական պիտի համարել կուր-արաքսյան մշակույթի ավելի վաղ փուլին պատկանող մնացորդների գոյությունը Ագարակի հնագիտական հուշարձանի I տեղամասի հանդիպակաց կողմում՝ Երևան-Գյումրի մայրուղուց դեպի հյուսիս, որտեղ ժայռահարթակի վրայի հողի կտրվածքում երևում են ինչ-որ քանդված կառույցների հետքեր (նկ. 3, հետին պլանում)⁷:

ր) Կուր-արաքսյան մշակութային երկրորդ հորիզոնը, ակներևարար, կապված է կլոր կացարանների բնակիչների կենսագործունեության հետ: Այն իրենից ներկայացնում է 0,40-0,45 մ միջին հզորությամբ վաղորոնգեդարյան մոխրաշերտ, որի մեջ պահպանվել են շինարարական առաջին կամ ստորին հորիզոնի կառույցների որոշակի մնացորդներ, հիմնականում՝ հիմքի քարերը: Այնուամենայնիվ, պատերից մեկի առավելագույն պահպանված ըրծրությունը 1,43 մ է (նկ. 4), մեկ այլ պատինը՝ 1,40 մ (նկ. 5, ձախից, նկ. 6, աջից՝ առաջին պլանում):

⁷ Ուշագրավ է, որ նման իբավիճակ է գրանցված Ամիրանիսգորա վաղբրոնգեդարյան բնակատեղի պեղումների արդյունքում: Այստեղ՝ II (ստորին) տեղամասի շինությունների տակ հայտնաբերվել են դամբարաններ, իսկ I (վերին) տեղամասում նման պատկեր չի գրանցվել: Այդտեղից կարելի է եզրակացնել, որ բնակավայրի ստորին հատվածն առաջացել է վերին (սկզբնական) բնակելի տեղամասի ընդարձակման հետևանքով, այսինքն, ստորին թաղամասը վերինից ավելի ուշ է կառուցվել. տե՛ս Чубинишвили, 1963, 95.

Բնակելի համալիրը

Պեղումների հենց առաջին սեգոնում պարզ դարձավ, որ այստեղ՝ Ամրերդ գետակի ափին, վաղ բրոնզի դարաշրջանում հիմնադրվել և իր կենսագործունեությունն է ծավալել Հայաստանի նախալեռնային գոտու կուր-արաքսյան բազմաթիվ բնակատեղերից մեկը: Լստրև կներկայացնենք կուր-արաքսյան այդ հնագույն բնակավայրի մի փոքրիկ հատվածի պեղումների արդյունքները, սկսելով բնակարանաշինությունից: Շենգավիթյան մշակութային երկրորդ հորիզոնի պեղումներով առայժմ հայտնաբերվել են երկու բնակելի համալիրների և տարբեր օժանդակ կառույցների հիմնապատերը: Շինարարական ստորին հորիզոնի առաջին բնակելի համալիրը մեծ մասամբ ամփոփված է I₁₁ քառակուսու սահմաններում: Այն իրենից ներկայացնում է քարաշեն կլոր կացարան, որի ստորին շարքի քարերը, հիմնականում, պահպանվել են: Դրան արևմուտքից կցված է քառանկյուն հիշեցնող հատակագծով մի շինություն (նկ. 7, 8, 10)⁸: Կլոր կացարանի արտաքին տրամագիծն ավելի քան 6,30 մ է, ներքին տրամագիծը՝ $\approx 5,20$ մ, օգտակար մակերեսը՝ ≈ 21 մ²: Պատերի առավելագույն հաստությունը (ծեփի հետ միասին) 0,60-0,70 մ է, դրանք կառուցված են տափակ դիրքով դրված տեղական կարմիր և դեղնա-դարչնագույն տուֆի կոպտատաշ մեծ քարաբեկորներով, որոնք իրենց երկարությամբ կազմում են շինության շրջագիծը: N 1 կլոր կացարանի պատի հյուսիսարևելյան հատվածը տարրերվում է ընդհանուր շարվածքից իր անկանոնությամբ, քարերի տեսակով (բազալտ, գլաքար) և փոքրությամբ (նկ. 9, աջից): Կացարանի արևելյան հատվածի հատակ է ծառայում հիմնաժայռը ծածկող նստվածքաշերտը (նկ. 11), իսկ արևմտյան հատվածում պահպանված հատակը, հիմնաժայռի թեքության պատճառով, հարթեցված է մանր քարերով ու հողով, տոփանված, ապա՝ սվաղված: Արևմտյան պատին կից պահպանված հատակի առավելագույն հաստությունը 0,20 մ է (նկ. 12), որի մեջ հանդիպում են նաև վաղբրոնզեդարյան սակավաթիվ խեցատներ: Կցակառույցի պատերը շարված են քիչ ավելի փոքր տուֆ քարերով: Արև հյուսիսային պատի հիմքը պատրաստվել է հողաշաղա-

⁸ Իրականում սրա բոլոր պատերը կոր են, ներառյալ արևելյանը, որը կցված է կլոր կացարանի արտաքին շրջագծին:

խի հետ խառնված մանր քարերով. որի վրա դրվել են մեծ տափակ քարեր: Կից կառույցի 4 մ երկարությամբ արևմտյան պատի (պահպանված առավելագույն բարձրությունը՝ 1,40 մ) գետնախարիսխները դրված են խճավազին (նկ. 13), որի վրա նախապես 0,10-0,15 մ հաստությամբ մոխրի և մանր քարերի հետ խառնված հողաշաղախե հիմք է պատրաստվել: Իսկ վերջինիս 3,20 մ երկարությամբ և 1,43 մ պահպանված առավելագույն բարձրությամբ հարավային պատի փոքր գլաքարերով շարված և կավաշաղախով ամրացված հիմքը դրված է անմիջականորեն ժայռի վրա: Կցակառույցն ունի անկանոն հատակագիծ, այն կոր կրողներով երկրաչափական սեղան է հիշեցնում: Վերջինիս ներքին (օգտակար) մակերեսը ≈ 13 մ² է: Այս օժանդակ կառույցի հյուսիսարևելյան անկյունը, միզուցե, որմնախորշի ձևով անջատվել է մնացած տարածքից և ծառայել է որպես հացահատիկի ոչ մեծ ամբար: Կլոր կացարանին կրց «մոխրաշեթի» գոյության հանգամանքը, ինչպես նաև կլոր կացարանի պատին կիպ (գուգահեռ) շարված՝ կցակառույցի արևելյան կոր պատի առկայությունը (նկ. 8, 10) հուշում են, որ կրց շինությունը կառուցվել է ավելի ուշ, երբ կլոր կացարանը ծածկ է ունեցել և արդեն բնակեցված է եղել⁹: Այսպիսով, կարելի եզրակացնել, որ N 1 բնակելի համալիրը կառուցվել է երկու փուլով. սկզբում շարվել են կլոր կացարանի պատերը, տեղադրվել է ծածկը, ապա, որոշ ժամանակ անց՝ կառուցվել է կից շինությունը և տեղադրվել վերջինիս ծածկը: Շինությունների պատերը, հիմնականում, շարվել են տափակ դրված կրպտատաշ տուֆե մեկական քաբաբեկորներով. առանց միջնալիցքի: Հիմքի մակարդակում օգտագործվել են նաև բազալտե որձաքարեր և խոշոր գլաքարեր: Քարերն ամրացվել են ցեխով և ներս ու դրսից սվաղվել հարդախառն կավաշաղախով. Հարկ է նշել, որ բնակելի համալիրի հիմքի քարերը դրվել են տարբեր մակարդակների վրա՝ հարմարեցվելով տեղանքին¹⁰: Նախնական տպավորությունն այն է, որ N 1 կլոր կացարանի և սրա կցակառույցի պատերն ամբողջովին քարաշեն են եղել, քանի որ շինարարության համար պիտանի քարերը շրջակայքում ըստականաչափ մեծ թիվ են կազմում: Սակայն չի բացառվում, որ պատերի վերին հատվածները շարված լինեն հում աղյուսներով. Կլոր կացարանի մուտքն արտահայտված է ժայռի 0,90 մ -

⁹ Եթե երկու կառույցները համաժամանակյա լինեին, ապա միանգամայն ավելորդ կլինեին կցակառույցի արևելյան պատի կառուցումը, քանի որ կլոր կացարանի պատի հաստությունը միանգամայն ընդհանուր է դրա վրա նաև կցակառույցի ծածկի գերանները տեղադրելու համար:

¹⁰ Հիմնաժայռը թեքությամբ իջնում է դեպի հարավ և արևմուտք:

լայնությամբ անկյունաձև կտրվածքով, որից շենքն աստիճանի ձև է ստացել: Այն, ըստ երևույթին, րացված է եղել կառույցի հարավարևելյան մասում (նկ. 14): N 1 շինության արևելյան պատը, ակնհայտորեն, դրված է եղել րարծրաղիր ժայռահարթակի վրա, որտեղով հետագայում ճանապարհ է անցել¹¹: Այդ պատճառով կլոր կացարանի արևելյան պատի և մուտքի քարերը տեղում չեն պահպանվել: N 1 կացարանի արևելյան չափահասված պատի մոտ, տան ներսի կողմում, հիմնաժայռի ընկած կտրվածքին կոց րացվել է աստիճանաձև հարթակ (նկ. 15): Ժայռակեղտ այդ «նստարանի» կամ թարեքի չափերն են $\approx 2,90 \times 0,60 \times 0,20$ մ: Կլոր կացարանի մոտավոր կենտրոնում ժայռի մեջ մի գոգավորություն կա, որի մեջ կամ դրվել է կենտրոնական փայտե սյան հիմքը (քարե խարիսխը), կամ էլ տեղադրված է եղել օջախը: Ամեն դեպքում, հյուսիսային պատին դրսից կոց (ոչ իր տեղում) հայտնարերված $\approx 0,60$ մ երկարությամբ ուղղանկյուն պրիզմայաձև տաշված, մի կողմում կլորացող միստերով ղեղնաղաղչնագույն տուֆ քարը կարող էր ծածկի հենասյան խաղիսխը լինել (նկ. 16): Ցավոք, հայտնարերված օջախի հենակներից ոչ մեկն անտիղ չի պահպանվել, ուստի դժվար է ասել դրանք տեղադրված են եղել կլոր կացարանների կենտրոնում, թե՞ պատերի տակ:

Շինարարական առաջին հորիզոնի երկհորդ ընկելի համալիրը ներառված է H₁₁ և H₁₂ քառակուսիների սահմաններում: Դրա հիմնական շինությունը 5 մ ներքին տրամագծով կուր-արաքսյան կլոր կացարանն է, որի հարավային հատվածում րագայտե ործաքարերով և իռչոր գետաքարերով շարված գետնախաղիսխի վրա տափակ դիրքով դրվել են տուֆե կոսլտատաշ մեծ քարարեկորներ (նկ. 17-19): Արևմուտքից կլոր կացարանին կցված է մեկ այլ շինություն (նկ. 20, ձախից): Այս կցակառույցի արևմտյան (մուտքի) պատը մոտավորապես զուգահեռ է դրված N 2 կլոր կացարանի պատի համապատասխան հատվածին: Այսպիսով, ընկելի մեկ համալիրի սահմաններում՝ երկու պատերի միջև, ա-

¹¹ Հիմնաժայռի մեջ առկա զուգահեռ ակոսները, եավանարար, առաջացել են սայլանիվների երկարատև ազդեցության հետևանքով: Ըստ ճանապարհի սալարկի տակ հայտնարերված արտեֆակտների՝ այս սայլուղին կառուցվել է զարգացած երկաթի դարաշրջանից ոչ վաղ: Այն գործել է մինչև երևան-Գյումրի ավտոմայրուղին կառուցելը, որից եետո ամենար է դարծել անցումը ճեղքված ըլրակի վրայով: Ազարակ գյուղի բնակիչ, 1942 թ. ծնված Լ.Ղ. Հովսեփյանի պատմելով, իր երեխա ժամանակ արտերի ցորենը գյուղ են տարել հիշյալ ճանապարհով, որն անցնելիս է եղել այն ժամանակ դեռևս անխաթար ժայռահարթակի վրայով՝ հյուսիսարևմտյան ուղղությամբ և թեք տեղանքով իջել դեպի գյուղ:

ռաջացել է 2,5 մ լայնքով օղակաձև մի տարածք: Կոր հատակագիծ ունեցող չորս պատերից ռադկացած իր այս «նախասենյակով» կամ «միջանցքով», որն օժտված է ուղղահայաց կողասալերով կառուցված, 0,90 մ ռացվածքով մուտքով (Նկ. 21-24) և պահպանված պատերի վերականգնվող ընդհանուր բարձրությամբ (1,80-2,00 մ) երկիորդ ընկերի համալիրն ուշագրավ է իր տեսակո մեջ: «Միջանցքի» հյուսիսարևմտյան հատվածը՝ արևմտյան և հյուսիսային պատերին ներսից կցված երկու վրթաքարի քարարեկորների օգնությամբ, առանձնացված է մնացած տարածքից (Նկ. 25. Ոչված է սլաքով՝ H_{12} քառակուսում): Սա, հավանարար, ոչ մեծ ամբար (մբերապահոց) է եղել: Կցակառուցի օգտակար (ներքին) մակերեսը $\approx 13 \text{ մ}^2$ է¹²: Վերջինիս հյուսիսարևմտյան անկյան մոտ դրսի կողմում, H_{12} քառակուսում ռացվել է վաղորոնգեդարյան մեկ պատ ևս, որը ձգվում է դեպի հարավ-արևմուտք (Նկ. 26)¹³: Սրա հիմքի քարերը դրված են խճավազի վրա, պահպանված բարձրությունը 1 մ է, երկարությունը՝ 4,5 մ: Այս շարվածքը, ակնհայտորեն, վաղորոնգեդարյան է, քանի որ նրան կցված է հիշյալ դարաշրջանին պատկանող մի հատակ. իսկ վերջինիս վրա կուր-արաքսյան անխաթար շերտն է «նստած»: Եռաշար պահպանված այս կառուցվածքը հուսալիորեն թվագրվում է նաև թրձակավե կանացի մի արձանիկի օգնությամբ, որը հայտնաբերվել է կուր-արաքսյան մշակութային շերտում՝ պատի հաստ սվաղին հենված դիրքում (Նկ. 27-28): Կարելի է եզրակացնել, որ հիշյալ պատն արդեն կանգուն է եղել կուրքի գործածությունից դուրս գալուց առաջ: H_{12} քառակուսու հարավարևմտյան անկյունում, ժայռի ցցվածքից արևմուտք, շինարարական առաջին հորիզոնում՝ կավածեփի հատակի վրա, ի հայտ են եկել հույժայտների մնացորդներ (Նկ. 29): Արևմտյան հարթուցիկ են, ոչ մեկն ամրողջական չէ. չթրձած աղյուսներից մեկի պահպանված չափերն են՝ 31x25x16 սմ: Դրանց առկայությունը հուշում է, որ վաղորոնգեդարյան շինությունների վերամասերը գուցե կառուցված լինեն հույժայտներով: N 2 կլոր կացարանի պատերի հիմքերը ևս դրվել են անհավասար մակարդակների վրա, հարմարեցվելով ժայռի թեքությանը և անհարթություններին¹⁴: Պատերի քարերն ամբացվել են ցեխով և երկու կողմից սվաղ-

¹² Ինչպես տեսնում ենք, քննարկվող ընկերի համալիրները չափերով և կառուցվածքային մի շարք տարրերով, ասես, կրկնում են իրար:

¹³ Ի դեպ, այս պատը նույնպես հատակագծում որոշ կորություն ունի:

¹⁴ Ինչպես երևում է, տեղիս շինարարները, կառուցելուց առաջ, հարկ չեն համարել շինությունների հիմքերի համար միասնական մեկ հարթակ պատրաստել: Այս իրողությունը, ըստ երևույթին, ոչ միայն շինարարական հմտությունների պակասի հետևանք է:

վել: Հատակի անհարթությունները լցվել են մանր ու մեծ քարերով և սվաղվել կավացեխով: Կենտրոնական կացարանին արևելյան կողմից կցված է քարե մեկ այլ շարվածք, որը, ըստ երևույթին, տան բակը փողոցից անջատող ցանկապատ է եղել: Այսպիսով, պեղումներով մինչ այժմ հայտնաբերված երկու կլոր կացարանների և դրանց կցակառույցների պատերի միջև կազմավորվել է 1,90-2,20 մ լայնությամբ մի փողոց (նկ. 30-32): Սրա համար ծածկույթ է ծառայել ժայռահարթակի վրայի 0,10-0,12 մ հաստությամբ նստվածքների շերտը, իսկ հիմնաժայռի անհարթությունները վերացվել են տափակ դրված մեծ սալաքարերով: Վերջիններիս արանքները լցվել են մանր քարերով և խեցաբեկորներով, ապա դրանց վրա հող է լցվել և տոփանվել: Փողոցը, հավանաբար, ձգվել է արևմուտքից դեպի արևելք՝ ժայռահարթակի ուղղությամբ: Փողոցի եզրին, N 2 կլոր կացարանի կցակառույցի հարավարևմտյան «անկյան» մոտ, հիմնաժայռը ծածկող խճավազի վրա տափակ դիրքով տեղադրված էր տուֆի մեծ բեկոր, ըստ երևույթին՝ քարե նստարան (նկ. 33, նշված է սլաքով)¹⁵:

I₁₂ քառակուսու հյուսիսարևելյան անկյունում, միջնադարյան հացատանը դրկից կից մոխրաշերտում պահպանվել է կուր-արաքսյան շինության մի եատվածը: Այն բաղկացած է մի քանի քարերից, որոնք շարված են կոր զծով: Չի բացառվում, որ միջնադարյան հացատան տակ պահպանված լինեն վաղբրոնզեդարյան այս կառույցի ուրիշ մնացորդներ ևս: Կան նաև մարդու կառուցողական գործունեության այլ բնույթի հետքեր: Այսպես, H₁₂ քառակուսու սահմաններում բացվել են ժայռահարթակի մեջ, իրարից ≈ 5 մ եեռավորության վրա, փորված 0,14 և 0,17 մ խորությամբ երկու փոսորակներ, որոնք, միգուցե, ծածկը պահող փայտե հենասյուների «բնկալ» են ծառայել: Ենթադրյալ այս ծածկը կարող էր հենված լինել նաև կուր-արաքսյան N 2 կլոր կացարանի նախասրահի մուտքի պատին և դեպի արևմուտք ձգվող համաժամանակյա մյուս պատին¹⁶:

15 Լև նաև պայմանավորված է նվազագույն ջանքերով առավելագույն արդյունք ստանալու ձգտումով, որը բնորոշ է բոլոր դարաշրջանների մարդկանց:

¹⁵ Վերջինիս կից (նկարում՝ ձախից) ուղղաձիգ կանգնեցված քարե կուռքը այդ դիրքում չի գտնվել: Ստորև դեռ կանդորադառնանք քարե կերտվածքների:

¹⁶ Իհարկե, նման ենթադրությունները պե՛տք է հնարավորինս հիմնավոր պատճառներ ունենան, քանի որ, ակնհայտորեն, իրո՞նքա՞յն ոչ բոլոր փորվածքներն են կառուցողական նպատակների ծառայել: Իր տեղում մենք դեռ կանդորադառնանք հուշարձանի տարածքում ժայռակերտ սանդղեի առկայությանը: Համեմատաբար սաղոր փոսիկները, հավանաբար, ունեն պաշտամունքային նշանակություն և այլն:

Ծածկի¹⁷ գոյության մասին է վկայում H_{12} քառակուսում կուր-արաքսյան մոխրաշերտի վերևում առկա 8 սմ հաստությամբ սպիտակավուն ծածկույթը, որն իրենից ներկայացնում է փտած եղեգնի կամ բուսական այլ մնացորդներ: N 1 կլոր կացարանի աստիճանաձև հարթակը, ըստ երևույթին, ձեռակերտ է հատվել է գործիքով: Նույնը կարելի է ասել դռան շենքի տեղում ժայռի անկյունաձև կտրվածքի մասին: Հիմնաժայռն աստիճանաձև փորված է նաև կցակառույցի հատակի տակ: Վերև արդեն իսուք է գնացել սյան իյարսլսի մասին, որն ակնհայտորեն տաշվել է գործիքով: Այսպիսով, Ագարակ I-ի բնակիչները, հավանաբար, ունեցել են քարե և բրոնզե գործիքներ, որոնց օգնությամբ կարողացել են քար մշակել և հատել ոչ կարծր ժայռը¹⁸:

Ագարակի I-ի բնակելի համալիրները՝ քառանկյուն հիշեցնող, իրականում՝ կոր պատեր ունեցող կցակառույցներով կլոր կացարանները, տիպական են շենգավեթյան մշակույթի¹⁹ բնակարանաշինության համար²⁰: Իսկ տների կառուցողական բազմաթիվ մանրամասներն իրենց զուգահեռներն են գտնում, հատկապես, Հայկական բարձրավանդակի նախալեռնային գոտու հուշարձաններում: Այսպես, Գառնիի II տեղամասի շենգավեթյան մշակույթին պատկանող ելոր կացարանների քարաշեն գետնախարսիսիւնների վրա պահպանվել են հում աղյուսով շարված պատերի մնացորդներ: Գետնախարսիսիւնների անմշակ քարերը դրսից և ներսից կավածեփ են: Կավասվաղ են նաև կացարանների հատակները: Կացարաններից մեկի մուտքը, հավանաբար, բացված է եղել հարավարևելյան հատվածում: Տան ներսում՝ պատին կից, շենքի ամրողջ շրջագծով կառուցված է կավե նստարան²¹: Էլառի P₃ փոսորակի կիւր-արաքսյան շինարարական վերին հորիզոնում պեղվել է քարաշար կլոր կացարան, իսկ սրա հատակը հեռացնելուց հետո, ստորին հորիզոնում, բացվել է խոշոր քարերով շարված ուղղաձիգ պատի մի

¹⁷ Նմանատիպ թեթև ու հարթ ծածկերը հայերենի որոշ բարբառներում կոչվում են «չարդախ»:

¹⁸ Ստորև դեռ կանդրադառնանք վաղբրոնզեդարյան տեղաբնակների ժայռամշակության հմտությունների այլ ոլորտներում:

¹⁹ Շենգավեթյան մշակույթն առանձնացրել և առաջինը եետազոտել է հնագետ Ե.Ղ. Բայրուրոյանը 1938 թվականին. աե՛ս Байбуртян, 2011, 14, 19-21, 23:

²⁰ Շենգավեթյան մշակույթի բնակարանաշինության վերաբերյալ տե՛ս Мартиросян, 1964, 23. Խանգաղյան, 1967, 28-30: Джавахиавили, 1973, 101-199. Արեշյան, Ղաֆաղարյան, 1996, 33-67 և այլն:

²¹ Խանգաղյան, 1967, 16: Խանգաղյան, 1969, 8-9, նկ. 2, 3:

հատված²²: Բլրի լանջին Ե. Լալայանի պեղած կլոր կացարանների հիմքերը դրված են եղել անմիջականորեն հիմնաժայռի վրա²³: Ենթադրվում է, որ բնակարանների հատակները կավասվաղ են եղել: Չի բացառվում, որ Էլառի վաղբրոնգեդարյան որոշ կացարաններ ամբողջությամբ քարով շաբված լինեն²⁴: Քաբաշեն կլոր կացարանի մնացորդներ են հայտնաբերվել Վանաձորի մոտ՝ Քոսի ճոթեր հնավայրի ստորին՝ վաղբրոնգեդարյան շերտում: Մոտավորապես 1 մ հաստությամբ և նույնքան բարձրությամբ պահպանված պատը շարված է եղել անմշակ քարերով: Այն դրսից կավածեփ է եղել, իսկ կացարանի հատակը՝ կավասվաղ²⁵: Շենգավթյան մշակույթի անվանադիր հնավայրը՝ համանուն բնակատեղին, Արարատյան դաշտավայրի և նախալեռնային գոտու սահմանային հուշարձաններից է, սակայն իր բնույթով առավել բնորոշ է նախալեռնային բնակավայրերին: Պատահական չէ, որ Ագարակի վաղբրոնգեդարյան կացարանները նմանություն են դրսևորում նաև Շենգավթի բնակելի կառույցներին: Վերջինները ևս բաղկացած են եղել ելոր հատակագծով հիմնական կացարանից և դրան կցված քառանկյուն շինություններից: Արանց պատերը նույնպես քաբաշաբ գետնախառիսի են ունեցել, որի վրա շարվել են հում աղյուսները: Փայտե ձողերից ու եղեգնից պատրաստված ծածկը պահող հենասյունը դրվել է կացարանի կենտրոնում՝ քարե խարսխի վրա: Կլոր տների ներքին պարագծով կառուցվել են նստարաններ: Աուտքերը երբեմն աստիճաններ են ունեցել: Կացարանների հատակը սալարկվել է գետաքարերով կամ ծածկվել հում աղյուսներով, ապա՝ սվաղվել կավաշաղախով: Օջախը, սովորաբար, տեղադրվել է բնակարանի կենտրոնում: Շինություններից մեկում հայտնաբերվել է այլուրի ամբար: Շենգավթի հնագույն կացարանները նույնպես օժտված են եղել ցանկապատված բակերով²⁶: Ագարակ I-ը բնակաբանաշինության առումով իր բազմաթիվ գուգահեռներն ունի նաև Արարատյան դաշտավայրի հուշարձաններում: Ակնհայտ նմանություններ կան Ագարակի և Նորաբացի վաղբրոնգեդարյան բնակարանային համալիրների միջև: Թեև

²² Խանգաղյան, 1979, 19-21:

²³ Լալայան, 1931, 40-42, 50-52: Խանգաղյան, 1979, 15:

²⁴ Արեշյան, Ղաֆադարյան, 1996, 45:

²⁵ Ханзадян, 1963, 152.

²⁶ Байбуртян, 2011, 27-34. Սարդարյան, 1967, 171, 174, 181: Արեշյան, Ղաֆադարյան, 1996, 43: Սարդարյան, 2004, 279:

վերջինում տների պատերը կառուցված են հում աղյուսներով, այնուամենայնիվ, շինություններից մեկը քարե գետնախարիսխ է ունեցել: Նորաբացում պեղվել է շենգավրթյան մշակույթի շինարարական մեկ հորիզոն, որտեղ հայտնաբերված N 3, 5 և 7 կացարանների կից շինությունները կառուցվել են տան պատին արտաքին կողմից զուգահեռ շարված կոր պատերի միջոցով, որոնք ընդգրկել են կլոր կացարանի պարագծի 1/3 կամ 1/4 մասը: Արանց տարածքը ևս, երբեմն, օգտագործվել է կենցաղային նպատակներով: Այստեղ ևս տների ներքին ձևավորման տարրերից են պատերի պարագծով կառուցված նստարանները: N 3 կացարանի ներսում հայտնաբերվել են եղեգնով ու ճյուղերով պատրաստված ծածկը մնացորդները և տանիքը կրող սյան խարիսխը: Կացարաններում, կցակառույցներում և տներից դուրս հայտնաբերվել են տարբեր տիպի օջախներ²⁷: Քառանկյուն կցակառույցներով կլոր կացարանները ընդհանրապես չեն հանդիպում: Տների պատերը կառուցվել են հում աղյուսներով, որոշ շինությունների ներսում հայտնաբերվել են սյան խարիսխներ, ինչպես նաև եղեգնով պատրաստված ու միակողմանի կավածեփ ծածկը հատվածներ: Մոխրաբլուրի շինարարական երրորդ փուլում բնակելի համալիրները «տեղադրվել» են 1,75-2,50 մ լայնությամբ փողոցի երկայնքով²⁸: Ածածանոր հնավայրի պեղումներով ընդհանուր լայն դարավանդների կրուր-արաքսյան շինարարական հորիզոն(ներ)ում բացվել են հում աղյուսաշեն կլոր կացարաններ՝ տնտեսական մշանակության քառանկյուն և ձվածիր կցակառույցներով, Բնակելի «գլխատան» պատերը, երբեմն, դրվել են քարաշար հիմքերի վրա: Կացարանների հատակը գտնվել է հիմնաժայռի վրա, որի անհարթությունները լցվել են քարերով և վերևից սվաղվել կավաշաղախով: Մթերքը, ըստ երևույթին, պահվել է տան պատերին ներսից կից կոր հատակագծով ամբարներում²⁹: Ջրահովտի կրուր-արաքսյան (երրորդ) հորիզոնում բացվել է բնակատեղի փողոցը՝ երկու կողմերում կառուցված կլոր կացարաններով, տնտեսական մշանակություն ունեցող հաբակից քառանկյուն շինություններով և բակերով, որոնք փողոցից առանձնացված են 0,5 մ պահպանված բարձրությամբ ցանկապատերով: Կլոր կացարանների ներսում՝ պատի

²⁷ Արեշյան և այլք, 1981, 26: Արեշյան, Ղաֆադարյան, 1996, 35-36:

²⁸ Արեշյան, 1974, 147: Արեշյան, Ղաֆադարյան, 1996, 39-41:

²⁹ Խանգադյան, 1989, 3-4: Խանգադյան, 1998, 30: Hanzatyan, 1991, fig. 1.

տակ, առկա են կավակերտ նստարաններ: Որոշ շինությունների ներսում անտիղ պահպանվել են կենտրոնական օջախները³⁰: Նախաճավանի I Մոխրաբլուրում ևս հանդիպում են կլոր կացարաններ՝ քառանկյուն կցակառույցներով: Վերջիններս մթերապահոցներ են կամ տնտեսական շինություններ: Շենքերի հիմքերը, հաճախ, շարվել են գլաքարերով: Հում աղյուսներով շարված պատերը երկկողմանի ծեփվել են կավով: Կավասվաղ հողե հատակի մեջ տեղադրվել է կավաթուրժ կիսկարանը: Օածկը հենվել է հենասյան վրա, որի համար խարխուսի է ծառայել մեծ սալաքարը կամ էլ սյան հիմքը իջեցվել է փոսորակի մեջ և ամբացվել քարերով: Այստեղ էլ, պատերին կից, հանդիպում են կավակերտ նստարաններ կամ թարեքներ: Որոշ կացարանների ներքին տրամագիծը 4,5-5,5 մ է, մուտքերի թափվածքը՝ 1 մ³¹: Ուրմիա լճի ավազանում գտնվող Յանըղթեփե հուշարձանի կիր-արաքսյան բնակելի տները թեև կառուցվել են չթրծված աղյուսներով: սակայն նույնպես բաղկացած են ելոր կացարանից և քառանկյուն կցակառույցից: Հիմնական շինության մեջ առկա են նստարաններ, ամբարներ և օջախներ: Տների մեծ մասն ունեցել է ծածկը պահող հենասյուն: Օածկի թեթև է եղել, այն պատրաստվել է շիվերով և կավով սվաղվել: Կացարաններին կից բացվել են ցանկապատված ռակեր³²: Գեոյթեփե K (վաղբրոնզեդարյան) շերտի բնակելի շինությունները, ըստ երևույթին, ունեցել են կիր հատակագիծ: Սրանցից մեկի գետնախարխուռը շարվել է փոքր քարերով: Տների պատերը կառուցվել են հում աղյուսներով: Կացարանների ներսում հայտնաբերվել են օջախներ³³: Կլոր կացարաններ են հայտնաբերվել Խարրերդի դաշտավայրի վաղբրոնզեդարյան հուշարձաններում: Տյուլիթեփե հնավայրում պեղված ելոր շինությունը, ամենայն հավանականությամբ, կացարան է եղել: Սրա հիմքերը դրվել են պղնձեքարեդարյան բնակատեղի շերտի մեջ: Պատերը կառուցվել են հարթ սալաքարերով³⁴: Կլոր կացարան և քառանկյուն կցակառույց է բացվել Նորշունթեփե հնավայրի XXIV շերտում: Հում աղյուսներով շարված կլոր կացարանը չափերով մոտ է Ագարակի N 1 բնակելի շին-

³⁰ Խանգաղյան, 1979, 9: Խանգաղյան, 1985, 11-12: Խանգաղյան, 1991, 11: Խանգաղյան, 2003, 15-17, նկ. 1-3:

³¹ Абыдупнаев, 1982, 80-104.

³² Burney, 1961, 144-145. Burney, 1962, 141.

³³ Burton Brown, 1951, 34-35.

³⁴ Esin, Arsebük, 1974, 154.

նությանը: Նորշունթեփեի տան ծածկը, հավանաբար, նույնպես ունեցել է պահող հենասյուն: Կցակառույցի պատերը դրվել են քարե հիմքերի վրա³⁵: Կոր ուրվագիծ ունեցող կցակառույցներով կլոր կացարաններ են հանդիպում Կուր գետի ձախափնյակիւմ: Իրենց հատակագծերով և չափերով Ագարակի N 2 ընակելի համալիրին մամնություն են դրսևորում հատկապես Խիզանաանթգորա վաղրոնգեդարյան ընակատեղի D մակարդակի կլոր տները: Այստեղ ևս հիմնական կացարաններն «օղակված» են կոր հատակագծով նախասենյակներով կամ «միջանցքներով»: Նախասենյակներից մեկի հիմքերը շարված են գետաքարերով: Պատերն ու հատակները սվաղված են կավով: Կացարաններն օժտված են կենտրոնական օջախով և ծածկը պահող հենասյունով³⁶: Ինչ վերաբերում է Քվացիսելերիի C₁ շերտի N 1 «կլոր» կացարանին, ապա այն կոր հատակագծով վաղրոնգեդարյան միակ կառույցն է այդ հուշարձանում և պաշտամունքային շինություն է համարվում³⁷: Հավելենք, որ Առաջավոր Ասիայի կլոր կացարանները, ընդհանուր առմամբ, համարվում են ընակելի կառույցներ, սակայն չի կարելի ռացանել, որ դրանց թվում եղել են նաև պաշտամունքային շինություններ³⁸:

Ի մի ռերելով վերն ասվածը, կարելի է եզրակացնել, որ Ագարակ I-ի վաղրոնգեդարյան N 1 և 2 ընակելի համալիրները համաժամանակյա են և, ըստ երևույթին, պատկանում են շինարարական մեկ ժամանակաշրջանի, թեև N 1 կլոր կացարանի պատի հյուսիսարևելյան հատվածը կարող է վերանորոգված լինել: Ակնհայտորեն գերիշխում են կոր հատակագծով կառույցները: Դեպի ժայռահարթակ տանող փողոցի ռացված հատվածն առաջացել է տարերայնորեն, կլոր կացարանների և դրանց օժանդակ շինությունների կառուցման արդյունքում: Վերը ըրված ռազմաթիվ գուգահեռները հնարավորություն են տալիս նաև հետևություն անել, որ Ագարակի կուր-արաքսյան ընակելի համալիրի պեղված հատվածի գործառնության ժամանակաշրջանը, ըստ երևույթին, ամփոփվել է մ.թ.ա. III հազարամյակի I կեսի սահմաններում: Հավելենք, որ Ագարակի I տեղամասի շինարարական ստորին հորիզոնում հայտնարերվել են տասնյակ հազարների հասնող արտեֆակտեր,

³⁵ Hauptmann, 1982, 51-52, Taf. 19, 1, 33.

³⁶ Киквидзе, 1972, 29-34, таб. V, XII, 2-XV, 1. Джавахишвили, 1973, 134-140, таб. 15, с.

³⁷ Джавахишвили, Глonti, 1962, 60, таб. IV, XI, XIII, 1. Джавахишвили, 1973, 118, таб. 11, а.

³⁸ Джанаридзе, 1961, 256.

որոնց շարքում ամենամեծաքանակը ինքեղենի հավաքածուն է: Կուր-արաքսյան մոխրաշերտում գերակշռում են մոխրարլուր-շրեշլուրյան տիպի ինքեղենները և սրանց ռեկորները, սակայն գգալի թիվ են կազմում նաև կառնուտ-շենգավիթյան տիպի ինքեղենները: Խեցեղենի այս երկու խմբերը, որոնք կլոր կացարանների ընկերների կենսագործունեության արդյունք են, շերտագործեն տարանջատված չեն իրարից որևէ միջանկյալ հորիզոնով; Այսպիսով; Ագարակի քմնարկվող ընկերի համալիրը, հավանաբար, պատկանում է կուր-արաքսյան մշակույթի մոխրարլուր-շրեշլուրյան³⁹ և կառնուտ-շենգավիթյան ընդհանրական փուլին, որը, վերջին ուսումնասիրությունների արդյունքների համաձայն, թվագրվում է մ.թ.ա. XXIX-XXVI դարերով⁴⁰:

³⁸ Շրեշ թլուրի տիպի ընկերի համալիրները վաղ որոնքի դարաշրջանին է վերագրել դեռևս Ե.Յ. Բայրուրյանը. տե՛ս Байбуртян, 1938, 255:

⁴⁰ Бадалян, Смит, 2008, 53-54. Կուր-արաքսյան մշակույթի փուլարաժանումների վերաբերյալ արտահայտվել են տարբեր տեսակետներ. տե՛ս Кушнарєва, Чубинишвили, 1970, 61-62. Кавтарадзе, 1983, 82-129. Sagona, 1984, 125-127, таб. 2. Кушнарєва, 1993, 89-90. Ավետիսյան և այլք, 1996, 10: Smith et al, 2004, 3. Avetisyan, Bobokhyan, 2008, 182 և այլն:

Մետաղագործությունը

Պեղումներով հայտնաբերված մետաղյա առարկաներից ուշադրության է արժանի ձուլածոն (FG-020486)⁴¹, որը պատրաստված է անագային բրոնզից: Այն անկանոն պրիզմայածև, 1,8x0,9x0,7 սմ առավելագույն չափերով, կանաչ մակերևութով փոքրիկ ձուլակտոր է, $\approx 6,2$ գ - քաշով: Բրոնզե ձուլի մեջ անագի պարունակությունը 3% է: Գտնվել է I₁₁ քառակուսում, N 1 կլոր կացարանի կցակառույցի ներսում, հյուսիսային պատի մոտ, կուր-արաքսյան շերտում, քարե գործիքների և խեցատների միջավայրում:

Հայտնաբերվել են նաև «մկնդեղային բրոնզից» պատրաստված իրեր: Այս հավաքածուում առանձնանում է դանակի մետաղյա շեղբը (FG-020485), որը գտնվել է I₁₁ քառակուսում, N 1 կլոր կացարանի կցակառույցի հյուսիսային պատի դրսի կողմում (Նկ. 34, նշված է սլաքով)՝ ընկավայրի փողոցում, 1,70 մ խորությունում, կուր-արաքսյան անիսթար շերտում, հիմնաժայռը ծածկող մետաղաքաշերտի վրայից: Շեղբի պահպանված երկարությունը 7,75 սմ է, լայնությունը՝ 1,8 սմ, հաստությունը⁴² < 0,2 սմ, քաշը՝ 6 գրամ (աղ. I,1): Սայրն այնքան բարակ է, ասես ածելի լինի, դրա մի մասը ծավված է, որոշ այլ հատվածներ՝ ծայրը ներառյալ՝ փոքր-ինչ կտրված: Առանց պռչուկո ման դանակ հայտնաբերվել է Էլառի N 10 դամբարանում⁴³: Այն համարվում է աշխատանքի գործիք⁴⁴: Սրա զուգահեռները կաղելի է փնտրել նաև վաղմայկոպյան տիպի դանակների շարքում⁴⁵:

I₁₁-ի հարավարևմտյան անկյունում, քառակուսու հարավային կտրվածքին կոց, կուր-արաքսյան մշակույթին բնորոշ մոխրաշերտում՝ 2,50 մ խորությունում գտնվել է «մկնդեղային բրոնզե» լարի կտոր (FG-020487): Սրա պահպանված երկարությունը 1,9 սմ է, տրամագիծը՝ 0,5-0,6 սմ, քաշը՝ 0,8 գ: Ինչպես տեսանք, հիշյալ բոլոր զտածոներն էլ ի հայտ են եկել կամ N 1 ելոր կացարանի կցակառույցի ներսում, կամ՝

⁴¹ Փակագծում նշված է նմուշի եամարը՝ մետաղյա առարկաների քիմիական վերլուծության արդյունքների աղյուսակում:

⁴² Բերված են առավելագույն չափերը:

⁴³ Ханзаян, 1964, 95, 99, рис. 3,1. Խանզայան, 1979, 51, նկ. 71, աղ. VIII,9:

⁴⁴ Археология, 1994, 41.

⁴⁵ Мунчаев, 1975, 224, рис. 41,2,3.

վերջինիս մերձակայքում: Ուստի, սիլալ չր լինի ենթադրել, որ այս երեք արտեֆակտերն էլ, հավանաբար, կապված են N 1 կլոր կացարանի բնակիչների կենսագործունեության հետ: Ստորև ներկայացնում ենք մետաղյա առարկաների քիմիական ռադադիոլոգիայի վերլուծության արդյունքները⁴⁶.

Նմուշը	Cu	Fe	Co	Ni	Zn	Pb	Bi	Sn	As	Sb	Se	Te	Au	Ag
FG-020485	97,24	<500	<50	<100	<1000	200	<50	<50	26200	250	<50	<80	<100	430
FG-020486	96,79	<500	140	470	<1000	5200	<50	30000	870	180	<50	<80	<100	390
FG-020487	98,75	<500	<50	180	<1000	200	<50	<50	10400	400	<50	180	200	360

Մյուս բրոնզե իրերը, բացի մեկից, հայտնաբերվել են H₁₂ քառակուսու պեդումներով: Դրանց թվում է ոլորված գլխիկով բրոնզե կախիկը, որը երկուսուսուսական անկանոն սեղանի ձև ունի (աղ. 1,2): Մեծ հիմքի երկարությունը 2,25 սմ է, փոքր սղունքինը՝ 1,7 սմ, քաշը (չմաքրված վիճակում) 2,15 գ է: Այն գտնվել է N 2 կլոր կացարանի կցակառույցի արևմտյան պատից 0,5 մ դեպի արևմուտք և H₁₂ քառակուսու հարավային կտրվածքից 2,15 մ դեպի հյուսիս, 1,42 մ խորությունում, կուր-արաքսյան անխառն շերտում: Հիշյալ կախիկն իր ձևով հիշեցնում է այսբևկավեսայան տաշուրագածն կացիների տիպերից մեկը, որը նույնպես օժտված է ոլորված գլխիկով⁴⁷:

Հաջորդ գտածոն թերևս ամենաուշագրավն է դիտարկվող առարկաների շարքում: Այն բրոնզե կոսախոդովակածն դուր է, որը փոքրիկ գոգաթի է հիշեցնում՝ առանց կոթի (աղ. 1,3): Աբա մակերևույթի կանաչ փառի տակ սկզբնապես նշմարվում էր պղնձագույնը: Մաքրված վիճակում դուրի երկարությունը 4,75 սմ է, տրամագիծը՝ 1,5 սմ, պատի հաստությունը 0,3 սմ է, քաշը՝ 28,1 գ: Պայտածն սուր սայրն աշխատանքի ընթացքում որոշ չափով մաշվել է: Բրոնզե այս գործիքը, ըստ երևույթին, կիրառվել է փայտամշակության մեջ⁴⁸: Դուրը հայտնաբերվել է H₁₂ քառակուսու հարավային կտրվածքից 0,75 մ դեպի հյուսիս և N 2 կլոր կացարանի կցակառույցի արևմտյան պատից 2,80 մ դեպի արևմուտք, 1,56 մ խորությունում, կուր-արաքսյան անխաթար շերտում: Հիշյալ մշակույթի հուշարձաններում նախկինում ևս գտնվել են բրոնզե դու-

⁴⁶ Ունեցանյան ճառագայթների ազդեցությամբ լուսածորման վերլուծությունները կատարել է երկրաբանական գիտությունների թեկնածու Խ. Մելիքսեյանը՝ Ֆրայդերիկ Արխենմետրիայր ինստիտուտում (Գերմանիա). տե՛ս Meliksetian et al., 2003, 597-599; Meliksetyan, Pernicka, 2010, 42-46.

⁴⁷ Мунчаев, 1975, 394-395, рис. 81,а.

⁴⁸ Այս կարծիքը հայտնել է հնագետ Ա.Յ. Գևորգյանը:

րներ⁴⁹: Մեր օրինակի տարրերվում է արդեն հայտնի նմուշներից իր կիսալուսնաձև վերին (հարվածային) հատվածով, որը մյուսների մոտ քառանկյան տեսք ունի, մասամբ կլորացող անկյուններով: Որոշ նմանություն է դրսևորվում Ագարակի այս բրոնզե գործիքի ու ռեդենյան և մայկոպյան մշակույթների դամբարանաբուրներում գտնված դուրերի միջև⁵⁰, իսկ Վանաձորի (թռեղքյան մշակույթ) և Պրիվոլնոյե ընակավայրի (միջինկուրանյան խումբ) դամբարանաբուրներից հայտնի դուրերն ավելի կատարելագործված են⁵¹:

H₁₂ քառակուսու հարավային եզրագծից 3 մ հյուսիս և արևմտյան եզրագծից 1,5 մ արևելք, 0,38 մ խորությունում, կուր-արաքսյան մոխրաշերտին հաջորդող խառը շերտում (գլաքաղեր, հող, մանր քարեր), որտեղ խիստ զերակշռում են վաղորոնգեղարյան գտածոները, հայտնարերվեց բրոնզե ռիգ (աղ. I,4): Այն թերի է (րացակայում է վերին հատվածը), քառանկյան (լայնությունը՝ 0,5 սմ), սրվող ծայրով, պահպանված երկարությունը՝ 3,68 սմ, քաշը՝ 2 գրամ: Գրեթե նույնական բրոնզե մեկ այլ ռիգ՝ 5 սմ երկարությամբ, հայտնարերվել է M₉ քառակուսու պեղումներով (աղ. I,5): Տիպարանական գուգահեռները կասկած չեն թողնում, որ հիշյալ ռիգերը վաղորոնգեղարյան արտեֆակտեր են: Համանման քառանկյան, 5-6 սմ երկարությամբ բրոնզե գործիքներ հայտնի են ինչպես կուր-արաքսյան մշակութային ընդհանրության գրեթե ողջ տարածքում⁵², այնպես էլ մայկոպյան մշակույթի հնագիտական համալիրներում⁵³: Ավելացնենք, որ վերը հիշատակված բոլոր առաջկանները, րացառությամբ M₉ քառակուսու գտածոյի, հայտնարերվել են N 2 կլոր կացարանի կցակառույցի շրջակայքից, ասես հուշելով, թե որտեղ պետք է փնտրել դրանց պահպանման և գործածման նախնական վայրը:

Բացի հիշյալ մետաղյա առարկաներից, կարելի է հավաստի համարել քմնարկվող կուր-արաքսյան ընակատեղում նաև բրոնզե կացինների գործածությունը: Պեղումներով հայտնարերվել են թծակավե կաղապարների ռեկորդներ J₁₁ քառակուսուց, որոնց մեջ, ըստ երևույթին, փոքր կացիններ են ծուլվել: Արանց մեծք դեռ կանդրադառնանք, այժմ նշենք միայն, որ չնայած խառը շերտերում ի հայտ գալուն, դրանք

⁴⁹ Джапаридзе, 1976, 132, рис. 59,3,6,10.

⁵⁰ Гобеджишвили, 1980, 25-26, 75, 77, рис. 7,2, 30,1. Мунчаев, 1975, 246, 49,6.

⁵¹ Դևեջյան, 2006, 260, նկ. 140,1: Иессен, 1950, 172, таб. III,2.

⁵² Куфтин, 1944, 116-117, рис. 70,11,12. Ханзаян, 1969, 160. Хачатрян, 1975, 57-58,

рис. 15. Археология, 1994, 41. Խանգաղյան, 1969, 35-36, աղ. I,3 և այլն:

⁵³ Мунчаев, 1975, 218, 220, 258-259, 292-293, рис. 38,6, 57,11, 67,3.

կուր-արաքսյան մշակույթի արտեֆակտներ են: Հայաստանի վաղբրոնզեդարյան հուշարձաններում նախկինում ևս հայտնաբերվել են կացնի կաղապարներ, իսկ միայն Ջրաշենի հավաքածոն (մերձերևանյան «զանձ») ընդգրկում է բրոնզե 19 կացիներ⁵⁴:

Ազարակի հուշարձանախմբում վաղբրոնզեդարյան մետաղածուլության վերաբերյալ կան և այլ կարգի վկայություններ: I₁₁ քառակուսու հարավեքստրեմի հատվածի ստորին հորիզոնում՝ կուր-արաքսյան մոխրաշերտում, գտնվել են բրոնզի փոքրիկ ձուլյեր (գուցե՝ պղնձի փշրված հանքաքար): Պղնձի հանքաքարի մանր մնացորդներ են գտնվել L₁₀ քառակուսում: H₁₁ քառակուսու հարավարևմտյան անկյունում, 1,10 մ խորությունում գտնվել է ոչ մեծ խեցանոթի (հավանաբար՝ թասի) հատակ, որի մեջ պահպանվել էր բրոնզե ձուլվածքի մնացորդը, իսկ L₁₀-ի պեղումներով հայտնաբերվել է կթղա⁵⁵: Հնարավոր է, որ մետաղամշակության մեջ գործածված լինեն նաև H₁₀-ում հայտնաբերված սրվաղ ծայրով քարե գլանաձև մուրճ-կացնիկը և J₁₁ քառակուսում գտնված քարե «հալամանները», որոնց մասին մանրամասն խոսք կզնա ստորև: Թեև հուշարձանախմբում առայժմ հնոցներ կան ձուլման վառարաններ չեն հայտնաբերվել, սակայն ասվածն արդեն հիմք է տալիս եզրակացնելու, որ բրոնզե իրերը, ակնհայտորեն, պատրաստվել են տեղում: Վաղբրոնզեդարյան Ազարակում մետաղամշակությունը, մասնավորապես՝ բրոնզի ձուլման գործը, եղել է պատշաճ մակարդակի վրա: Ինչպես վերոն արդեն նշվել է, Ազարակի վաղբրոնզեդարյան բնակիչները, հավանաբար, ունեցել են նաև բրոնզե այնպիսի գործիքները, որոնցով կարողացել են հատել ոչ կարծր հիմնածայրը:

⁵⁴ Мартиросян, Мнацаканян, 1973, 122.

⁵⁵ Մետաղի մնացորդներով թերի կթղա է հայտնաբերվել Նախճավանի Մոխրաբլուրում, 11 մ խորությունում (Абидулаев, 1982, 123): Ջրահովտի վաղբրոնզեդարյան երրորդ շինարարական հորիզոնում հայտնաբերվել են կթղաներ, որոնցից մեկի մեջ պահպանված է եղել մետաղի նստվածքը. տե՛ս Խանզադյան, 1991, 12: Մետաղի նստվածքով կավամաններ հայտնաբերվել են Գառնիում (Խանզադյան, 1969, 9, 39-41, նկ. 30-32), Հառիճում (Хачатрян, 1975, 58): Նման իրողություններ հանդիպում են կուր-արաքսյան մշակութային ընդհանրության այլ տարածաշրջաններում, մասնավորապես՝ հյուսիսարևելյան Կովկասում (Гаджиев, 1991, 191):

Քարանշակությունը

Չնայած կուր-արաքսյան մետաղագործության վերարերյալ ռազմաթիվ փաստերի առկայությանը, Ազարակում դեռևս լայնորեն գործածական էր քարե գույքը: Քարից պատրաստվում էին աշխատանքի գործիքներ, զենքեր, զարդեր, կենցաղային և պաշտամունքային առարկաներ: Այդ պատճառով խիստ մեծաթիվ է պեղումներով հայտնաբերված կուր-արաքսյան քարե իրերի հավաքածուն: Բավական է ասել, որ իր քանակով այն զրադեցնում է երկրորդ տեղը՝ խեցեղենից հետո: Դատարօրինակ չպիտի թվա, եթե հաշվի առնենք հուշարձանախմբի տեղադրությունը Արագած լեռան փեշին՝ նախալեռնային գոտում, որտեղ տեղանքի ընտանքը զգալիորեն պայմանավորված է հրարխային ժագումով և որն աչքի է ընկնում տարատեսակ քարերի առատությամբ: Հիշյալ հարցում, հավանաբար, իր ժանրակչիո դերն ունի նաև Հայկական լեռնաշխարհում քարանշակության հզոր ավանդույթը, որի ակունքները հին քարեդարում են, իսկ ուշ արձագանքները՝ մերօրյա Հայաստանում:

Աշխատանքի քարե գործիքները, նախ և առաջ, լայնորեն գործածվել են գյուղատնտեսության մեջ, ինչպես նաև՝ մետաղագործության, խեցեգործության և այլ ընագավառներում: Դրանք ունեցել են տարրեր կիրառական նշանակություն և խիստ ռազմագան են իրենց տեսակներով:

ա) Ազարակում հայտնաբերված աշխատանքի վաղորոնգեդարյան գործիքների շարքում ուշագրավ խումբ են կազմում մանգաղների ներդիրները: Արանք մեծ մասամբ պատրաստված են կայծքարից, սակայն հանդիպում են նաև վանակատե ներդիրներ: Մեկ ներդիր պատրաստված է դացիտից: Կուր-արաքսյան պահանգավոր մանգաղները կազմված էին նման առանձին ռադադրիչներից, որոնք ձյութով ամրացվում էին ոսկոե կամ փայտե հիմքին: Պահանգի մրջին մասում ամրացվող ներդիրները մոտավորապես ուղղանկյուն են (աղ. II,1,3), իսկ եզրայինների կարճ կողերից մեկը հատված է որոշ թեքությամբ (աղ. II,2,4,5): Որոշ ներդիրներ կոտրվել են, հավանաբար՝ աշխատանքի ընթացքում (աղ. II,6): Աշխատող սայրերը պարտադիր երկկողմանի հաղդարված են, որի արդյունքում սրանք օժտված են սղոցածև ատամներով: Ատամնաքառթերը իսիստ ներդաշնակ են մշակված: Դրանք, երբեմն, աշխատելիս ջարդվել են: Բոլոր օրինակները հատույթում ձգված շե-

ղանկյուն են հիշեցնում, քանի որ վերին եզրերը նույնպես «հանված» են: Որոշ մնուշների վրա պահպանվել են ձուլթի հետքերը: Մանգաղի ամենամեծ ներդիրը՝ 7,7x3,3x1,2 սմ առավելագույն չափերով, գտնվել է I₁₁ քառակուսուց, բնականորեն փողոցի հատվածից, N 1 կլոր կացարանի կցակառույցի հյուսիսարևմտյան անկյան մոտից: Նույն շինության հարավարևմտյան անկյունում է հայտնաբերվել ամենափոքր (կայծքարե) ներդիրը՝ 3,30x2,10x0,85 սմ չափերով: I₁₁ քառակուսում գտնված ներդիրներից մեկի պատրաստված է ապակեմման սև դացիտից և ունի 4,6 սմ երկարություն և 2,5 սմ լայնություն (աղ. II,₁): N₄ քառակուսուց հայտնաբերված ներդիրը պատրաստված է բաց դարչնագույն կայծքարից՝ 6,15 սմ երկարությամբ և 3,8 սմ լայնությամբ (աղ. II,₄)⁵⁶, իսկ L₉-ում գտնվածը՝ 3,40x1,85 սմ չափերով կապտականաչ քարից (աղ. II,₂): L₉ քառակուսու պեղումներով ի հայտ են եկել մանգաղի և երկու կայծքարե ներդիրներ: Բաղադրյալ մանգաղների ներդիրներն ամենուրեք հանդիպում են հնագույն բնակատեղերի կուր-արաքսյան շերտերում⁵⁷: Դրանց հետ միասին երբեմն գործածվում էին նաև բրոնզե մանգաղներ⁵⁸, որոնցից Ագաբակում դեռևս չեն գտնվել:

բ) «Չնձի դանակներ» անունն են ստացել վանակատե կամ կայծքարե երկար, նեղ շեղքերը⁵⁹: Վերջինները և մանգաղի ներդիրները հնձի ամենատարածված գործիքներն են վաղ բրոնզի դարաշրջանում⁶⁰: Այդպիսի շեղքեր հայտնի են նաև Ագաբակից: I₁₁ քառակուսում, կուր-արաքսյան մոխրաշերտում, բրոնզե դանակի կողքին գտնվել է վանակատե երկարուկ շեղք: Մյուս երկուսը նույնպես պատրաստված են վանակատից և գտնվել են H₁₂ քառակուսու պեղումներով, N 2 կլոր կացարանի կցակառույցի մերձակայքում, կուր արաքսյան անիաթար շերտում: Շեղքերից մեկո սայրերը թեք կողմերից սղոցածև հարդարված են: Դրանց միջին մասը երկարությամբ նիստավորված է, որի շնորհիվ եռանիստ պրիզմայածև պատրաստուկներից քառանիստ գործիքներ են ստացվել: Երկուսն էլ թեքի են, մեկի սրածայր է (աղ. II,₇), մյուսի ծայրը կոտրված է (աղ. II,₈): Առաջինի պահպանված չափերն են՝ երկա-

⁵⁶ Մեր շարադրանքում քերված են ներդիրի առավելագույն չափերը: Տես նաև Badalyan, Avetisyan, 2007, 26, 29, pl. III,₅.

⁵⁷ Բայրուրդյան, 1938, 200, նկ. 28, 29. Байбуртян, 2011, 43-44, таб. VII. Джавахишвили, Глonti, 1962, 61, таб. IV,₃₀₀₋₃₀₇. Խանգաղյան, 1967, 35: Աարդարյան, 1967, 172, 174, աղ. XLVII,₁₋₄: Badalyan et al, 2008, 53-54, fig. 7 և այլն:

⁵⁸ Խանգաղյան, 1967, 36: Խանգաղյան և այլք, 1973, 14:

⁵⁹ Семенов, 1954, 357-363.

⁶⁰ Хачатрян, 1975, 44-47.

րությունը՝ 2,9 սմ, լայնությունը՝ 1,67 սմ, երկիրորդի չափերը՝ 3,6 սմ և 1,63 սմ: Նման տիպի շեղբեր հայտնաբերվել են նաև I₁₂, O₈ և N₇ (ադ. II, 9) քառակուսիներում: Համարվում է, որ համեմատաբար բարձր արտադրողականության կարելի է հասնել, աշխատելով 5-5,5 սմ երկարությամբ բանող սայր ունեցող «հնձի դանակներով»: «Հնձի դանակները» լայնորեն տարածված էին Հայկական լեռնաշխարհի վաղբրոնզեդարյան բնակատեղերում: «Հնձի դանակներ» և մանգաղի ներդիրներ հայտնի են դեռևս նատուֆյան մշակույթում, երիքովի նախախեցեգործական «ա» և «բ» փուլերում, Մերձավոր Արևելքի նորքարեդարյան և պղնձեքարեդարյան այլ մշակույթներում⁶¹: Վաղ բրոնզի դարաշրջանում դրանք շարունակվում էին գործածվել հյուսիսարևելյան Կովկասում⁶²:

գ) Աղորիքներն օգտագործվում էին հացահատիկն աղալու համար: Դրանք բաղկացած էին երկու մասից՝ ստորին և վերին: Հիմնաքարերը (ստորինները) չափերով մեծ են և զանգվածեղ, տրորիչները (վերինները) նեղ են և ավելի երկար, քան հիմնաքարի՝ լայնությունն է: Ազարակում հայտնաբերված աղորիքները պատրաստված են բազալտ-անդեզիտային ապարներից և տափակ գլաքարերից (միայն՝ ստորինները): Դրանք ունեն փոքր-ինչ գոգավոր կամ հարթ ընկած մակերևույթ, ստորին քարերը ձվածիր են կամ ուղղանկյուն՝ կլորացող անկյուններով: Նման մի աղորիք գտնվել է H₁₁ քառակուսում՝ N 2 կլոր կացարանի ցանկապատված բակի տարածքում, շրջված վիճակում (նկ. 35): Տրորիչները, սովորաբար, մակույկաձև են, սրանցից մեկը եզրից ցած ողջ պարագծով ակոս է փորված: Մեկ այլ տրորիչ օժտված է կախված (ցած թեքված) եզրերով, որը նպաստավոր է ինչպես այն աշխատեցնելու, այնպես էլ հիմնաքարի վրա կիպ հարմարեցնելու տեսանկյունից: Կոտրված աղորիքները հաճախ են հանդիպում փլվածքի քարերի մեջ և ուշ շրջանի պատերի շարվածքում: Աղորիքներն ամենուրեք հանդիպում են կուր-արաքսյան բնակատեղերում:

դ) Առանձին խումբ են կազմում հուշարձանում ի հայտ եկած սանդերն ու սանդկոթերը: Սանդերը, որպես կանոն, կիսազնդած են, պատրաստված են բազալտից և անդեզիտից: Դրանցից մեկի համար, ըստ երևույթին, հումք է հանդիսացել կոտրված աղորիքը: Մեկ այլ սանդ գտնվել է I₁₂ քառակուսում, շրջված վիճակում: Չափերով մեծերի կողքին, երբեմն հանդիպում են փոքրերը (հավանազներ), կան խոր և

⁶¹ Mellaart, 1965, 23, 37, 40 etc. Семенов, 1954, 358, 360, 364-367.

⁶² Гаджиев, 1991, 181-183, рис. 60.

սաղր սանդեր: Որպես սանդկոթեր գործածվել են երկարուկ կլոր գետաքարերը, որոնք վերին հատվածում ավելի նեղ են: Վարսանդների ստորին մասերը շատ րանեցվելու պատճառով մաշվել են, որոշ դեպքերում՝ կոտրվել: Արանց թիվը կուր-արաքսյան հորիզոններում զգալիորեն ավելին է շարժական սանդերի քանակից: Վերը հպանցիկ ակնարկվել է Ագարակում ժայռակերտ սանդերի առկայության հավանական լինելը: Այս ենթադրության հիմքում ընկած է ոչ միայն սանդկոթերի քանակական գերակշռության իրողությունը: Դրա կողմնակի վեայությունն է նաև այն փաստը, որ հիմնաժայռի մեջ առկա մի շարք փոսորակներ ունեն մեջտեղում լայնացող կոր պատեր և գոգավոր հատակներ: Փոսորակների ձվածկությունը կարող էր առաջանալ սանդկոթերի տևական ազդեցության արդյունքում: Վաղրոնգեղարյան հուշարձաններում զանգվածարար հայտնաբերվում են թե՛ սանդեր, թե՛ սանդկոթեր:

ե) Քիչ չեն տրորիչները և թակերը, այդ թվում՝ կոտրված: Դրանք ձվածև, գնդածև կամ կոսագնդածև քարեր են, մաշվածության որոշակի հետքերով⁶³: Երբեմն, դրանց մեկ կամ երկու (հակադիր) կողմում սաղր փոսիկներ են փորված, ըստ երևույթին, ռոմվածքի հարմարության նպատակով: Երկկողմ փոսիկներով այդպիսի քարե իրեր են գտնվել I₁₂ քառակուսու հյուսիսային հատվածի կուր-արաքսյան և վերին (խառը) շերտերից:

զ) Ստվար խումր են կազմում քարե գործիքները, որոնք կարող էին ունենալ տարատեսակ գործառնություններ: Դրանց թվում կան գետաքարեր, որոնք ձևով թավականին նման են րիչների⁶⁴, գլաքարեր, որ կարող էին գործածված լինել տնտեսության մեջ: I₁₁ և I₁₂ քառակուսիների սահմանագոտում, կուր-արաքսյան հատակի վրայից հայտնաբերվել է մեծ սրոցաքար: Ոչ մեծ, երկարուկ, հատույթում ձվածիր, կոտրված գետաքարը, որի մեկ կողմը քրչ տափակած է, նույնպես կարող է սրոցաքար եղած լինել⁶⁵: Նման մի սրոցաքար գտնվել է Մեծամորի կուր-արաքսյան շերտում⁶⁶, մեկ ուրիշը՝ Բամուտում (մայկոայան

⁶³ Ըստ Ե.Յ. Բայրուրոյանի, տրորիչ են ծառայել նաև կարճ սանդկոթերը (Բայբուրոյան, 1938, 199):

⁶⁴ Թեև սրանց վրա ակոսներ չեն արված՝ քարե գործիքը փայտե կոթին ամրացնելու համար, այնուամենայնիվ, սայրերը ճեղքված կամ կոտրված են, թվում է՝ աշխատեցնելու եետևանքով:

⁶⁵ Գտնվել է I₁₂ քառակուսում, քարերի փլվածքի միջից՝ խառը շերտում: Սրոցաքարերի առկայությունը տարօրինակ չափսի թվա, եթե հաշվի առնենք սրվելու կարիք ունեցող բազմաթիվ գործիքների առկայությունը փաղբրոնգեղարյան եավաքածոներում:

⁶⁶ Խանգաղյան և այլք, 1973, 15, նկ. 7,1:

մշակույթ)⁶⁷: Ավելացնենք, որ բնակատեղի կուր-արաքսյան հորիզոններում հայտնաբերված վանակատե միջուկների, բեկորների, ժլեփների զանգվածային առկայությունը նույնպես վկայում է հրաբխային ապակուց պատրաստված գործիքների մեծաքանակ լինելը:

Այսպիսով, մեր ուսումնասիրությունների արդյունքում պարզվում է, որ պեղումներով հայտնաբերված քարե գործիքների մեծ մասը կիրառվել է բուն երկրագործության մեջ և դրանից ստացված մթերքների վերամշակման ասպարեզում: Ուստի, կարելի է եզրակացնել, որ Ագարակի շենգավիթյան բնակավայրի տնտեսության մեջ առաջատար դեր էր խաղում երկրագործությունը: Սակայն քիչ չեն նաև քարե այն առարկաները, որոնք կարող էին գործածված լինել անասնապահական մթերքների վերամշակման ժամանակ:

ա) Դրանք, նախ և առաջ, հնավայրի պեղումներով հայտնաբերված վանակատե և կայծքարե գործիքներն են, որոնք կարող էին կիրառվել անասունները (նաև ռսի կենդանիները) մորթելու, քերթելու, միսը կտրատելու համար: Դրանք թվում կան քերիչներ, երկրորդական հարդարումով ժլեփներ, «դանակներ», «ծակող կամ ելուստավոր գործիքներ»:

բ) Կան միջանցիկ անցքով օժտված բազմաթիվ քարեր, որոնք կարող էին օգտագործված լինել մանածագործական հաստոցներում՝ որպես ծանրոցներ (աղ. III,1-4): Հիմնականում, դրանք տորածն են, փուխր (չեչաքար, ծակոտկեն տուֆ) քարերից պատրաստված: Աի դեպքում ծանրոցը եռանկյուն պրիզմայաձև է, վերևում արված անցքով (աղ. III,1), մեկ այլ նմուշ գլյանաձև է, որի անցքն անցնում է վերջինիս բարձրությամբ⁶⁸: Տորածն ծանրոցների (աղ. III,3) տրամագիծը, սովորաբար, 5-6 սմ է, հաստությունը՝ 2-4 սմ, անցքերն ունեն 1,2-2,5 սմ տրամագիծ և բացված են իրի մոտավոր կենտրոնում՝ երկկողմ շաղափումով (մակերևույթի մոտ լայն են, մեջտեղում՝ նեղ): Ագարակում հանդիպում են ինչպես ամբողջական, այնպես էլ թերի օրինակներ: Սրանց զուգահեռները հայտնի են Շենգավիթի⁶⁹, Գառնիի⁷⁰, Քոսի ճոթերի⁷¹, Հառի-

⁶⁷ Սայկոսյան մշակույթի հուշարձաններից հայտնի են նաև այլ տրպր սրոցաքարեր. տե՛ս Мунчаев, 1975, 218, 220, 292-293, рис. 38,1, 67,5.

⁶⁸ Կարծիք է հայտնվել, որ պրիզմայաձև և գլանաձև ծանրոցները կարող էին գործածվել ոչ միայն ջուլիակի հաստոցի թելերը ձգելու համար, այլև՝ ձկնորսական ուռկանի համակարգում, որպես սուզաքարեր. տե՛ս Խանգաղյան, 1969, 30-31, նկ. 21, 22: Աուզաքարեր կարող էին ծառայել նաև ծանր ապարներից պատրաստված տորածն ծանրոցները:

⁶⁹ Սարդարյան, 1967, 147, աղ. XLIV:

⁷⁰ Խանգաղյան, 1969, աղ. XXIV:

⁷¹ Ханзадян, 1963, 155, рис. 4,3.

ճից⁷²: Նախճավանի Մոխրաբլուրում գտնվել են սրանց կավե օրինակները⁷³: Ենթադրվում է, որ գործվածքներ հյուսելու համար կիրառվել են բրոյա թելեր:

զ) Բրդից թել մանելուն էին ծառայում իլիկները, որոնց քարե գլխիկները նույնպես հայտնաբերվել են պեղումներով: Իլիկներից մեկը գտնվել է H_{12} քառակուսում, 1,15 մ խորությունում, կուր-արաքսյան անխառն շերտից: Սա պատրաստված է բաց կանաչա-մոխրագույն քարից, անվաձև է՝ 2,5 սմ տրամագծով և 0,6 սմ հաստությամբ: Անցքի տրամագիծը մակերևույթի վրա 0,7 սմ է, այն մեջտեղում նեղանում է, քանի որ բացված է երկկողմ շաղափումով (աղ. IV,₁): Մեկ այլ գլխիկ հայտնաբերվել է I_{12} քառակուսում, վաղբրոնզեդարյան անխաթար մոխրաշերտում, 3,50 մ խորությունում: Պատրաստված է դեղին քարից, տափօղակո ձև ունի, տրամագիծը 2,6 սմ է, հաստությունը՝ 0,7 սմ, երկկողմ շաղափումով րացված անցքի տրամագիծը 0,5 սմ է (աղ. IV,₂): Մյուս՝ բաց դեղնավուն իլիկն ի հայտ է եկել i_{12} քառակուսում, 1,10 մ խորությունում, լիցքի հողերից: Սա մոտավորապես տափօղակաձև է, մեկ կողմը՝ գոգավոր, տրամագիծը 1,9 սմ է, անցքի տրամագիծը՝ 0,3 սմ: Իլիկի սեզմենտաձև քարե գլուխ է գտնվել էլառի N 8 դամբարանում⁷⁴: Քարից պատրաստված իլիկների գլուխներ են հայտնաբերվել Շենգավթում, Քեթիում, Ջրառատի դամբարանաբլուրում⁷⁵: Հետաքրքիր է, որ Գառնիից հայտնի իլիկի քարե գլուխներից մեկը կոնաձև է, իսկ կավաթուրծ նման օրինակներից մեկը ներճկված է բուրդ կողմերից⁷⁶:

Հնարավոր է, որ նկաբագրվող գործիքների շարքում լինեն այնպիսիները, որոնք կապված են մետաղագործության հետ: Դրանցից է մոխրագույն րազալտից պատրաստված մուրճ-կացնիկը, որը կուր-արաքսյան քարե գործիքի դասական նմուշ է: Միջին մասում այն գլանաձև է, օժտված է երկկողմ փոսիկներով: Բանող եզրերը նույնպես երկուսն են, մեկը՝ երկթեք սրվող ծայրով, մյուսը՝ կլոր: Դրանք հարմար էին ոչ միայն մետաղ մշակելու, այլև՝ հանքաքար մանրելու համար: H_{10} քառակուսում գտնված 7,8 սմ երկարությամբ և 4,5 սմ տրամագծով այս գործիքի գուգահեռները հայտնի են Շենգավթից⁷⁷, Գնիշիկից⁷⁸, Այ-

⁷² Хачатрян, 1975, 82, рис. 43.

⁷³ Абибуллаев, 1982, 139, 304, таб. XXIV,₁₃.

⁷⁴ Սա որակված է որպես «կոճակ-ուլունք». տե՛ս Խանգաղյան, 1979, 39, աղ. VIII,₆:

⁷⁵ Խանգաղյան, 1967, 81:

⁷⁶ Խանգաղյան, 1969, 9, 33-34, նկ. 9, 24, կենտրոնում:

⁷⁷ Куфтин, 1944, 116, рис. 69. Սարդարյան, 1967, 173, աղ. XLVIII,_{2,5,6}:

⁷⁸ Սարդարյան, 1967, նկ. 47,₂:

գեստանից⁷⁹ և այլ տեղերից:

«Հալաման» պայմանական անունն են ստացել փուխր ապարների փոքրիկ կտորները (չեչաքար, ծակոտկեն տուֆ), որոնք մեկ կողմում օժտված են սաղր փոսիկով (աղ. IV,_{3,4}): Դրանք անկանոն պրիզմայի ձև ունեն, 2,6-2,7 սմ հաստությամբ, փորվածքի խորությունը 1-1,5 սմ է, տրամագիծը՝ 2,7-3,5 սմ: Սրանցից մեկի գոգավորության գորշ մակերևութի վրա պահպանվել է ղեղնավուն նստվածքը: Վերջինս գտնվել է կացնի կտորված կաղապարի մոտ: Ուստի, հավանական է, որ քննարկվող առարկաները գործածվել են մետաղաձուլության մեջ: Ենթադրվում է, որ կուր-արաքսյան ընկավայրերի զույքի մաս կազմող անկանոն պրիզմայաձև ու հատած կոնաձև որոշ իրեր նույնպես կիրառվել են ծուլման գործընթացում⁸⁰: Պեղավայրում հայտնաբերվել են նաև չեչաքարից կամ այլ ծակոտկեն քարերից պատրաստված 5,5-6,1 սմ «տրամագծով» տծև կամ անկանոն տորածև առարկաներ, որոնց մակերևութին՝ երկու հակադիր կողմերում, ավելի քան 2 սմ տրամագծով փոսիկներ են արված: Այդպիսի առարկա հայտնի է Գառնիից⁸¹: Որպես անավարտ գուրգ է ներկայացված Բարադերվիչից հայտնի նման քարերից մեկը, որի վրա երկու կողմից սաղր փոսիկներ են արված: Վերջինս «սեղմված-գնդաձև» է և իր վրա կրակի ազդեցության հետքեր է կրում⁸²:

Թեև նման իրերի կիրառության վերաբերյալ ռազմաթիվ ենթադրություններ կարելի է անել, այնուամենայնիվ, սրանց իսկական նշանակությունը մեզ համար առայժմ անհայտ է մնում:

Քարե կոկիչները լայնորեն կիրառվել են խեցեգործության ընագավառում: Խեցանոթների մակերևութները փայլեցնելուն ծառայող նման գործիքներն ամենուրեք հանդիպում են վաղրոնգեղարյան համալիրներում: Քարե ռազմաթիվ կոկիչներ են հայտնաբերվել Էլառում⁸³: Ագարակում ևս դրանք տարածված են եղել (աղ. IV,_{5,6}): Դրանցից երկուսը պատրաստված են կարմիր չեչաքարից, գտնվել են H₁₂ և I₁₂ քառակուսիների կուր-արաքսյան անիաթար շերտերից: Մեկը մոտավոր ուղղանկյուն պրիզմայաձև է, 5x3,5x1,7 սմ չափերով, մյուսի միստերից երկուսը սուր անկյուն են կազմում, հիմքի չափերն են 3,3x2,4 սմ, ռարծրությունը՝ 2,4 սմ: Այուս կոկիչները հայտնաբերվել են J₁₁ քառակու-

⁷⁹ Խանգաղյան, 1967, աղ. IX:

⁸⁰ Խանգաղյան, 1969, 19, 40-41, նկ. 33, վերին շարք, աղ. IX: Խանգաղյան, 1979, 56:

⁸¹ Խանգաղյան, 1969, 40, աղ. IX, ներքևի շարք՝ մեջտեղում:

⁸² Исмаилов, 1978, 79-80, таб. XXV,₂₃.

⁸³ Խանգաղյան, 1979, 56-57, նկ. 81:

սում: Երկուսն էլ հատած կոնաձև են (խցանաձև), հիմքերի տրամագծերը չափերով մոտ են իրար, միայն թե մեկը եռակո կարճ է մյուսից: Սրանք պատրաստված են մոխրագույն քարերից, չափերով փոքրը հարաբերականորեն ավելի ծանր է:

Ձեռքերը, որոնք մինչ այժմ հայտնաբերվել են Ագաբակո կուր-արաքսյան համալիրի պեղումներով, բացառապես քարից են պատրաստված:

ա) H_{12} քառակուսում, 1,16 մ խորությունում, վաղբրոնզեդարյան անխաթար շերտից գտնվել է վանակատե նետասլաք՝ հիմքում եռանկյունաձև փորվածքով (աղ. V,1): Սրա ծայրը փոքր-ինչ կոտրված է, սայրին երկկողմանի մանր քառթեր են արված, առավելագույն հաստությունը 0,4 սմ է, վերականգնվող բարձրությունը՝ 3 սմ, լայնությունը հիմքում՝ 2,3 սմ: Նման նետասլաքներ հայտնի են Շենգավթից, Մոխրաբլուրից⁸⁴, Շահլամա II-ի ստորին շերտից⁸⁵, Բաբաղերվիչից⁸⁶, Քեթիից⁸⁷: Քճնարկվող դաղաշրջանում դրանք տարածված էին նաև Արխագիայում (էշերի)⁸⁸ և հյուսիսարևելյան Կովկասում⁸⁹: Մեկ այլ նետասլաք է գտնվել K_7 քառակուսու պեղումներով, որի ծայրը քիչ կոտրված է, սայրը՝ երկկողմ հարդարված, իսկ հիմքը՝ առանց փորվածքի: Վերջինս պատրաստված է բաց մոխրագույն կայծքաղից, տերևաձև է՝ 3 սմ վերականգնվող բարձրությամբ, 2 սմ հիմքի լայնությամբ և 0,45 սմ առավելագույն հաստությամբ (աղ. V,2): Այդ տիպի նետասլաքներ հայտնի են Հայկական լեռնաշխարհի վաղբրոնզեդարյան այլ հուշարձաններից⁹⁰: Քճնարկվող օրինակին չափերով առավել մոտ են Բաբաղերվիչում հայտնաբերվածները⁹¹:

բ) Թերի գուրգ է հայտնաբերվել H_{11} քառակուսուց, կուր-արաքսյան մոխրաշերտից, 1,50-1,60 մ խորությունում: Այն պատրաստված է բաց մոխրագույն (սպիտակավուն) քարից, գնդաձև է, ողորկ մակերևույթով, օժտված է միջանցիկ անցքով: Գուրգի տրամագիծը 4,6 սմ է, անցքի տրամագիծը՝ 1,1 սմ: Սրա գուրգահեռները կարելի է փնտրել էջմիածնի

⁸⁴ Սարգսյան, 1967, 146, 180, աղ. XLIII,3, LIV,4, նկ. 45,4,8:

⁸⁵ Есаян, 1976, 25, 29, таб. 15,16.

⁸⁶ Исмаилов, 1978, 80, таб. XXV,12.

⁸⁷ Петросян, 1989, таб. 2,13.

⁸⁸ Джапаридзе, 1961, 288, рис. 49. Джапаридзе, 1976, 185, рис. 84.

⁸⁹ Гаджиев, 1991, 183.

⁹⁰ Есаян, 1966, 44. Խանգաղյան, 1967, 42:

⁹¹ Исмаилов, 1978, 80-82, таб. XXV,13-16.

Մոխրաբլուրում⁹², Շրեշ բլուրում, Մեծամորում⁹³, Քոսի ճոթերում⁹⁴:
Նման զենքեր հայտնաբերվել են Դաղստանի վաղբրոնզեդարյան հու-
շարձաններից մի քանիսում⁹⁵:

զ) Հայտնաբերվել են մեծ թվով գնդաձև քարեր, որոնց մի մասը՝
կուր-արաքսյան մոխրաշերտի պեղումներով: Հնագետները դրանց ան-
վանում են «արկեր»: Դրանք կարծր քարեր են՝ բոունցքի մեծությամբ
կամ ավելի փոքր, որոնք շատ հարմար են նետելու համար: «Արկերը»
շատ լավ տեղավորվում են ձեռքի ափի մեջ, սակայն կարող էին նա-
խատեսված լինել նաև պարսատիկով նետելու համար: Հատկապես
երկրորդ դեպքում, լավ նշանառուի ձեռքում, այդ քարերը կարող էին
ազդու զենք դառնալ:

Քարից պատրաստվել են կենցաղային բազմապիսի իրեր: Ոչ մեծ
խումբ են կազմում հնագիտական աշխատանքների ընթացքում
գտնված պերճանքի առարկաները, որոնք Ազարակում առայժմ ներկա-
յացված են բացառապես ուլունքներով: Երկու տափօղակաձև ուլունք-
ներ հայտնաբերվել են I₁ քառակուսու կուր-արաքսյան շերտից (աղ.
V,_{3,4}): Փոքր ուլունքը գտնվել է N 1 կլոր կացարանից: Այն պատրաստ-
ված է բաց դարչնագույն քարից, տրամագիծը 0,7 սմ է, հաստությունը՝
0,18 սմ, անցքը համեմատաբար լայն է՝ 0,25 սմ, կենտրոնից տեղա-
շարժված: Մեծ ուլունքն է հայտ է եկել N 1 կացարանի կցակառույցում:
Այս պատրաստված է սպիտակ բյուրեղանման քարից, տրամագիծը 1,5
սմ է, անցքի տրամագիծը՝ 0,1 սմ, առավելագույն հաստությունը՝ 0,4
սմ: Կվարցից պատրաստված նման շրջանաձև տափակ ուլունքներ
հայտնի են Էլառի վաղբրոնզեդարյան ավերված դամբարաններից⁹⁶:

Պեղումներով հայտնաբերված իրերի հաջորդ կատեգորիան հնագի-
տական գրականության մեջ ընդունված է անվանել իաղաքարեր:
Դրանք սեզմենտաձև փոքրիկ առարկաներ են, որոնք Ազարակում ի
հայտ են գալիս կուր-արաքսյան հորիզոններում կամ այնպիսի միջա-
վայրում, որտեղ գերակշռում է շրեշբլուր-մոխրաբլուրյան խեցեղենը:
Մեկն ունի մուգ-մոխրագույն մակերևույթ, հիմքի տրամագիծը 1,5 սմ է,
րարձրությունը՝ 0,5 սմ (աղ. V,₅), մյուսն ունի դեղնավուն մակերևույթ,
հիմքի տրամագիծը 1,2 սմ է, րարձրությունը՝ 0,7 սմ: Անգնենտաձև խա-
ղաքարերը միայն կուր-արաքսյան մշակույթին չեն հատուկ, ինչպես

⁹² Արդարյան, 1967, 181, աղ. LV,₂: Խանգաղյան, 1967, 43, աղ. VI:

⁹³ Խանգաղյան և այլք, 1973, 15, նկ. 7,₃:

⁹⁴ Ханзадян, 1963, 155-156, рис. 3,₆.

⁹⁵ Гаджиев, 1991, 185.

⁹⁶ Խանգաղյան, 1979, 44, աղ. IX,₄:

շի համընդհանուր այդ ձևը հայտնի է այլ տարածաշրջաններում և այլ դարաշրջաններում:

Քարից քանդակված արվեստի գործերից հիշատակման է արժանի «մարդակերպ» կուռքը: Այն հայտնաբերվել է H_{12} քառակուսու հարավարևելյան անկյունում, N 2 կացարանի կցակառույցի կոր պատից արևմուտք, 1,20-1,50 մ խորությամբ, թեքությամբ ընկած վիճակում, ակնհայտորեն՝ ոչ իր նախնական դիրքում (նկ. 36, նշված է սլաքով): Կուռքը կերտված է 0,70x0,48x0,30 մ չափերով դեղին, փուխր տուֆ քարից. նման քարերով են շարված կուր-արաքսյան շինությունների պատերը: Քանդակը կտրված է, հավանաբար բացակայում է գլխամասը: Ուղղանկյուն պրիզմայածև քարաբեկորի դիմային մասը հարթեցված է, մոտավոր կենտրոնում փոսիկ է արված: Քարը մշակված է 2,5-3 սմ լայնությամբ և 1 սմ խորությամբ ակոսների օգնությամբ: Թեև ամրողջական կերպարը իսթարված է և առայժմ լավ չի վերծանվում, սակայն ծախ եզրին կոց, ասես, մարդու ուսից կախված ծալված մտրակ է պատկերված: Կուր-արաքսյան մշակույթի հուշարձաններում, թրծակավե և քարե մարաքանդակների հետ մեկտեղ, քիչ չեն նաև քարե խոշոր կուռքերի գտածոները: Չափերով մեծ քարե կիռքեր են հայտնի Հառիճից⁹⁷: Հառիճավանքի երկու քարակոթողները նույնպես ուղղանկյուն պրիզմայածև են և կերտված են տուֆից: Սրանց առջևի հատվածները ծածկված են փորագիր շեղ գծերով: Այս մշակված քարերից մեկը համարվում է կնոջ, մյուսը՝ տղամարդու «քանդակ»: Ենթադրվում է, որ սրանք վաղբրոնզեդարյան կիթողներ են: Շիրակում էլի կան համաժամանակյա համարվող քարե կոթողներ⁹⁸: Քեթիում գտնվել է խիստ ոճավորված մարդակերպ քարե կուռք, սակայն վերջինս չավերտով մի քանի անգամ ավելի փոքր է քննարկվող նմուշից⁹⁹: Ձևով և չափերով Ագարակի օրինակին մոռվել մոտ են Շենգավթի III հազարամյակի կացարաններից մեկում հայտնաբերված տուֆակերտ երեք խոշոր կուռքերը¹⁰⁰: Ջուտ ոճական առումով Ագարակո քարե կուռքը համադրելի է Հառիճի թրծակավե արձանիկոն, որի ուսից կախված է գավազանը: Այս մանրակերտը մեկնարանվել է որպես հովվի արձանիկ, իսկ ուսից կախված գավազանը՝ հովվական ցուպ¹⁰¹:

J_{10} քառակուսու հարավարևմտյան հատվածում, ժայռահարթակը

⁹⁷ Хачатрян, 1975, 75, рис. 36. S. Խաչատրյանն այս կուռքը համարում է կանգնած դիրքով կնոջ պայմանական կերպար: Խաչատրյան, 2003ա, 119, 121, աղ. 1.1.2:

⁹⁸ Խաչատրյան, 2003, 125, 127, տախտ. I, 6:

⁹⁹ Петросян, 1989, 21-22, рис. 4.

¹⁰⁰ Եսայան, 1987, 133-134, աղ. IV, 1.3:

¹⁰¹ Хачатрян, 1975, 77-78, рис. 37, нижний слева.

ծածկող նստվածքաշերտի տակ. րացվել է ժայռապատկեր՝ հիմնականում կազմված իրար զուգահեռ երեք փորագիր ալիքածև գծերից և սրանց կից՝ առայժմ հստակ չդիտվող ինչ-որ կենդանու փորագիր կերպարանքից (նկ. 37): Անկասկած, այստեղ գործ ունենք «ջուր» գաղափարագրի հետ: Հայտնի է, որ Սյունիքի և Գեղամա լեռների ժայռանկարներում էլ ջուրը պատկերված է ալիքավոր գծերի տեսքով¹⁰², որն իր արտահայտությունն է գտել նաև հին հայկական գաղափարագրերում¹⁰³: J₁₁ քառակուսու հյուսիսարևելյան մասում ի հայտ է եկել մեկ այլ ժայռապատկեր, որն իրենից ներկայացնում է րազմաթիվ փորագիր կոր գծերից կազմված րավակամին րարդ մի կոմպոզիցիա (նկ. 38): Մեր խնդիրը չէ այստեղ անդրադառնալ այս երկրորդ ժայռանկարի պատկերագրությանը, առավել ևս, երբ այդ հատվածի պեղումները դեռ չեն ավարտվել և ժայռահարթակն առայժմ մասամբ գտնվում է հողի տակ: Սակայն այսօր արդեն կարելի է արձանագրել, որ Հայաստանում ժայռապատկերների թվագրության համար առաջին անգամ գտնվել է շերտագրական կռվան, քանի որ այս վերջին ժայռապատկերը ծածկված է կուր-արաքսյան մշակութային շերտով: Լիառույս ենք, որ J₁₁ քառակուսու պեղումների ավարտից հետո վերջնականապես կպարզվի հիշյալ ժայռապատկերի ժամանակագրական վերին սահմանի հարցը: Այս առումով, նորարաց ժայռապատկերները Ազարակի հնագիտական համալիրի I տեղամասում պեղված ուշագրավ գտածոներից են:

Ոսկրե առարկաները: Շենգավիթյան մշակութային պատկանող հնագիտական հուշարձաններում ոսկրե գործիքներ հաճախ են հանդիպում: Սակայն Ազարակում դրանք հազվագյուտ են, որը, իհարկե, սխալ կլինի րացատրել անասնապահության թերզարգացածությամբ¹⁰⁴: Այդ իրողությունը, ավելի շուտ, արդյունք է զարգացած մետաղագործության և քարգործության առկայության: H₁₂ քառակուսում՝ կուր-արաքսյան անխառն շերտում, հայտնարեղվել է ոսկրե րիզ $\approx 3,7$ սմ երկարությամբ: Այն լարի ձև ունի, մակերևույթը հղկված-փայլեցված է, երկու ծայրերը սրված են:

Ոսկրից պատրաստված իլիկի գլուխներ են հայտնարեղվել Շենգավթում, Շրեշ ըլրում, Գառնիում, Քոսի ճոթերում, Շիրակավանում, ինչպես նաև Ջրառատի, Բերքարերի և Ջրվեժի դամբարանըներում¹⁰⁵:

¹⁰² Ի դեպ, սրանց մոտ նույնպես կենդանիներ են պատկերված:

¹⁰³ Մարտիրոսյան, 1973, 43, 48, աղ. XIV,^{1,8} և I սյունակ, XXIII,¹⁹:

¹⁰⁴ Ստորև դեռ կանդրադառնանք Ազարակի կուր-արաքսյան ընկավայրում անասնապահության զարգացման մակարդակին:

¹⁰⁵ Բայրուրդյան, 1938, 201, 222, նկ. 62: Ханзадян, 1963, 155-156, рис. 3,¹. Խանզադյան, 1967, 81: Թորոսյան և այլք, 2002, 15, աղ. V,⁴⁻⁷: Գասպարյան, 1991, 120: Թունամյան, 1993, 10, աղ. V,⁹:

Խեցեգործությունը

ա) Կավե առարկաները

Կավը դեռևս գերակշիռ դեր ուներ տնտեսության մեջ: Հուն վիճակում այն լայնորեն օգտագործվող շինանյութ էի: Դրանից պատրաստվում էին հարթուռուցիկ աղյուսներ՝ տարարնույթ շինությունների պատերը շարելու համար: Կավացեխով սվաղում էին բնակարանների հատակները և մթերահորերը, ծեփում էին տների պատերը և ցանկապատերը, ծածկում էին նստարանները և տանիքների հյուսվածքները: Կավից պատրաստվում էին տնտեսական ու կենցաղային իրեր, աշխատանքի գործիքներ, ծիսա-պաշտամունքային և այլ առարկաներ: Ասկայն, կավր նախ և առաջ հումք էի խեցեղենի արտադրության համար, որը գտածոների ամենարագմաքանակ խումբն է կազմում կուր-արաքսյան յուրաքանչյուր հնագիտական համալիրում:

ա) Աշխատանքի թրծակավե գործիքներից հարկ է նշել հալոցամանները և կթղաները, որոնք կիրառվում էին մետաղածուլության մեջ: Վերն արդեն խոսվել է H_{11} քառակուսում հայտնաբերված իռեցանոթի հատակի մասին, որի մեջ պահպանվել էի բրոնզե ծուլվածքի մնացորդը: L_{10} -ի պեղումներով հայտնաբերված կթղան թերի է, ունի մրոտ եզր և օժտված է կանթով (աղ. VI, 1): Վերջինս պատրաստված է կավից, թրծված է, ունի գդալի ձև: Այն ձեռածեփ է, կարմիր-աղյուսագույն հարդարված մակերևույթով: Գդալածն կթղաներ հայտնի են Հառիճից¹⁰⁶, Կառնուտում հայտնաբերված նման կթղաների կանթերն ավարտվում են կեռ (ցած թեքվող) ծայրով¹⁰⁷, Գառնիում գտնվել են ջարդված կթղաներ¹⁰⁸: Վաղբրոնզեդարյան կթղաների փոքրիկ ռեկորներ են հայտնաբերվել նաև Շահլամա II բնակատեղի ստորին շերտից¹⁰⁹: Ըստ երևույթին, գդալածն քարե կթղա է հայտնաբերվել էլառում¹¹⁰: Չպարզված է մնում Բարաղերվիչից հայտնի կավե չթրծված փոքր գդալի նշանակությունը¹¹¹: Գդալածն կավսթուրծ կթղաներ են հայտնաբերվել նաև

¹⁰⁶ Хачатрян, 1975, 58.

¹⁰⁷ Badalyan, Avetisyan, 2007, 147, pl. X, 1.

¹⁰⁸ Խանգաղյան, 1969, 10:

¹⁰⁹ Есаян, 1976, 25-26, 30, таб. 12, в; 16, 17.

¹¹⁰ Խանգաղյան, 1979,

¹¹¹ Исмаилов, 1978, 57, 63, таб. XVIII, в.

Խիզանաանթգորայում¹¹², Քվացխելեբիում¹¹³:

Ազարակում հայտնաբերվել են նաև մետաղածուլական թրծակավե կաղապարներ: Դրանցից երկուսը գտնվել են J₁₀ քառակուսու հյուսիսարևելյան հատվածում, խառը շերտում, որտեղ գերակշռում են կուրարաքսյան գտածոները: Երկուսն էլ թերի են՝ ներկայացնում են երկփեղկ կաղապարի կոտրված մեկ փեղկը (աղ. VI, 2,3): Արանց մակերևույթը ղեղնաղարչնագույն է, միջուկը՝ սև, երկուսն էլ օժտված են 2,1 սմ տրամագծով կլոր անցքով: Մեծ բեկորի արտաքին մակերևույթի տարբեր հատվածներում պահպանվել են փեղկերն իրար կապելու համար նախատեսված ակոսները: Այս կաղապարներում, հավանաբար, ձուլվել են բլթանցքավոր (կոթառավոր) կացնիկներ: Բրոնզե կացնի ձուլման կաղապար է հայտնաբերվել Շենգավթում¹¹⁴: Քննարկվող օրինակներին բավականին նման մեկ այլ կաղապար հայտնի է Աշտարակի շրջանի Գազանոց հնավայրից: Այն գտնվել է կուրարաքսյան շերտից և նույնպես նախատեսված է եղել կացին ձուլելու համար¹¹⁵: Վաղուց գիտական շրջանառության մեջ է Գառնիում հայտնաբերված կացնի կաղապարը: Վերջինս պատրաստված է հրակայուն կավից, ձևով նման է և չափերով մոտ է մեք օրինակուն¹¹⁶: Ազարակի նմուշը նման է նաև Նախաճավանի Մոխրարլուրում հայտնաբերված թրծակավե երեք կաղապարներից մեկին¹¹⁷: Չուլման կաղապարներ են գտնվել Խիզանաանթգորա հուշարձանում¹¹⁸: Կացին ձուլելու երկփեղկ կաղապար է գտնվել Գալգալաթի կուրարաքսյան բնակատեղում (Դաղստան)¹¹⁹: Համիճում պեղված վաղբրոնզեդարյան շինություններից մեկում հայտնաբերված կաղապարը, միգուցե, ծառայել է «կաշի մշակելու գործիք» ձուլելուն¹²⁰:

Աշխատանքի գործիքների մեկ այլ խումբ են կազմում իլիկների կավաթուրծ գլուխները: Ազարակում սրանք գտնվել են H₁₁, H₁₂, I₇, I₁₂, L₉, O₆ քառակուսիների պեղումներով: Հայտնաբերված օրինակները տորածն են, տափօղակաձև, հատած կոնաձև կամ սեզմենտաձև, տրա-

¹¹² Киквидзе, 1972, 8-9, рис. 1,4,5.

¹¹³ Абесадзе, 1969, 29, таб. II,73.

¹¹⁴ Байбуртян, 2011, 43-45, рис. 106.

¹¹⁵ Badalyan, Avetisyan, 2007, 91-92, pl. II,37.

¹¹⁶ Ханзадян, 1964, 93, рис. 1,1. Խանգաղյան, 1969, 12, 37, 39, նկ. 27, 29:

¹¹⁷ Абибуллаев, 1982, 85, 123, 138, 303, таб. XXIII,11-12.

¹¹⁸ Киквидзе, 1972, 8-9, 20-21, рис. 1,6,7.

¹¹⁹ Мунчаев, 1975, 175, 177, 179, рис. 30,4. Гаджиев, 1991, 142-143, рис. 31,1.

¹²⁰ Хачатрян, 1975, 56, 58, рис. 14.

մագժերը տատանվում են 1,8-3,5 սմ սահմաններում (աղ. VI,⁴⁻⁸): Դրանք ունեն 1-ից մինչև 1,6 սմ բարձրություն և օժտված են 0,4-0,8 սմ տրամագծով անցքերով: Ինչպես աղորիքներն ու սանդերը, սրանք ևս - զուտ կանացի գործիքներ էին: Իլիկների կավե գլուխներ գտնվել են Գառնիում¹²¹, Նախճավանի Մոխրաբլուրում¹²² և վաղրոնգեդարյան այլ հուշարձաններում:

բ) Կենցաղային իրեր: I₁₂ քառակուսու հյուսիսարևելյան հատվածից, 1,70 մ խորությունում գտնվել է թժակավե տափօղակաձև փոքրիկ առարկա, թույլ գոգավոր մակերևույթով: Այն գտնվել է իսթարված շերտում, սակայն կուր-արաքսյան գտածոների միջավայրում, ուստի մենք այն պայմանականորեն քննարկում ենք վերջիններիս հետ: Դրանք համարվում են իաղանիշներ և հանդիպում են այլ մշակութային համատեքստերում: Օրինակ, կավե նմանատիպ իսաղանիշներ գտնվել են մերձսևծովյան հելլենիստական հուշարձանների պեղումներում¹²³:

Իր ուրույն ձևով մյուս գտածոներից առանձնանում է թժակավե կացնաձև կախիկը: Այն հայտնաբերվել է H₁₁ քառակուսու կենտրոնական հատվածում, իսառը շերտից և պայմանականորեն է քննարկվում կուր-արաքսյան արտեֆակտերի շարքում: Դրա վերին հատվածում նախքան թժումը հորիզոնական միջանցիկ անցք է փորված, որի շնորհիվ կախիկը նմանվում է կոթառավոր կացնի (նկ, 39,9, աղ. V,⁶): Երկարությունը 5,55 սմ է, առավելագույն լայնությունը՝ 3,9 սմ, հաստությունը՝ 2 սմ, անցքի տրամագիծը՝ 0,65 սմ: Թժակավե այս մանրակերտը կտորված է անցքի հատվածում, ինչից կարելի է եզրակացնել, որ անցքի միջով հաստ թել է անցել: Մեր օրինակը հեռավոր նմանություն ունի Չառիճում գտնված կավե մանրակերտի հետ: Վերջինս փոքրիկ տաշուրագ կամ առանց ռլթանցքի սեպաձև կացին է հիշեցնում¹²⁴:

գ) Թժակավե արձանիկները կուր-արաքսյան մշակութային բնորոշ առարկաների շարքում ուշագրավ իսումր են կազմում: Դրանք հայտնաբերվել են ինչպես Չայկական լեռնաշխարհի ռազմաթիվ հուշարձաններում, այնպես էլ այլ տարածաշրջանների համաժամանակյա մշակութային մի շարք համալիրներում: Ազարակի հնավայրի վաղրոնգեդարյան անիաթաղ և իաթարված շերտերում ևս ի հայտ են եկել մար-

¹²¹ Խանգաղյան, 1969, 12, 33, նկ. 24:

¹²² Абибуллаев, 1982, 139, 304, таб. XXIV,¹².

¹²³ Археология СССР, 1984, 109, таб. XI,⁹.

¹²⁴ Хачатрян, 1975, 56, рис. 14,^{нижний справа}.

դակերպ և կենդանակերպ բազմաթիվ արձանիկներ, սայլանիվների մանրակերտեր:

Պատմական Հայաստանից ծագող վաղբրոնզեդարյան մարդակերպ արձանիկների մեծ մասը հայտնաբերվել է Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող հնագիտական հուշարձանների պեղումներով¹²⁵: Մեզ հայտնի բոլոր նմանատիպ մանրաքանդակները, ի տարբերություն պղնձեքարեդարյան նստած դիրքով արձանիկների, մարդկանց պատկերում են կանգնած վիճակում¹²⁶: Ազարակո կուր-արաքսյան համալիրի մարդակերպ կավաքանդակները, մեծ մասամբ, պատկերում են մերկ կանանց: Դրանք տափակ ձև ունեցող սխեմատիկ ստեղծագործություններ են, հարթ-պայմանական ոճով կերտված և, մի շարք դեպքերում, իրապաշտական տարրերով լրացված (սեռական հատկանիշների ընդգծում): Արձանիկները, հիմնականում, օժտված են կարճ ուռքերով և հորիզոնական բացված կարճ թևերով, սավելի ճշգրիտ՝ ձեռքերի փոխարեն ելուստներ են արված: Այսպիսով, թևերի դիրքը հուշում է, որ կանայք, ամենայն հավանականությամբ, պայմանականորեն պատկերված են կրծքին ծալված ձեռքերով¹²⁷: Այս կավակերտ կուռքերից երեքը համեմատաբար լավ են պահպանվել: Հիմնականում, բացակայում են միայն հիշյալ արձանիկների գլուխները: Սրանցից առաջինը (աղ. VII, 1) գտնվել է H₁₂ քառակուսու պեղումներով, վաղբրոնզեդարյան շերտում՝ համաժամանակյա մի պատի սվադին հենված դիրքում (նկ. 28): Կավաթուրծ մանրաքանդակո մակերևույթը կաբմիր-աղյուսագույն է, աջ թևը, մինչև կուրծքը ներառյալ, երկու կողմից մրտ է: Ոտնաթաթերը բացակայում են, ձախ ոտքը հնում կտրտվել է, սակայն մնացել է իր նախնական դիրքում¹²⁸: Կանացի կուռքի կրծքերը բրգածն են, շեշտված հետույքը հորիզոնական ձվածիր ձև ունի: Ցայլքն ու իգական նախասկիզբն արտահայտված են խազերով և փորվածքով: Արձանիկո պահպանված բարձրությունը 8,9 սմ է, թևերի բացվածքը՝ 6,1 սմ, հաստությունը՝ 1,68 սմ: Այս մանրաքանդակը ձևով և չափերով մոտ է Շենգավթի կավակերտ կուռքին, իսկ իգական հատկա-

¹²⁵ Եսայան, 1987, 127:

¹²⁶ Լանրաքանդակների մարմնի դիրքի նմանօրինակ փոփոխության միտում է արձանագրվել նաև զարգացած տրիպոլյեի հուշարձաններում (կանգնած դիրք), ի տարբերություն վաղ տրիպոլյեի հնագիտական համալիրների (նստած դիրք). տե՛ս Бибииков, 1953, 215:

¹²⁷ Նմանապիպ արձանիկներիի վերարերյալ այս մեկնարանությունը վաղուց մտել է գիտական շրջանառության մեջ (Бибииков, 1953, 224. Мартиросян, 1961, 39):

¹²⁸ Ըստ երևույթին, այդ վնասվածքն առաջացել է դեմ շարտվելու արդյունքում:

ցիշի ընդգծման եղանակով հիշեցնում է Մոխրարլուրի արծանիկներից մեկը¹²⁹: Երկրորդ արծանիկը (աղ. VII,₂) գտնվել է L₁₀ քառակուսում: Սրա մակերևույթը ղեղնա-վարդագույն է, ուսերը բարձր են, «թևերն» ու ոտքերն՝ ավելի կարճ, կոնքը՝ շեշտված, ազդրերը՝ լայն, ընդգծված է սեռական (իգական) հատկանիշը: Ստինքներն արտահայտված են փոքրիկ ելունդներով; վզից դեպի կուրծքը ժապավենաձև ելուստ է իջնում¹³⁰: Այս նմուշը, ակնհայտորեն, պատկերում է մարմնեղ կնոջ: Երրորդ արծանիկը հայտնաբերվել է M₆ քառակուսու պեղումներով (աղ. VII,₃): Հավանորեն, այն պատկերում է հղի կնոջ: Գլուխը բացակայում է, մարմնի մնացած մասը պահպանված է ամբողջությամբ: Թրծակավե մանրաքանդակի մակերևույթը ղեղնա-վարդագույն է, միջուկը՝ սև: Կրծքավանդակին ծալված ձեռքերը պատկերված են իրապաշտորեն: Մեծ փոսիկով նշված է պորտը, ընդգծված է սեռական հատկանիշը: Վզի վրա հորիզոնական և ուղղաձիգ խորադիր գծեր կան, իսկ ողջ թիկունքը ծածկված է փոքր քառանկյուններ կազմող խազերի ցանցով և երկար ու թեք գծերով: Հնարավոր է, որ դա խորհրդանշում է թիկունքին զցած շալր: Կավաթուրծ այս արծանիկը, հավանաբար, պատկերում է պտղարերության աստվածուհուն՝ Մայր աստվածությանը: Արծանիկը, կարծես թե, վզից սկսվող ուղղահայաց կտրվածքով բաժանվել է երկու մասի, որոնք հետո, ձուլթի օգնությամբ, կրկին փակցվել են միմյանց: Բավարար պահպանվածությամբ երկու այլ արծանիկներից մեկը հայտնաբերվել է J₁₁ քառակուսուց (աղ. VII,₄): Վերջինիս մակերևույթը ղեղնա-մոխրագույն է, միջուկը՝ դարչնագույն, կողերը՝ մրոտ: Աջ ոտնաթաթը բացակայում է, ուսերը կլոր են, արևական սեռական հատկանիշը շեշտված է: Սա նախորդ մյուսներից տարբերվում է ոտքերի նեղ բացվածքով: Պահպանված բարձրությունը 5,1 սմ է, լայնությունն ուսերի մակարդակում՝ 3,8 սմ, հաստությունը՝ 1 սմ: Այս օրինակը, մարմնի կերտվածքով; որոշակիորեն տարբերվում է Շենգավթում հայտնաբերված տղամարդու մանրաքանդակից¹³¹: Բավականաչափ պահպանված մեկ այլ արծանիկ է գտնվել L₁₀ քառակուսում (աղ. VII,₅): Սրա մակերևույթն առջևի մասում վարդագույն է, թիկունքը՝ ղեղնա-դարչնագույն, միջուկը՝ սև: Կողային փորվածքների միջոցով կարճ ելուստաձև ընդգծված են թևերը: Կրծքերը ելնդաձև շեշտված են, պորտը և իգա-

¹²⁹ Սարդարյան, 1967, 200, աղ. LXX,_{1,3}:

¹³⁰ Ենթադրություն է արվել, որ գուցե նման ձևով պատկերված է մագախուսը. տե՛ս Badalyan, Avetisyan, 2007, 27:

¹³¹ Սարդարյան, 2004, 461, նկ. 54, ստորինը:

կան նախասկիզբը ընդգծված: Գլուխը բացակայում է, մեջքի հատվածը վնասված է, ոտքերը բավականին երկար են՝ լայն բացվածքով, աջ ոտքը կրտրված է ագդրից, ձախ ոտնաթաթը պոկված է: Պահպանված առավելագույն բարձրությունն ու լայնությունը՝ 9,7 սմ և 5,5 սմ: Այս օրինակն իր ոճով շատ նման է Սոխրաբլուրի հանրահայտ արձանիկին¹³², եթե անտեսենք երկար ոտքերը, որոնց շնորհիվ Ագարակը մանրաքանդակն սովելի նրբագեղ ու ներդաշնակ տեսք ունի:

Հաջորդ երեք արձանիկները (Նկ. 39,1-3) գտնվել են I₁₁ քառակուսու պեղումներով, Դրանց դիմային հատվածները, հավանաբար, կերտված են եղել անփութորեն, իսկ սեռական հատկանիշները ներկայացնող մանրամասները աչքի են գարնում մանրակրկիտ մշակվածությամբ: Երեքն էլ մեզ են հասել թերի վիճակում, մասնավորապես վնասված են կան իսպառ բացակայում են գլխամասերն ու ոտքերը¹³³: Արձանիկների մակերևույթներին գեղիշխում են սև, դարչնագույն և մոխրագույն երանգները, իսկ միջուկների կավազանգվածը սև գույն ունի: Մանրակերտերից մեկի կրծքերը շեշտված են, նրբորեն ընդգծված է բերանը (դրանից վեր եղած հատվածը բացակայում է), թևերի բացվածքը 6,3 սմ է, իրանի հաստությունը՝ 1,5 սմ (ադ. VIII,1): Ամրաքանդակն իր ձևով, ըստ երևույթին, միջանկյալ դիրք է գրավում Շենգավթում¹³⁴ և Մոխրաբլուրում¹³⁵ գտնված օրինակների համեմատությամբ: Մյուսը չափերով ավելի փոքր է (թևերի բացվածքը՝ 5,5 սմ, իրանի հաստությունը՝ 1,2 սմ), շեշտված է հետույքը, կրծքերը պոկված են (ադ. VIII,2)¹³⁶: Այս նմուշին չափերով համապատասխանող, առանց ստինքների մի արձանիկ է հայտնաբերվել Աոխրաբլուրի պեղումներով: Վերջինս նույնպես թերի է, ուստի սեռական հատկանիշի ընդգծված լինելու հանգամանքը հնարավոր չէ պարզել: Չայս թևը և ոտքերը կրտրված, պոկված ստինքներով թրձակավե մեկ արձանիկ էլ հայտնաբերվել է Խարբերդի դաշտավայրում (Քոբուջութեփե)¹³⁷: Այս շարքի երրորդ արձանիկը գտնվել է կուր-արաքսյան անխաթար շերտում: Այն ընդգծված կրնք ունի, ստինքներն արտահայտված են, իրանի լայնությունը 4,2 սմ

¹³² Пиотровский, 1949a, таб. 2.

¹³³ Հետաքրքիր է, որ հուշարձանի պեղումներով ոտքերի պոկված մասեր այդպես էլ չեն հայտնաբերվել:

¹³⁴ Սարգսյան, 1967, նկ. 42,3:

¹³⁵ Пиотровский, 1949, рис. 3,1,3.

¹³⁶ Պահպանված հետքերից կարելի է եզրակացնել, որ ստինքները պատրաստվել են առանձին և հետո են ծեփվել իրանին:

¹³⁷ Van Loon, Güterbock, 1972, 84, pl. 55,2.

է, հաստությունը՝ 1,1 սմ (աղ. VIII,3): Կավաթուրծ կուռքն իր պահպանված մասով որոշ նմանություն է ցուցաբերում Մոխրարլուրի վերոհիշյալ ամրողջական նմուշին, վերջինից տարրերվելով «թևերի» և ռարծր տեղադրված կրնքերի մեջ եղած նեղ՝ գրեթե իռրհրդանշական, բացվածքով: Հավանաբար մեր օրինակը ևս պատկերել է մարմնեղ կնոջ: Քննարկվող արձանիկը ոճական որոշակի նմանություն է դրսևորում նաև Հառիճում գտնված վաղրոնգեղարյան տուֆակերտ կուռքին¹³⁸:

Մյուս երեք մարդակերպ մանրաքանդակներից պահպանվել են կոնաձև գլուխները և, մասամբ, կրծքավանդակներն ու թիկունքը: H_{12} -ի հյուսիսարևմտյան հատվածում հայտնաբերված կանացի փոքրիկ կուռքը պատկանում է «թռչնագլուխ» անվանված արձանիկների թվին (նկ. 40,1, աղ. VIII,4): Այն ունի սև մակերևույթ և միջուկ. «ականջներին» անցքեր են արված, ձախ ստինքը պոկված է, աջը՝ ըրգածն շեշտված: Կոնքերի հատվածն ու ոտքերը ընկալված են, թևերի ընկալվածքը 2,85 սմ է, հաստությունը՝ 0,8 սմ: Այս մանրաքանդակը գլուխը ընկալված է Մոխրարլուրի հավաքածոյի արձանիկը գլխամասին¹³⁹: Թռչնակերպ գլխով նման մի արձանիկ ծագում է Ծոփքից (Քորուջուրեփեփե)¹⁴⁰: Այս խմբի երկրորդ արձանիկը հայտնաբերվել է H_{11} քառակուսում, N 2 կլոր կացարանի հյուսիսարևելյան հատվածին կրց՝ պատի դրսի կողմում: Սա ավելի խոշոր է նախորդից: Սրա մակերևույթը դարչնագույն է, թևերի ընկալվածքը 3,8 սմ է, հաստությունը՝ 1,5 սմ: Թիկունքին փորագիր գծեր կան, որոնք, հավանաբար, իռրհրդանշում են վաղսերը կամ էլ, միգուցե, հագուստի գործվածքը (նկ. 40,2, աղ. VIII,5)¹⁴¹: Կոնաձև գլխով կոտրված արձանիկ է հայտնաբերվել Շենգավթում¹⁴²: Ե.Հ. Բայրուրյանի կարծիքով, այն կանացի աստվածություն է պատկերում: Ծամերը իռրհրդանշող խագեր են արված նույնաձև գլխով մեկ այլ մանրաքանդակի թիկունքին, որը գտնվել է Քորուջուրեփեփեում¹⁴³: Քննարկվող երրորդ մանրաքանդակը (աղ. VIII,6) հայտնաբերվել է J_{11} քառակուսու պեղումներով: Այն ունի դեղնա-կարմրավուն և դեղնա-մոխրագույն մակերևույթ: Մարմինը՝ կրծքավանդակից

¹³⁸ Хачатрян, 1975, 75, рис. 36.

¹³⁹ Пиотровский, 1949, 176, рис. 3,2. Եսայան, 1987, 128-129, աղ. II,6: Սարգսրյան, 2004, 460, նկ. 53, վերինը:

¹⁴⁰ Van Loon, Güterbock, 1972, 84, pl. 55,2.

¹⁴¹ Այս փորագիր գծերը բնորոշվել են նաև «հասկանման զարդանախշ» անվանումով (Սահակյան, 2008, 304):

¹⁴² Байбуртян, 2011, 54-55, рис. 17. Куфтин, 1944, 120, рис. 75.

¹⁴³ Van Loon, Güterbock, 1972, 84.

ցած չի պահպանվել, րացակայում է նաև մեկ թևը: Իրանի հաստոթյունը 1,45 սմ է: J₁₁-ում գտնվել է նաև դարչնագույն մակերևութով, մրոտ, կավաթուրծ անորոշ մի ընկոր, որը, գուցե, ինչ որ «եղջերավոր» արծանիկի գլխամաս է եղել (ադ, VIII,7): Ամեն դեպքում, այն որոշ նմանություն է դրսևորում Մոխրարլուրի «կանգնած մերկ կնոջ» արծանիկի վերին հատվածին (երկար վիզ, «եղջերակերպ» գլխամաս)¹⁴⁴:

Ազարակի թրծակավե մարդակերպ մանրաքանդակների հավաքածոյում առայժմ եզակի է I₁₁ քառակուսում հայտնարերված նմուշը (նկ. 39,8, ադ. VIII,8): Նախ, այն ծավալային կերտվածք է, վեր պարզած ձեռքերով, առանց արտահայտված ոտքերի: Քննարկվող համալիրում դեռևս նման մեկ ուրիշ օրինակ չի հայտնարերվել: Սակայն, սեղմված գլանաձև կամ հատած կոնաձև իրանով արծանիկներ¹⁴⁵ հայտնի են կուր-արաքսյան մշակույթի այլ հնավայրերից՝ Յառիճ¹⁴⁶, Պուլուր¹⁴⁷, Նորչունթեփե¹⁴⁸: Հետաքրքիր գուգահեռ է անցկացվել հյուսիսարևելյան Կովկասում (Կատարադաչթափա) հայտնարերված նմանաձև արծանիկներից մեկի և էջմիածնի Մոխրարլուրի հայտնի օրինակի միջև¹⁴⁹: Ազարակում հայտնարերված արծանիկը յուրօրինակ է նրանով, որ վրի հիմքում 2 սմ խորությամբ նեղ անցք է արված՝ գլխամասի ամրացման համար: Չի րացառվում, որ այս փոքրիկ կուռքի վզին և գլխին փոխարինել է հացահատիկի մի հասկ, որի ցողունն ամրացվել է այդ նպատակով փորված անցքի մեջ: Այսպիսով, այս կուռքը կարող էր ոչ միայն խորհրդանշել, այլև՝ իրապաշտորեն մարմնավորել հացահատիկի աստվածությունը: Մարդակերպ կավակերտ արծանիկների մյուս տեսակներին, որոնք անքակտելի միասնություն են կազմում օջախների հենակների կամ խեցանոթների հետ, կանդրադառնանք իրենց տեղում:

Կենդանիների փոքրիկ կավե արծանիկները լայնորեն սփռված են կուր-արաքսյան մշակութային աշխարհում¹⁵⁰: Այդ տարածաշրջանում

¹⁴⁴ Пиотровский, 1949, 176, рис. 3,1. Սարդարյան, 1967, 200, 246, ադ. LXX,3: Ի դեպ, ըստ վերականգնված տարբերակներից մեկի, այս արծանիկի գլուխը սկզբնապես կարող էր այլ տեսք ունենալ (Пиотровский, 1949a, таб. 2, второй ряд, слева):

¹⁴⁵ Այս սիփի մանրաքանդակները կոչվում են նաև «գանգաձև» կամ «կոնաձև հիմքով արծանիկներ»։ տե՛ս Хачатрян, 1975, 76. Եսայան, 1987, 129-130:

¹⁴⁶ Хачатрян, 1975, 76-78, рис. 37.

¹⁴⁷ Коşay, 1970, phot. 5.

¹⁴⁸ Hauptmann, 1979, 69, taf. 33,2.

¹⁴⁹ Мунчаев, 1961, 134-135, рис. 46.

¹⁵⁰ Есаян, 1980, таб. 3-7. Чубинишвили, 1963, 19, 30, рис. 2,219. Киквидзе, 1972, 15-16, 27, рис. 3,1-3. Burton Brown, 1951, 48, fig. 13, pl. V. Esin, 1970, pl. 10,4; 11,12 և

դրանք հանդիպում են դեռևս վաղերկրագործական բնակավայրերում¹⁵¹: Հիշյալ մանր քանդակները ծավալային ստեղծագործություններ են, որոնք թեև գուրկ չեն որոշ պայմանականությունից, այնուամենայնիվ, կերտված են առավել բնապաշտորեն, քան կանանց կերպարները: Ազարակում նույնպես կան կենդանիների կավաքանդակներ:

Արձանիկներից երկուսը գտնվել են I₁₁ քառակուսում: Եզան թոճակավե մանրաքանդակի (նկ. 39,4, աղ. IX,1) մակերևույթը մոխրագույն է, միջուկը՝ սև, իրանի չափերն են 3,5x2,7x1,5 սմ: Դուռնի արտահայտված է թեթևակի ուռուցիկ եռանկյունաձև ելուստով, ինչպես առջևի, այնպես էլ ետևի ոտքերն իրարից տարանջատված չեն: Նկատելի է պոչի վերին մասը, կոտրված են ձախ եղջյուրը և աջ եղջյուրի ծայրը, վզին կլոր միջանցիկ անցք է արված: Կուր-արաքսյան մշակույթում հատկապես տարածված են ցլի և եզան կավե մանր արձանիկները: Փոքր չափերի նման հնագիտական առարկաներ են գտնվել Շենգավթում, Մոխրաբլուրում, Ջրահովտում, Այգևանում, Համիճում, Ֆիզլետովոյում, Գեղարոտում, Աղստևի ավազանում, Ծոփքում և այլուր¹⁵²: Վերջիններիս պարանոցներին արված անցքերը կարող են հուշել, որ կենդանիները պատկերվել են լծված վիճակում¹⁵³: Հատկանշական է, որ Նախճավանի Մոխրաբլուրի կուր-արաքսյան շերտում հայտնաբերված 24 կավարձանիկներից 21-ը պատկերում են իռչող եղջերավոր կենդանիների, որոնց պարանոցներին անցքեր են արված¹⁵⁴: Շան արձանիկը գտնվել է մշակութային անխաթար շերտում, այն դարչնագույն է, ունի ցցուն ականջներ (ծայրերը կոտրված են), աչքերը նշված են մանր փոսիկներով, դուռնը սրվող է, երախը՝ թույլ արտահայտված: Կենդանու կրծքին ելուստ է թողնված, առջևի ոտքերի հատվածը թերի է, պոչի ծայրը՝ կոտրված, մարաքանդակի չափերն են՝ 4,74x3,00x1,33 սմ: Այս արձանիկի յուրաքանչյուր զույգ ոտքը ևս կերտված է որպես մեկ ամբողջություն (նկ. 39,5, աղ. IX,2): Հայաստանի վաղորոնգեղսության հնավայրերում սակավ չեն նաև շների արձանիկները (Նախճավանի և Էջ-

այլն: Հանդիպում են նաև կենդանիների քարակերտ արձանիկներ (Байбуртян, 1938, 257):

¹⁵¹ Թորոսյան, 1976, 59, 117, նկ. 10,1: Chelidze, Gogelia, 2004, 50, 54, 91, pl. XXXVII,1.

¹⁵² Մնացականյան, 1965, 98: Սարգսրյան, 2004, աղ. LXX,4,6,7: Есаян, 1980, таб. 3-5. Есаян, 2002, 185, рис. 1-4. Хачатрян, 1975, 80, рис. 41, второй ряд. Դևեջյան, 2001, 20, աղ. V,7: Badalyan, Avetisyan, 2007, 101, 103, pl. III,6,9. Исмаилов, 1978, 57, таб. XVIII,2-4. Есін, 1970, pl. 11,1.

¹⁵³ Пиотровский, 1955, 6.

¹⁵⁴ Абибуллаев, 1982, 141, таб. XXV,1-21.

միածնի Մոխրաբլուրներ, Հառիճ), որոնցից մեր օրինակին որոշակի նմանություն է ցուցաբերում Հառիճում գտնված կավաքանդակներից մեկը: Հետաքրքիր է, որ վերջինս գուրկ է կրծքի ելուստից, սակայն օժտված է վզին բացված անցքով¹⁵⁵:

Կենդանիների կավե երկու մանրաքանդակներ են գտնվել H₁₂ քառակուսու պեղումներով: Խոյի արձանիկի (աղ. IX,₃) մակերևույթը մոխրագույն է, միջուկը սև, իրանի չափերն են 4,65x3,00x1,7 սմ: Ուտքերը տարանջատված չեն, եղջյուրները և դունչը կոտրված են, ռունգներին քթունմից առաջ միջանցիկ անցք է փորված: Խոյերի փոքր կավարձանիկները կուր-արաքսյան մշակույթին բնորոշ տարրերից են: Դրանցից հայտնաբերվել են Ջրահովիտում¹⁵⁶, Հառիճում¹⁵⁷, հնարավոր է՝ նաև Սոս Խյույուքում¹⁵⁸: Խոզի արձանիկ է գտնվել հիշյալ քառակուսու կուր-արաքսյան անխառն շերտում: Մանրաքանդակո մակերևույթը սև ու մոխրագույն է, ականջները կախված են, հետույքը՝ ցցուն, փորը՝ կախ: Կենդանու իրանի չափերն են 4,68x3,30x2,45 սմ, ետևի ձախ ուտքը և առջևի ուտքերը կոտրված են, դունչը՝ պոկված (աղ. IX,₄): Մեր օրինակին նման է Մոխրաբլուրում հայտնաբերված խոզի արձանիկը¹⁵⁹, որը, թյուրիմացաբար, ներկայացվել է որպես իոյի մանրաքանդակ¹⁶⁰: Խոզի թծված կավաքանդակ է գտնվել Թեփեջիքում (Ծոփք)¹⁶¹:

Կուր-արաքսյան հնագիտական համալիրներում ստվար խումր են կազմում սայլանիվների թրծակավե մանրակերտերը, որոնք, հավանաբար, պատրաստված են սայլերի փայտե զանգվածեղ անիվների օրինակով¹⁶²: Սրանք, սովորաբար, կենտրոնում օժտված են հատած կոնաձև կամ գլանաձև ելուստներով՝ անվակունդերով, որոնց առանցքով միջանցիկ անցք է արված՝ սայլի զույգ անիվները միացնող սոնին անցկացնելու համար: Նման իրեր հայտնաբերվել են կուր-արաքսյան մշակույթային ընդհանրության զբաղեցրած ողջ տարածքում՝ հյուսիսում հասնելով Դադստան¹⁶³, հարավում՝ Ուրմիա լճի ավազան¹⁶⁴: Ի դեպ,

¹⁵⁵ Хачатрян, 1975, 77, рис. 37, средний ряд, слева.

¹⁵⁶ Есаян, 1980, таб. 7, с. 8.

¹⁵⁷ Хачатрян, 1975, 77, рис. 37, средний ряд, справа.

¹⁵⁸ Sagona et al, 1996, 46, 49, fig. 12, 13.

¹⁵⁹ Արրղարյան, 2004, 234, 462, աղ. I.XXXVI, 8, նկ. 55, 8:

¹⁶⁰ Есаян, 1980, таб. 7, 2.

¹⁶¹ Esin, 1970, pl. 10, 4.

¹⁶² Есаян, 1960, 142. Есаян, 1966, 131.

¹⁶³ Мунчаев, 1961, 98-99, рис. 26. Гаджиев, 1991, 182, 211, рис. 60, 1, 2.

Հայկական լեռնաշխարհի և հարակոց տարածաշրջանների հնագույն բնակավայրերում պեղումներով հայտնաբերվել են նաև սայլերի մանրակերտեր¹⁶⁵:

Ազարակում հայտնաբերված սայլանիվների մանրակերտերը (նկ. 39,6,7, 40,4,5, աղ. X) տարրեր չափերի են: Ամենամեծ կավե անիվը գտնվել է I₁₁ քառակուսու հարավարևմտյան հատվածում, 2,65 մ խորությունում, կուր-արաքսյան մոխրաշերտում, կոտրված վիճակում (աղ. X,1): Դրա վերականգնվող տրամագիծը 7,3 սմ է, անցքի տրամագիծը՝ 0,8 սմ, հաստությունը՝ 4,4 սմ: Այն ունի դեղնադարչնագույն մակերևույթ, մեկ կողմը մրոտ է: Սրան կոց ի հայտ է եկել չափերով ավելի փոքր, համագույն մակերևույթով և նույնպես մրոտ կողմով մեկ այլ անվիկ: Այս անվիկի տրամագիծը 3,45 սմ է, անցքի տրամագիծը՝ 0,5 սմ, հաստությունը՝ 1,8 սմ: Ամենափոքր անվիկը հայտնաբերվել է H₁₁ քառակուսում, N 2 կլոր կացարանի արևելյան պատին կից՝ դրսի կողմից: Վերջինիս մակերևույթն ունի սև ու մոխրագույն երանգներ, տրամագիծը՝ 3 սմ է, անցքի տրամագիծը՝ 0,45 սմ, հաստությունը՝ 1,45 սմ (նկ. 39,7, աղ. X,7): Հիշյալ քառակուսուց գտնվիլ է նաև սայլանվի թերի մանրակերտ, որի վերականգնվել տրամագիծը, հավանաբար, մեծ է 5 սմ-ից, իսկ O₇-ում հայտնաբերված կավե անվիկի տրամագիծը 4,3 սմ է: Գտածոների մեջ առկա են երկու անվիկներ (աղ. X,4,5), որոնք ունեն միևնույն պարամետրերը (D=4,1 սմ, d=0,5 սմ) և միայն հաստությամբ են չնչին չափով տարբերվում (2,30 սմ և 2,15 սմ): Հնարավոր է, որ դրանք միևնույն սայլի անիվներն են: Ըստ երևույթին սիլալ չի լինի, եթե 5 սմ և ավելի տրամագծով անիվները պայմանականորեն համարվեն մեծ, իսկ 5 սմ-ից պակաս տրամագիծ ունեցող անվիկները՝ փոքր:

դ) Օջախի կավաթուրծ հենակները կուր-արաքսյան մշակույթի ամենաբնորոշ տարրերից են: Առփիրաբար, դրանք պայտածև են, սակայն հանդիպում են նաև կենդանակերպ, եղջերավիր, օղակածև, գլանածև և այլ տիպի հենակներ¹⁶⁶: Համարվում է, որ պայտածև հենակներն ի հայտ են գալիս կուր-արաքսյան մշակույթի վաղ փուլում¹⁶⁷: Օջախի հենակները, գեղարվեստական-գեղագիտական ընկալման տեսանկյու-

¹⁶⁴ Burton Brown, 1951, 47-49, fig. 13, 1438, 1453. Burny, 1961, 148, 153, pl. LXXIV, 62. Այստեղ հարկ է փոքրիկ ուղղում կատարել, քանի որ սայլանվի մանրակերտը որչալ աշխատությունում սխալմամբ ներկայացված է որպես «իլիկի գլուխ»:

¹⁶⁵ Burton Brown, 1951, 48-49. Хачатрян, 1975, 73-74, 77, рис. 35, 37.

¹⁶⁶ Կուր-արաքսյան օբյեկտների հենակների տիպաբանության վերաբերյալ տես Խան-զադյան, 1967, 65-67: Օրթոնիկիզե, 2004, 93-99.

¹⁶⁷ Глonti, Джавахишвили, 1987, 82.

նից, կարող են դիտվել նաև ճարտարապետական համալիրից անկախ որպես կիրառական արվեստի առանձին ստեղծագործություններ, թեև գործառնությամբ սրանք անխզելիորեն կապված էին օջախների հետ, իսկ վերջիններն իրենց որոշակի տեղն ունեին բնակելի և պաշտամունքային շինություններում¹⁶⁸: Օջախի հենակներն օժտվում էին ինչպես մարդկանց արձանիկներով, այնպես էլ կենդանիների քանդակներով: Օրինակ, Պուլուրում հայտնաբերված օջախի պայտաձև հենակը լրացված է մարդակերպ կուռքի գլխով¹⁶⁹: Մարդակերպ ելուստով հենակներ են գտնվել Ամիրանիսգորայում¹⁷⁰, Գառնիում¹⁷¹, Անուշավանում¹⁷²: Շարժական օջախները, կենտրոնական ելուստից ցած, օժտված էին կիսագնդաձև կանթերով: Հատկապես լայնորեն տարածված էին այնպիսի հենակները, որոնք ավարտվում էին խոյերի գլուխներով: Նման խոյազուլիս հենակներ հայտնաբերվել են Շենգավթում¹⁷³, Ապարանի բերդում (Ապարան I)¹⁷⁴, Գեղարոտում¹⁷⁵, Վանաձորի Քոսի ճոթեր բնակատեղում¹⁷⁶, Հառիճում, Ամասիայում¹⁷⁷, Կառնուտում¹⁷⁸, Քեթիում¹⁷⁹ և այլուր: Ագարակում հայտնաբերվել են խոյազուլիս վերջավորություններով պայտաձև հենակների բազմաթիվ ռեկորմներ:

H₁₂ քառակուսու հարավարևելյան հատվածում գտնվել է օջախի հենակի խոյազուլիս վերջավորություն: Խոյաքանդակը ռավականին նրրագեղ է, աչքերի տեղերում արված են փոքր փոսիկներ, դունչը երկնիստ անկյան ձև ունի, պահպանված են կոր եղջյուրների հիմքերը, ռունգների մեջ անցք է արված (նկ. 41, աղ. XI,₁)¹⁸⁰: Այս խոյազուլիս հենակը պատրաստված է կավից, թրծված է, մակերևույթը կարմիր է, միջուկը՝ սև: H₁₁ քառակուսուն ի հայտ է եկել հենակի վերջավորության

¹⁶⁸ Նախկինում ընդգծվել է նաև կուր-արաքսյան օջախների թե՛ տնտեսական (կենցաղային), թե՛ ծիսա-պաշտամունքային նշանակությունը. տե՛ս Арешян, 1981, 93, 96. Օղտոկիզե, 2004, 97.

¹⁶⁹ Коşay, 1970, phot. 4.

¹⁷⁰ Кушнарева, 1993, 55, рис. 19,₂₆.

¹⁷¹ Խանգաղյան, 1969, 68-69, աղ. XVI:

¹⁷² Badalyan, Avetisyan, 2007, 38-39, pl. II,_{3,4}.

¹⁷³ Байбуртян, 52-53, рис. 15. Արդարյան, 1967, 175, աղ. XLIX,₃:

¹⁷⁴ Badalyan, Avetisyan, 2007, 45, pl. III,₇.

¹⁷⁵ Бадалян, Смит, 2008, 51-52, 64, таб. IV,₉. Badalyan et al, 2008, 56, 59, fig. 13.

¹⁷⁶ Դևեջյան, 2001, 36, նկ. 8: Խանգաղյան, 2002, 3-5, աղ. I,₂, II:

¹⁷⁷ Хачатрян, 1975, 78-80, рис. 39-41.

¹⁷⁸ Бадалян, 1985, 92-94, таб. 1, 2.

¹⁷⁹ Петросян, 1989, 24, таб. 14,₁.

¹⁸⁰ Անցքի հատվածը կտրված է, ռունգներից, ըստ երևույթին, օղ է կախված եղել:

վերին հատվածը, որի վրա պահպանվել է խոյի ոլորված մեկ եղջյուրը (աղ. XI,₂): Մեկ այլ հենակի եզրային մասը գտնվել է H₁₂ քառակուսում, կուր-արաքսյան անիառն շերտում: Արա դիմային քանդակն արված է սիլեսմատիկորեն, գազաթով ցած երկու եռանկյունների օգնությամբ, որոնց մի կողմն ընդհանուր է և իրար հետ կազմում են երկնիստ անկյուն (աղ. XI,₃): Այլ մանրամասներ չեն տրված: I₁₁, I₁₂, H₁₁ և այլ քառակուսիներում հայտնաբերվել են նաև օջախի պայտածն հենակների աղեղնածն մասերի, ոտքերի¹⁸¹ և կենտրոնական ելուստների բեկորներ (աղ. XI,_{4,5}), հատվածներ խոյերի գլուխներից և եղջյուրներից: Խոյաքանդակներից մեկի եռանկյուն բրգածն գլխի վրա պահպանվել է մեկ ականջը, մակերևույթը փայլատ նարնջագույն է (205/2004): Թերի հենակներից մեկի սուր անկյուն կազմող հատվածը՝ կենտրոնական ելուստով հանդերձ, նստած դիրքով մարդ է հիշեցնում (77/2002): Կողը փայլեցված է՝ բաց շագանակագույն, աստառը և միջուկը մոխրագույն են: Վերջինիս գուգահեռը հնարավոր է փնտրել Շիրակավանում¹⁸²:

Օջախի կենդանակերպ շարժական հենակները քառոտանի են՝ ցլի մարմնով և եղջյուրներով: Մեջքի կողմում դրանք օժտված են կիսագնդածն կանթով, որից բռնելով հենակը կաբելի է տեղաշարժել: Այդպիսի մի հենակ գտնվել է Ագարակում, H₁₁ քառակուսու պեղումներով: Այն խիստ թերի է, մասամբ պահպանվել է մեջքի և հետևի ոտքերի հատվածը: Նեղ և երկար ելունդի ձևով ընդգծվում է մեջքից սկսվող և ցած իջնող պոչը (աղ. XII,₁): Նման հենակները շենգավիթյան մշակույթին բնորոշ տարրերից են¹⁸³: Մեկ այլ տեսակ են կազմում եղջերավոր հենակները: Սրանք ոտքեր չունեն, ուղղանկյուն պրիզմայածն իրանը մի կողմում ավաղտվում է ղեպի վեր ուղղված եղջյուրներով, որոնք ցլի ոճավորված մարմին են հիշեցնում: Նման շարժական հենակ հայտնաբերվել է Ագարակում, H₁₂ քառակուսուց (նկ. 42): Վերջինս թերի է, եղջերավոր հատվածը բացակայում է, սակայն իրանի վերին հատվածում պահպանվել է կիսագնդածն կանթի հիմքը (աղ. XII,₂): Ենթադրվում է,

¹⁸¹ Սրանցից մեկը գտնվել է I₁₂ քառակուսում, օժտված է փայլատ նարնջագույն մակերևույթով և հարթակին կպած ելունդ ունի: Այլ տիպի ելունդներով են օժտված Կառնուտի խոյագլուխ հենակներից մեկի պատերը՝ ներսի կողմից (կենտրոնում և եզրային հատվածներում), որոնց վրա հենվել են օջախին դրված անոթները (Бадальян, 1985, 92, 94, таб. 2):

¹⁸² Թորոսյան և այլք, 2002, 14, աղ. IV,₁₄: Մոսկով. հոշուաւ առարկան հարկավոր է դիտել շրջված վիճակում:

¹⁸³ Байбуртян, 2011, 52-53, рис. 14. Куфтин, 1944, 104-106, рис. 59. Սարղադյան, 1967, 174-175, աղ. XLIX,_{7,8}: Խանգադյան, 1967, աղ. VII, երրորդ շարք, ձախից: Есаян, 1980, таб. 15,₁₋₆.

որ նկարագրված եղջերավոր հեմակները, հիմնականում, տարածվել են Հայկական լեռնաշխարհի սահմաններում¹⁸⁴, սակայն դրանց այլևայլ տարատեսակները հայտնի են նաև հարևան տարածաշրջաններում¹⁸⁵:

Միանգամայն այլ տիպ են կազմում օջախի կուր-արաքսյան օղակաձև հեմակները: Սրանց երկու տարատեսակները հայտնաբերվել են Ագարակում: Առաջինը գտնվել է I₁₁ քառակուսում, N 1 կլոր կացարանի կցակառույցի սահմաններում, կոտրված և շրջված վիճակում¹⁸⁶: Ուղղահասյաց հատույթում այն կոր գագաթներով եռանկյան տեսք ունի, մի կողմում տափակ է և զնալով հաստանում է կենտրոնում բացված շրջանաձև անցքի ուղղությամբ (աղ. XII,₃): Հեմակի վերականգնվող տրամագիծը $\approx 29,2$ սմ է, բացվածքի տրամագիծը (կենտրոնում) $\approx 15,7$ սմ: Ինչպես տեսնում ենք, սա նախատեսված է եղել ոչ մեծ օջախի համար: Ձևով այս հեմակի մոտավոր գուգահեռները հայտնի են Սև բլուրից¹⁸⁷ և Արևիկից¹⁸⁸, իսկ Հառիճում հայտնաբերված օղակաձև հեմակը չափերով մոտ է մեր օբիեկտին¹⁸⁹: Օղակաձև հեմակի մյուս տեսակն է հայտ է եկել H₁₂ քառակուսու պեղումներով: Դրա ստորին հասվածը լայն է և հարթ, իսկ վերինը՝ նեղ ու դեպի ներս թեքված: Արտաքին կողք թույլ ուռուցիկ է, իսկ ներսի կողմը՝ գոգավոր: Սա ավելի փոքր չափի է, քան առաջինը, սակայն ավելի հաստ է (աղ. XII,₄): Մոխրաբլուրում հայտնաբերվել է նման մի օջախ, որը մի քանի անգամ ավելի մեծ է մեր օբիեկտից, իսկ մակերևույթը գարդաբանված է¹⁹⁰: Հնարավոր է, որ օջախների հետ է կապվում անհայտ նշանակության առարկաներից մեկը (ծիսական հալճ): Այն թույլ ուռուցիկ վեցանիստ թռակավե սալիկ է (աղ. XIII,₁): Գտնվել է H₁₂ քառակուսու հյուսիսարևելյան մասում, N 2 կլոր կացարանի կցակառույցի հյուսիսարևմտյան անկյանը կից, կուր-արաքսյան եռանկյուն պրիզմայաձև թերի պատվանդանի հարևանությամբ:

¹⁸⁴ Խանգաղյան, 1967, 67:

¹⁸⁵ Мунчаев, 1961, 122-123, рис. 42, 43. Orjonikidze, 2004, 94, fig. 2.

¹⁸⁶ Ի դեպ, մ.թ.ա. III հազարամյակի մոխրաշերտին անմիջականորեն հաջորդող այս առանձնացված հատվածից (խառը շերտ) հայտնաբերվել են թռակավե 4 արձանիկ, սայլանվի 2 մանրակերտ, ռլրպր թռակավե տորածն գլուխ և կուր-արաքսյան մշակույթին բնորոշ այլ առարկաներ (Թումանյան, 2002, 17):

¹⁸⁷ Խանգաղյան, 1967, 65-66, նկ. 17, աջից:

¹⁸⁸ Ханзадян, 1969, 164, рис. 5.

¹⁸⁹ Хачатрян, 1975, 71, рис 32.

¹⁹⁰ Խանգաղյան, 1967, 65, աղ. XV:

ե) Կանգնակները, պատվանդանները, տակդիրները: Թրծակավե առարկաների այս խումբը գործառնությամբ կապված է խեցանոթների հետ: Սեղմված-գլանաձև կավաթուրծ կանգնակը հայտնաբերվել է H₁₁ քառակուսում, N 2 կլոր կացարանի կենտրոնական հատվածում, ուշ ժամանակաշրջանի հենապատի քարերից մեկի տակ, որտեղ այն օգտագործված էր որպես «պոչկապ» (նկ. 19)¹⁹¹: Հոծ իրանով կանգնակի մակերևույթը և միջուկը դեղնադարչնագույն են, ռարծրությունը ≈16 սմ է, հիմքի (մեծ) տրամագիծը՝ 10,2 սմ (աղ. XIII,₂): Սրա զուգահեռը հայտնի է Ծոփքից, որտեղ Հաստեք գյուղի մերձակայքում հայտնաբերվել է ավելի փոքր թրծակավե նման մի կանգնակ¹⁹²: Քննարկվող իրին չափերով ավելի մոտ է Շիրակավանում գտնվածը, որն օժտված է սնամեջ առանցքով¹⁹³: Իսկ Ագարակի կանգնակի ճշգրիտ գուգահեռը, անշուշտ, կարելի է համարել Օձնիում (Թոեղք) հայտնաբերված կավակերտ առարկան, որն իր ձևով և չափերով դիտարկվող նմուշի նմանակն ասես լինի¹⁹⁴: Մեր օրինակին չափերով քիչ է զիջում նաև Յանըղթեփեից հայտնի կանգնակը, որը, սակայն, գտնվել է ուշադնձեքարեղարյան շերտում¹⁹⁵: Դադստանում գլանաձև կանգնակներն ի հայտ են գալիս վաղ բրոնզի դարաշրջանում¹⁹⁶:

Ագարակում, ինչպես ասվեց, գտնվել են նաև թրծակավե պատվանդաններ: Դրանցից մեկը կարելի է վերականգնել որպես եռանկյուն պրիզմայաձև սնամեջ արկղիկ՝ կողքերին ռացված կլոր անցքերով: Այս իրը, ըստ երևույթին, միաժամանակ կարող էր ծառայել որպես խնկանոթ կամ ռուրանոթ: Նման իրերը լայն տարածում չունեն Հայկական լեռնաշխարհի վաղբրոնզեդարյան հուշարձաններում: Քննարկվող օրինակին որոշ նմանություն են դրսևորում Առխարալուրի և Գեոյթեփեի (Պարսկահայք) կուր-արաքսյան շերտերում հայտնաբերված թրծակավե «արկղիկները»¹⁹⁷: Երկու այլ առարկաներ պատվանդան են համարվում զուտ պայմանականորեն: Երկուսն էլ կավաթուրծ, անկանոն պրիզմայաձև թերի իրեր են, որոնց ամբողջական տեսքը դժվար է վերականգնել (աղ. XIII,_{3,4}): Սրանք հայտնաբերվել են H₁₂ քառակուսում,

¹⁹¹ Հյուսիսային (ձախակողմյան) հենապատի ամենաբարձր քարի տակ, նկարում ցույց է տրված սլաքով:

¹⁹² Kiliç Kökten, 1972, 3, pl. 8, 88.

¹⁹³ Թորոսյան և այլք, 2002, 14, աղ. II, 5:

¹⁹⁴ Жоржикашвили, Гогодзе, 1974, 35, таб. 25, 71.

¹⁹⁵ Burney, 1962, 150, pl. XLIII, 8.

¹⁹⁶ Гаджиев, 1991, 141-143, рис. 30, 1; 31, 9, 10.

¹⁹⁷ Sagona, 1984, pl. XIX, 6. Burton Brown, 1951, pl. III, 9 IV, 8.

մեկը հարավարևելյան հատվածից, մյուսը՝ հարավարևմտյան: Առաջինը գտնվել է կուր-արաքսյան շերտում, երկրորդը՝ իսառը շերտում, սակայն, հիշյալ մշակութային պատկանող արտեֆակտերի միջավայրում: Այսպիսով, արտաքինից հարթ նիստեր, ռաց սրճակաթնագույն մակերևութ, ռաց կարմրադարչնագույն աստառ և մոխրագույն միջուկ ունեցող երկրորդ ամարկայի մշակութային պատկանելության վերաբերյալ նույնպես կասկածներ չկան, միայն աստառի անհարթությունները և պատերի թարակությունը հուշում են, որ քննարկվող օրինակը դժվար թե կաղապար լինի: Փայլատ աղյուսագույն մակերևութով, հարթ նիստերով, ձեռածեփ նման մի ամարկա հայտնաբերվել է նաև N₈ քառակուսու պեղումներով:

Պատվանդանների մեկ այլ տարատեսակ են կազմում անոթի հենակները կամ «թաղարատիպ հենակ-պատվանդանները», որոնք ծառայել են կավամանների համար կայուն դիրք ապահովելուն և լայնորեն տարածված էին կուր-արաքսյան մշակութային աշխարհում: Դրանք, սովորաբար, ունեն սև փայլեցված մակերևութ, լայն ու հարթ հատակ, հատած կոնաձև կամ գլանաձև հիմք (իրան)՝ երբեմն, ուռուցիկ կողապատերով և կտրուկ դեպի վեր լայնացող պսակ: Պսակի և իրանի միացման հատվածում, հաճախ, ամկա են կիսազնդաձև կամ երկթեք խուլ կանթեր¹⁹⁸: Հենակ-պատվանդանների իրանի կամ իրանի կողապատերը, հաճախ, գարդարանված են ռեկյալ զծերի ժապավենով¹⁹⁹, ներճկված փոսիկներով²⁰⁰, երկրաչափական պատկերներով²⁰¹ կամ վերջին երկու գարդապատկերների համադրությամբ²⁰²: Մի շարք դեպքերում հիշյալ հենակները հայտնաբերվել են իրենց վրա դրված ինքնանոթների հետ միասին²⁰³: Չի բացառվում, որ դրանց մեջ փայտածուխ է լցվել, վրան դրված ինքնանոթի պարունակությունը տաք պահելու նպատակով: Կարծիք է հայտնվել, որ հենակ-պատվանդանները նախատեսված են եղել համեմատաբար նեղ մատուկով անոթների համար²⁰⁴:

¹⁹⁸ Աարդարյան, 1967, 189, աղ. LII,1: Խանգաղյան, 1969, 69-70, նկ. 68, աղ. 20, վերինը: Խանգաղյան և այլք, 1973, 20, նկ. 18,2. Абибуллаев, 1982, 138, таб. XXIV,4-6. Бадалян, 1984, 232-233, рис. 2,7. Badalyan, Avetisyan, 2007, 140, 143, pl. VI,4, 5, 7, 8. Կանթերը կարող են լինել նաև իրանի (հիմքի) վրա:

¹⁹⁹ Խանգաղյան, 1979, 43, աղ. IX,1:

²⁰⁰ Խանգաղյան, 1979, աղ. IV,5:

²⁰¹ Խանգաղյան, 1967, աղ. XVIII, վերինը: Թորոսյան և այլք, 2002, 14, աղ. IV,7:

²⁰² Исмаилов, 1978, 43-44, таб. XII,5,7.

²⁰³ Խանգաղյան, 1979, 27-28, 37-39, 48, նկ. 23,1, 24, ծախից, 41, 44, 46, 63, աղ. IV,5, IX,1:

²⁰⁴ Исмаилов, 1978, 43, таб. XII,1-7.

Ազարակուն հայտնաբերվել են քննարկվող տիպի հենակների մի քանի թերի օրինակներ, որոնցից ոչ մեկի վրա կանթը չի պահպանվել: Դուրս փոխած գոգավոր պսակի մի բեկոր՝ բացվածքի ≈ 15 սմ վերականգնվող տրամագծով, գտնվել է L_{11} քառակուսու պեղումներով: Սև փայլեցված մակերևույթով ու աստառով և սև միջուկով այս պսակի ներսի եզրը ժապավենածն գարդաբանված է անկյուն կազմող գծիկներով, որոնք կատարված են սեղմումով, նախքան թոծելը (աղ. XIV,₁): Սև փայլեցված մակերևույթով կավաթուրծ հենակի վերին մասի ավելի մեծ մի բեկոր գտնվել է L_9 քառակուսուց: Այս պսակը ներսից նույնպես գոգավոր է, դարչնագույն, եզրը՝ սրվող: Դատելով վերականգնվող տրամագծից (38 սմ), պսակի բուն լայնությունից (7,8 սմ) և խեցու հաստությունից, սա բավականին խոշոր հենակ է (236/2002): Ազարակուն ի հայտ եկած նմանօրինակ մեկ այլ պսակի վերականգնվող տրամագիծը ≈ 19 սմ է, լայնությունը՝ 4,2 սմ: Պսակը գոգավոր է, դուրս փոխած, սրվող եզրով, Մակերևույթը սև փայլեցված է, աստառը՝ ղեղնավուն (158/2002):

Խեցանոթները, գուլցե և այլ առարկաներ, տեղավորվել են նաև տակղիրների վրա, որոնք շրջանառվում են նաև «եռոտանի պատվանդաններ» անունով²⁰⁵: Սրանք սնամեջ, առանց հիմքի հատած եռանիստ բուրգի տեսք ունեն: Նման տակղիրները նույնպես ընդհանրապես կուր-արաքսյան ինքնագործությանը: Դրանցից հայտնաբերվել են Շրեշ ըլուրում, Շենգավթում, Մոխրաբլուրում, Դվինում²⁰⁶, Գառնիում²⁰⁷, Հառիճում²⁰⁸ և այլուր: Դրանք բարձրարվեստ հորինվածքներ են, ըստ երևույթին, նախատեսված մեկ կողմից ղիտելու համար, որը և, սովորաբար, խնամքով գարդաբանված է²⁰⁹: Նման իրերը հավաստում են իրենց ստեղծողների գեղագիտական նուրբ ճաշակը: Դրանք, փաստորեն, հղացվել են որպես առանձին գեղարվեստական ստեղծագործություններ և արժևորվել են անկախ իրենց գործառնական նպատակից:

Ազարակուն տակղիրների ամրողջական օրինակներ ղեռ չեն հայտնաբերվել, սակայն գտնվել են սրանց բազմաթիվ բեկորներ: Դրանք

²⁰⁵ Խանգաղյան, 1967, 67: Ի դեպ, հայտնի են նաև քննարկվող առարկաների քառոտանի օրինակներ. տե՛ս Хачатрян, 1975, 72-73, рис. 33, верхний.

²⁰⁶ Байбуртян, 2011, 49, рис. 13 (լուսանկարված է շրջված դիրքով – Գ.Թ.). Խանգաղյան, 1967, 67-68, աղ. VII, աջից, XVIII, ստորինը:

²⁰⁷ Խանգաղյան, 1969, 70, աղ. XX, ստորինը:

²⁰⁸ Хачатрян, 1975, 72-73, рис. 33.

²⁰⁹ Կան նաև չգարդաբանված օրինակներ. տե՛ս Խանգաղյան, 1969, 70, աղ. XX, ստորինը:

կարելի է դասել երկու տիպի: Առավել բազմաքանակ են առաջին տիպին պատկանող արտեֆակտերը: Վերջիններիս կողմնային նիստերի ստորին եզրերը մոտ են հիմքի հարթությանը, իսկ երկնիստ անկյուններով առաջացած և «ուտքերի» դեր կատարող կողերի ստորին հատվածում եռանկյունաձև փոքր հարթակներ են առաջանում, որոնց վրա էլ հենվում են I տիպի եռոտանի պատվանդանները: Դրանցից մեկը փայլեցման հետքերով սև մակերևույթով, դարչնագույն աստառով ոտքի բեկոր է, որի մի կողմը զարդաբանված է (145/2002): Եռոտանի պատվանդանի ոտքի մեկ այլ բեկոր ունի սև մակերևույթ՝ փայլեցման հետքերով, բաց վարդագույն աստառ (363/2001): Մյուս թերի տակդիրն ունի սև մակերևույթ՝ փայլեցման հետքերով, դեղնակարմրավուն աստառ, թերի պահպանված նիստերից մեկը պատկերագարդ է (244/2002): Ուշագրավ է H₁₂ քառակուսում գտնված տակդիրը: Այն ունի ընտիր կոկված-փայլեցված սև մակերևույթ, գորշ աստառ, մեկ նիստը զարդաբանված է (ադ. XIV₂): Հաջորդ եռոտանի պատվանդանը նախորդից ավելի կոպիտ է, հաստախեցի և անփույթ է պատրաստված: Դրանից նույնպես մեզ են հասել վերին և կողմնային երկու նիստերը, որոնցից մեկը այժմ փայլատ սև մակերևույթը զարդարանված է (388/2001): Գտնվել է սև փայլեցված մակերևույթով և դարչնագույն աստառով ևս մեկ տակդիրի պատկերագարդ նիստի ոչ մեծ ինքնարեկոր (192/2002): Առաջին տիպին դասվող մեկ ուրիշ տակդիրից պահպանվել է նիստերից մեկը հատվածը, որն ամրոջջությամբ պատկերագարդ է: Այն օժտված է սև փայլեցված մակերևույթով և մոխրագույն աստառով, համեմատաբար նրբախեցի է (381/2001): Երկրորդ տիպի տակդիրներն ունեն ոտքեր, որոնց ստորին հատվածը սուր է (քիչ կլորացող), եռանիստ բուրգի գագաթի նման, ավելի պատկերավոր՝ եղջերաձև: Մրանց կողմնային նիստերի ստորին եզրերը կամարաձև հեռանում են հիմքի հարթության մակարդակից և անհամեմատ բարձր են I տիպի տակդիրների համապատասխան հատվածներից: II տիպի եռոտանի պատվանդանները ներկայացված են ոտքերի երկու ղեկորներով (543/2001, 209/2004): Առաջինն օժտված է դարչնագույն փայլեցված մակերևույթով և աստառով, երկրորդի սև մակերևույթին փայլեցման հետքեր կան, աստառը կրկրն դարչնագույն է: Բոլոր տակդիրներն ունեն մեկ ընդհանրություն ևս՝ կոպիտ հարդարված աստառ, որը, ակնհայտորեն, նախատեսված չի եղել դիտելու համար:

ր) Խեցանոթները

Վերը խոսք գնաց կուր-արաքսյան մշակույթի տարրեր տիպական գծերի և առանձնահատկությունների մասին, այդ շարքում ընդգրկվեցին նաև խեցեղենի որոշ տեսակները: Բայց որքան էլ հարուստ և գիտական առումով շահեկան ու հրապուրիչ լինեն նախորդ էջերում ուսումնասիրված տարարնույթ հավաքածուները, խնդրո առարկա այս հգոր մշակույթի ամենարնորոշ կողմը կազմում են խեցանոթները: Ասվածը, թերևս, կարող է վերաբերել նաև հնագիտական այլ մշակույթների, սակայն հետազոտողներն այնքան են կարևորում խեցեղենի դերը հատկապես քննարկվող երևույթը ընդհանրապես, որ «կուր-արաքսյան (շենգավիթյան)» եզրի հետ միասին գործածվում է նաև «կարմրասև կոկված խեցեղենի»²¹⁰ մշակույթ անվանումը: Մետաղական փայլի աստիճանի կոկված կարմիր և առավելապես սև մակերևույթը հիշյալ մշակույթին պատկանող ամենեղենի ամենարնորոշ առանձնահատկությունն է²¹¹: Կուր-արաքսյան խեցանոթները ընդհանրապես օգտագործվում են նաև «վարդագույն աստառով սև փայլեցված խեցեղեն»²¹² կամ «սև խեցեղեն՝ ռաց գույնի աստառով»²¹³ արտահայտությունները: Իսկ «անդրկովկասյան-արևելաստուպիական վաղ բրոնզի դարաշրջանի խեցեղեն»²¹⁴ անվանումը դժվար է հաջողված համարել և հարկ է փոխարինել միանգամայն համարժեք, ռայց՝ ավելի ճշգրիտ՝ «Յայկական լեռնաշխարհի վաղորոնգեդարյան խեցեղեն» արտահայտությամբ: Ձեռածեփ ու նրրագեղ սև փայլեցված ամենեղենը համարվում է կուր-արաքսյան մշակույթի գլխավոր տարրը²¹⁵ կամ «հատկանիշը»²¹⁶: Իհարկե, ճիշտ զարդարանված և ռազմածև վաղորոնգեդարյան սպասքը չէր կարող իրականում միագույն լինել: Ամենուրեք հանդիպում են նաև նարնջագույն, մոխրագույն, դեղնավուն ու կարմրավուն փայլեցված (երբեմն՝ փայլատ) մակերևույթով անոթներ, որոնց աստառը ոչ միայն վարդագույն է, այլև՝ կարմիր ու դեղին, սև ու մոխրագույն, գորշ ու դարչնագույն: Խեցանոթները, սովորաբար, օժտված

²¹⁰ Braidwood, Braidwood, 1960, 358.

²¹¹ Мунчаев, 1961, 79. Кушнарєва, 1993, 52. Археология, 1994, 46.

²¹² Куфтин, 1941, 111.

²¹³ Куфтин, 1944, 76.

²¹⁴ Burney, 1958, 164-165.

²¹⁵ Кушнарєва, Чубинишвили, 1970, 136.

²¹⁶ Кушнарєва, 1993, 52: Այստեղ, ըստ երևույթին, ճիշտ կլիներ գործածել «տիպարանական տարր» հասկացությունը:

են իսկ ինքնատիպ կիսագնդաձև կամ շուրթից սկսվող երկթեք կանթերով:

Ազարակում, ինչպես և Հայկական լեռնաշխարհի վաղբրոնզեդարյան ցանկացած այլ բնակելի համալիրում, խեցանոթների բեկորները ամենաբազմաքանակ և զանգվածային խումբն են կազմում: Բավական է ասել, որ դաշտային հնագիտական աշխատանքների ընթացքում միայն առաջին տարվա պեղումներով, հուշարձանի տարբեր շերտերից հայտնաբերված խեցատների թիվը հասնում է 39300 միավորի, որոնց զերակշիռ մեծամասնությունը կազմում են կուր-արաքսյան խեցաբեկորները: Կան նաև մի քանի ամբողջական կամ ամբողջացող խեցանոթներ, որոնք հայտնաբերվել են անտիդ (in situ)՝ անհրաժեշտ կամ ճզմված վիճակում: Պեղումներով ի հայտ եկած խեցատները պատկանում են տարատեսակ խեցամանների՝ տապակարան-սաջերի, քրեղանների, թասերի, կաթսայաձև կավանոթների, կճուճների, գավաթների ու գավերի, սափորների, խփերի և այլն:

Տապակարաններից մեկը սաղր աման է և ունի փայլատ մոխրագույն, կոպիտ հարդարված մակերևույթ, ղեղնավուն աստառ, պոնկի վոա՝ ելունդ: Կողապատի բարձրությունը հատակի հետ միասին ընդամենը 1,45 սմ է, իսկ մինչև ելունդի գագաթը՝ 2,6 սմ (աղ. XIV,3): Գտնվել է սև մակերևույթով և ղեղնաղաբջնագույն աստառով սաջի մեկ այլ բեկոր (աղ. XIV,4): Վերջինիս բարձրությունը 6,3 սմ է: Մեկ այլ տապակարան-սաջ հաստախեցի է, սև փայլատ, կոպիտ հարդարված մակերևույթով, մոխրագույն հարդարված աստառով, 7,3 սմ բարձրությամբ կողապատերով՝ հատակը ներառյալ (24/2005): Հիշյալ գտածոներից ոչ մեկը զարդաբանված չէ: Ելնդավոր պոունկով սաջ է հայտնաբերվել Ամիրանիսգորայից²¹⁷: Տապակաբան-սաջերը տարածվել են Շենգավթից ու Նախճավանի Մոխրաբլուրից մինչև հյուսիսարևելյան Կովկաս²¹⁸ և այլուր: Այս տիպի ամանները կուր-արաքսյան մշակույթ են հասել, անցնելով իրենց զարգացման փուլը հնագիտական նախորդ դարաշրջանում. պեղումներով սաջեր են հայտնաբերվել նաև պոնձեքարեդարյան հուշարձաններից: Մասնավորապես, Թեղուտում գտնված օրինակներից մեկի եզրը նույնպես օժտված է հավելադիր ելունդով²¹⁹, իսկ Կղզյակ բլուրում հայտնաբերված խեցաբեկորը զուրկ է դրանից²²⁰:

²¹⁷ Чубинишвили, 1963, 29, рис. 6,7.

²¹⁸ Мунчаев, 1961, 121, рис. 41; таб. XVIII. Абибуллаев, 1982, 132, таб. XXI,3-8. Խանգաղյան, 1967, 62, 64, աղ. XIII:

²¹⁹ Թորոսյան, 1976, 82, տախտ. V,5:

²²⁰ Սարդարյան, 1967, 141, աղ. XXXIX,1:

Քերեղանները մի քանի տիպի են և ներկայացված են կավամանների պսակների կամ եզրերի բեկորներով, սակայն քննարկվող օրինակներում կան նաև բեկորներ, որոնց համար ենթադրվում է շուրթի գոյությունը, այսինքն, ոչ բոլորն են անվոգ: Վզով օժտված նման ամանները մենք դասում ենք քերեղանների առաջին տիպին: Ի դեմս ներձկված վզով, սև փայլեցված մակերևույթով ու դարչնագույն աստառով, զարդաբանված ուսով խեցատներից մեկի, հնարավոր է, մենք ունենք այս տիպի քերեղան (աղ. XV,₁): Վերջինիս վզի հիմքում նշմարվում է կանթի հետքը: Նշված տիպի քերեղանի մի այլ խեցաբեկոր օժտված է փայլեցված սև մակերևույթով ու բաց շագանակագույն աստառով, զարդաբանված վզին պահպանվել է կանթի հագիվ նշմարվող մի հատված (աղ. XV,₂): Մեկ ուրիշ խեցատ այս տիպին է դասվել պայմանականորեն: Վերջինս ունի սև փայլեցված մակերևույթ, ուսը զարդաբանված է կառնուսայան ոճով, ուսից իրանին անցման տեղում պահպանվել է կիսազնդածև կանթի հետքը (33/2002): I տիպի քերեղանների ուսերի տրամագիծը $\approx 22-27$ սմ է, դրանք բոլորն էլ օժտված են կանթով, երկրորդ տիպի քերեղաններն ունեն համեմատաբար լայն հատակ, ուռուցիկ կողապատեր և ուսերի եզրագծին հակառակ՝ կտրուկ դեպի վեր թեքվող ու սրվող պսակներ (198/2002): Սրանք, առավելապես օժտված են սև կամ դեղնա-վաթղագույն փայլեցված մակերևույթով և վարդագույն կամ դարչնագույն աստառով: Դբանցից մեկը պսակից ցած զարդաբանված է ժապավենա-անկյունագծային հորինվածքով (278/2001), իսկ մյուսը՝ ուսին ելունդ է կրում (26/2002): II տիպի քերեղանների պսակների տրամագիծը, հիմնականում, գտնվում է 23-31 սմ-ի սահմաններում: Նման ամանները սովորական են կուր-արաքսյան մշակույթում: Առանձին խումբ են կազմում այն կավամանները, որոնց կողապատերի հետ բութ անկյուն կազմող ուղղաձիգ պսակներն ավարտվում են հարթ կամ թեք կտրած պռունկով (169/2002, 245/2002, 46/2005): Դրանց փայլեցված մակերևույթը սև կամ մոխրագույն է, աստառը՝ բաց շագանակագույն և դարչնագույն: Պսակը, երբեմն, արտաքուստ զարդաբանված է երկրաչափական պատկերներով սաղր գծիկներով լցված եռանկյունիներով (245/2002): Որպես կանոն, այս III տիպի քերեղանների պսակների տրամագծի (ամոթի առավելագույն) մեծությունը 30-33 սմ է: Մեկ ուրիշ խումբ քերեղաններն ունեն ավելի նեղ հատակ, թեք կողապատեր, իսկ պռունկը ռևե ձևով չի առանձնանում իրանի պատերից: Սրանք իրարից տարբերվում են եզրի ձևով՝ հարթ (աղ. XV,_{3,6}, 362/2001) և թեք կտրած (աղ. XV,_{4,5}, 246/2002, 301/2002), սրվող (129/2002): Այս կավամանների մակերևույթը, մեծ մասամբ, սև է, հագվաղեպ՝ մոխրագույն: Աստառը նույն գույնի է, ընչ որ մյուս քերե-

ղաններինը, կան վարդագույն և սև աստառով նմուշներ: Մի շարք օրինակներ օժտված են եզրից անմիջականորեն ցած տեղադրված կիսազնդած կանթերով (աղ. XV,^{3,5}, 362/2001, 129/2002, 246/2002): Հիշյալ IV տիպի քերեղանների բերանի բացվածքի (առավելագույն տրամագծի) չափը 23-33 սմ է: Քերեղանների հավաքածոյում հանդիպում են նաև բացառիկ մեծ ամաններ: Այսպես, նման կավածաններից մեկի (I տիպ, 278/2001) պսակի տրամագիծը 44 սմ է, իսկ մեկ այլ քերեղանի (III տիպ, 169/2002) առավելագույն մեծությունը՝ 42 սմ:

Թասերը քերեղաններից ձևաբանորեն դժվար է տարբերակել: Դրանք տարբերվում են իրարից, նախ և առաջ, իրենց չափերով²²¹: Ազարակում հայտնաբերված թասերն ունեն փայլեցված սև, ղեղնավուն կամ փայլատ ղեղնավուն մակերևույթ և սև, դարչնագույն, ղեղնավուն կամ աղյուսագույն աստառ: Խոհանոցային խորը թասերից մեկը գտնվել է I₁ քառակուսու կուր-արաքսյան շերտում: Այն ունի փայլատ ղեղնավուն մակերևույթ, աղյուսագույն աստառ, կիսազնդած իրան, որը սահուն անցում է կատարում հարթ եզրի (524/2001): Մեկ այլ թասի ղեղնավուն մակերևույթին պահպանվել են փայլեցման հետքերը: Հատակը գոգավոր է, հատակամերձ մասը՝ թույլ ներճկված, կողապատը՝ ուռուցիկ, եզրը՝ ղեպի դուրս թեք կտրած: Ուսին ելուստ (կեղծ կանթ) է կրում (199/2002): Սև փայլեցված մակերևույթով և դարչնագույն աստառով, դուրս թեքված բարակ շուրթով անվիզ մի թաս պատկերագարդ է (աղ. XVI,¹): Թասերի չափերը տատանվում են 10-16 սմ-ի սահմաններում: Նկարագրված տեսակների թասեր և քերեղաններ ի հայտ են եկել ամենուրեք, որտեղ որ տարածվել է կուր-արաքսյան մշակույթի ազդեցությունը:

Խեցեղեն հավաքածոյում առկա է նրբախեցի ամանի բեկոր, որի մակերևույթը մոխրագույն փայլեցված է, աստառը՝ դարչնագույն, իրանը երկկոն է, միջին ռարձրություն ունեցող վիզը թեքված է ղեպի դուրս, 13,2 սմ տրամագծով սրվող շուրթը թույլ ընդգծված է (133/2001): Նման

²²¹ Հնագիտական աշխատություններում բերված քերեղանների և թասերի անվանումների և դրանց համապատասխան չափերի վերլուծությամբ կարելի է եզրակացնել, որ հայ հնագետները, սովորաբար, քերեղան են եամարում հիշյալ տիպի սյն ամանները, որոնց առավելագույն տրամագիծը > 18 սմ, իսկ թաս՝ < 16 սմ տրամագիծ ունեցողներին: Այն ամանները, որոնց տրամագծի չափն ընկնում է այս երկու սահմանային մեծությունների միջև (16 սմ < D < 18 սմ), կոչվում են թաս-քերեղան: Այս աշխատության մեջ մենք հետևելու ենք ընդունված պատկերացումներին, չմոռանալով, որ նմանօրինակ յուրաքանչյուր սահմանագատում կրելու է պայմանական բնույթ:

տիպի կավամաններից, ըստ երևույթին, պետք է թաս-փիալաներ անվանումը տալ:

Հետաքրքիր է Ագարակում հայտնարերված կաթսայածև կավամանը: Այն ի հայտ է եկել H₁₁ քառակուսու արևելյան հատվածի պեղումներով, ժայռը ծածկող խճավագե հատակի վիա, կուր-արաքսյան անխաթար շերտում: Այն պահպանված էր անտիղ (in situ), գրեթե ամբողջական, սակայն ճգնված վիճակում և կաղող է կապվել N 2 կլոր կացարանի ընակիչների գործունեության հետ, քանի որ գտնվել է այդ ընակելի համալիրի ետնարակում, մասնակի պահպանված քարակերտ օջախին կից (Նկ. 43)²²²: Թժակավե կաթսայի մակերևույթը փայլատ է, սև գույնի, աստառը՝ ռաց վարդագույն, խեցին երկշերտ է: Հատակը հարթ է, կողապատը՝ թույլ աղեղնածև, պսակը՝ շրջված կոնածև, պսակի տրամագիծը՝ 26,25 սմ: Հիմքի մոտ տեղադրված են կիսագնդածև երկու կանթ, որոնցից մեկը կոտրված է (Նկ. 44, աղ. XVI,2): Եթե անտեսենք կանթերի ցածր դիրքը, ապա նման կավաթուրծ ամաններ հայտնի են կուր-արաքսյան ռազմաթիվ հուշարձաններից: Առաջին օրինակին հատկապես մոտ է Մոխրարլուրի կավամաններից մեկը, որն առայժմ հրատարակված չէ, իսկ նույն հուշարձանից նմանատիպ մեկ այլ կավաման քննարկվող նմուշից տարրերվում է պսակի ձևով, մակերևույթի փայլեցվածությամբ և գարդարանվածքի առկայությամբ²²³: Ագարակի «կաթսայի» գուզահեռը կարելի է փնտրել նաև Բարաղերվիչ հուշարձանախմբում²²⁴: Յանըղթեփեռում ևս գտնվել է համամասնությամբ ու ձևով նման մի կավաման, որն օժտված է փայլատ, մուգ դարչնագույն մակերևույթով և, ի հավելումն, խուփ ունի²²⁵: Կարծում ենք, խուփ է ունեցել նաև Ագարակի կավաթուրծ կաթսան, քանի որ նման կավամանները, ակնհայտորեն, նախատեսված են եփելու, շոգեխաշելու համար: Թաղարները կավե մեծ ամաններ են, որոնք ծառայում են կենցաղային տարրեր նպատակների՝ դրանց մեջ ջուր կամ ճաշ լցնելու, ներկանյութերը ջրով ռացելու, թույսեր աճեցնելու և այլն²²⁶: Սրանք ավելի լայն

²²² Այս հատվածում խեցեղենի ակնհայտ կուտակում էր նկատվում: Կավաթուրծ կաթսային կից առկա էին մեկ այլ մեծ խեցանոթի հատակ և հատակսմբեր մաս, շուրթից սկսվող կանթով կճուճի ռեկոր և այլ խեցատներ: Քարերով շարված մի օջախ էլ հայտնարերվել է Քոսի ճոթերի կուր-արաքսյան շերտում, կլոր կացարանի պատից ոչ հեռու (Ханзадян, 1963, 153): Ենթադրվում է, որ կերակուր է պատրաստվել նաև Սոս հյուլուքի վաղբրոնզեդարյան կացարաններից մեկի ռակում. տե՛ս Sagona et al, 1996, 33:

²²³ Սրեշյան, 1974, 148, Նկ. 2:

²²⁴ Нариманов, 2001, таб. I, нижний ряд, справа.

²²⁵ Burney, 1961, 148, 152, pl. LXXIII, 47:

²²⁶ Կարախանյան, 2003, 209-210:

ու խորն են, քան կճուճները, իսկ ձևով նման են վերջիններիս որոշ տեսակներիին: Մի խումբ թաղարների իրանը ևս միջին մասից կտրուկ անցում է կատարում դեպի հատակամերձ հատվածը: Ազարակում գտնված թաղարների մեծ մասի բերանի բացվածքը 23-ից մինչև 33 սմ է: Դրանց ձևերը նույնպես բազմազան են: I տիպի կավամաններից մեկն՝ ունի փայլեցված մոխրագույն մակերևույթ և դարչնագույն աստառ, ներձկված կարճ վիզ, սրվող շուրթ (9/2001): Այդ տիպին պատկանող (ներձկված կարճվիզ) ևս երկու կավամաններ օժտված են համապատասխանաբար սև և դեղնադարչնագույն փայլեցված մակերևույթով, շագանակագույն ու դեղնավուն աստառով, ավելի կոպիտ են և հաստախեցի (133/2002, 166/2002): Գտնվել է նաև սև մակերևույթով ու վարդագույն աստառով, ներձկված վզով և շուրթից սկսվող կանթ(եր)ով թաղար, որի շուրթի վերին հատվածում, ունկ(եր)ի հետ միացման տեղում, եռանկյունաձև հարթակ է առաջանում (369/2001): Հիշյալ խմբի անոթների բերանի բացվածքը 24-25 սմ է: II տիպին պատկանող կավամաններից մեկը նույնպես հաստախեցի է, անվիզ, սրվող պսակը ներսից թեք կտրված է, դրսից՝ կլորացող-ընդգծված, ուսին կիսագնդաձև կանթ է կրում: Պսակի վերականգնվող տրամագիծը 33 սմ է (48/2005): Նույն տիպի, սակայն ավելի նուրբ ու փոքր չափի պսակով (տրամագիծը՝ 24,5 սմ) օժտված մի խեցամանի սև փայլեցված մակերևույթը կրում է լայնակոս ուռուցիկ-ներձկված գարդաբանվածք (ադ. XVI,₃): Հնարավոր է, թաղարների III տիպին պատկանող մի աման ունենք՝ ի դեմս ենթադրաբար վերականգնվող սեղմված-գլանաձև վզով և զարդաբանված իրանով խեցատներից մեկի (25/2005), որի ուսի տրամագիծը \approx 33 սմ է: Մեկ այլ տիպի թաղար գտնվել է H₁₂ քառակուսու պեղումներով, կուր-արաքսյան անիառն շերտում: Սա ունի փայլատ դեղնա-վարդագույն մակերևույթ, վարդագույն աստառ: Պսակը շրջված հատած կրնաձև է, որի մի հատվածում հարթ պռունկը եռանկյունաձև փովում է դեպի դուրս, թույլ ուռուցիկ կողապատին պահպանվել է կիսագնդաձև խուլ կանթը, հատակը թացակայում է (ադ. XVI,₄): Այս IV տիպի մյուս թաղարները կանթ չունեն, օժտված են սև կամ վարդագույն մակերևույթով, դարչնագույն, վարդագույն կամ սև աստառով (319/2001, 34/2002, 195/2004, 28/2005): Սրանցից առաջինի ուսը զարդարանված է, իսկ երկրորդի հարթ պռունկը եռանկյունաձև փովում է դեպի դուրս: Թաղարներից ևս երեքի պսակները հաստ են, ուսերից կտրուկ անցում է կատարվում դեպի շրջված հատած կրնաձև պսակները: Սրանք ունեն սև կամ մոխրագույն փայլեցված մակերևույթ, դարչնագույն, գորշ կամ մոխրագույն աստառ (5/2001,

315/2001, 316/2001): Կան նաև համեմատաբար կոպիտ հարդարված սև, չգարդաբանված մակերևույթով երկու հաստախեցի թաղարներ, որոնք նույնպես ընդգրկված են այս տիպի մեջ (134/2002, 168/2002): IV տիպը ներկայացնող թաղարների պսակների տրամագիծը 26-37 սմ է:

Խեցանոթների հաջորդ՝ խիստ բազմաքանակ, իրումբն են կազմում կճուճները: Դրանք, հիմնականում, անվիզ, կարճ կամ միջին բարձրության վզով ոչ մեծ անոթներ են²²⁷, ունեն ներճկված հատակ և դեպի ցած նեղացող հատակամերձ մաս: Առաջին տիպին ենք դասում անվիզ կճուճների իրումբը: Դրանք ունեն դեպի դուրս թեքված և ուղղահայաց հատույթում սեղանաձև կամ եռանկյունաձև պսակ, սև փայլեցված մակերևույթ ու մուգ գույների (դարչնագույն, գորշ, շագանակագույն) աստառ: I տիպի կճուճների պսակի տրամագիծը, մեծ մասամբ, 7-11 սմ է, մի դեպքում (272/2002)՝ 16 սմ: Կարճ և միջին բարձրության վզով կճուճները կարելի է դասակարգել ըստ բերանի բացվածքի՝ լայնաբերան և նեղբերան: Ըստ մեր դասակարգման, լայնաբերան կճուճների բերանի բացվածքի մեծությունը 14 սմ և ավելին է: Այս II տիպի կճուճներն ունեն ներճկված հատակ և հատակամերձ մաս, թույլ ուռուցիկ իրան, վերջինիս վերին մասում՝ ուսից, սահուն անցում է կատարվում քիչ դեպի ներս թեքված վիզը, ռի հիմքում այս տիպի անոթներն օժտված են հորիզոնական սաղր ակոսով, իսկ վզից վեր՝ դեպի դուրս փռված շուրթով: Նման անոթների սև փայլեցված կամ փայլատ մակերևույթն իրանի միջին դիմային մասում, սովորաբար, օժտված է ուռուցիկ-ներճկված զարդաբանվածքով և կրկնում է շքեշքուր-մոխրաբլուրյան կավամանների «մակույկաձև հիմքով» պարուբազարդ հորինվածքը²²⁸ (ադ. XVII,1-7, 394/2001, 342/2002): Պայմանականորեն, այս տիպի մեջ ենք ընդգրկում ևս մի բեկոր, որը վզի հիմքում օժտված է կիսազնդաձև կանթով (300/2002): Այս անոթները, հիմնականում, ձևով եռամաս են, սակայն ինչպես ցույց տվեց դբանցից մեկի (ադ. XVII,1) դիտարկումը, այն եռամաս չէ ըստ պատրաստման տեխնիկայի²²⁹:

²²⁷ Պայմանականորեն կարճվիզ ենք համարում այն կճուճները, որոնց վզի բարձրությունը փոքր է 3 սմ-ից, իսկ վզի միջին բարձրություն ենք եամարում 3-4,5 սմ-ը:

²²⁸ Սխալ չի լինի հավաստել, որ ուռուցիկ-ներճկված պարույրը կուր-արաքսյան խեցեղենի զարդաբանվածքի ամենասիրված տարրն է: Հետաքրքիր է, որ այն հանդիպում է նաև հաջորդ՝ դամրանարլուաին մշակույթին պատկանող կավանոթների մակերևույթին (Թոնոջ, մասնավորապես՝ Ցուրտագետ (Ձուրտակետի)). տես Джапаридзе, 1964, 110, 116, рис. 16:

²²⁹ Խոսքը վերաբերվում է կուր-արաքսյան խեցեգործության մեջ տարածված այն հնարքին, երբ կավանոթի տարբեր մասերը մալս պատրաստվում էին ժապավենների տեսքով, ապա մեկի եզրին ակոս էր արվում, իսկ մյուսի եզրը սրվում էր և երկու ժա-

Քննարկվող կճուճների բերանների բացվածքը 14-16 սմ է: Լայնաբերան կճուճների խմբում, որպես ենթատիպ, կարելի է առանձնացնել թույլ ներձկված գլանաձև վզով ամանները: Այս անոթներից երկուսի վիզը կարճ է, ժապավենա-անկյունագծային հորինվածքով զարդաբանված (30/2005, 33/2005, 45/2005): Սրանց բերանի բացվածքի չափերը տատանվում են 14-15 սմ միջակայքում, միայն մի կավամանի (30/2005) շուրթի տրամագիծը 18 սմ է: Առանձին խումբ են կազմում կարճ և միջին բարձրության վզով նեղբերան կճուճները (III տիպ), որոնց բերանի բացվածքը \approx 9-10 սմ է, բացառությամբ մեկի (393/2001՝ 12 սմ): Վերջինը, իր ձևով ևս, միջանկյալ դիրք է գրավում նեղբերան և լայնաբերան կճուճների նկատմամբ: Սրանք ունեն ներձկված հատակ և դեպի ցած նեղացող հատակամերձ մաս, ուռուցիկ իրան, ուսից անցում է կատարվում դեպի ներս թեքված վիզը, որի հիմքում այս ամանները ևս օժտված են հորիզոնական ակոսով, իսկ վզից վեր՝ դեպի դուրս ընդգծված շուրթով (աղ. XVIII,₁₋₂, 382/2001, 385/2001, 393/2001, 211/2004): Այստեղ քննարկման առարկա բոլոր կավամանների միջնամասերը, առանց բացառության, զարդաբանված են: Ըստ երևույթին, այս III տիպի ամանների շարքում առանձին ենթատիպ են կազմում ներձկված կարճ վզով, 8-12 սմ բերանի բացվածքով ոչ մեծ կճուճները (347/2001, 348/2001, 35/2002): Գտնվել են նաև կճուճների իրանների, հատակամերձ մասերի և հատակների մեծաքանակ ռեկորներ, որոնց դեռ կանդաբառնանք խեցանոթների զարդաբանվածքը քննարկելիս: Այժմ մշենք միայն, որ ուսերի և վզերի պահպանված հատվածներից կարելի է եզրակացնել, որ դրանք, մեծ մասամբ, պատկանում են երկրորդ և երրորդ տիպի կճուճներին: Ազարակում հայտնաբերված տարբեր տիպի կճուճներն իրենց համապատասխանություններն ունեն վաղբրոնզեդարյան հարյուրավոր հուշարձաններում: Դրանց գործառնության շրջանակը, հավանաբար, լայն է եղել, սկսած ճաշ եփելուց, մինչև մթերքներ պահելը²³⁰:

Գավաթ-կճուճները, հավանաբար, օժտված են եղել զույգ կանթով, չնայած քննարկվող օրինակներից յուրաքանչյուրի վրա պահպանվել է միայն մեկը: Երկթեք կամ դրանց նմանակող ունկերը սկսվում են շուրթից և իջնում մինչև անոթի ուսագլուխը, որտեղով հորիզոնական խորադիր զիծ է անցնում (աղ. XVIII,₃₋₄, 345/2001, 297/2002): Սրանց կան-

պվեներն իրար էին կցվում՝ սուր եզրը հազցնելով ակոսի մեջ ու թաց կավը սեղմելով: Քննարկվող ամոթը պատրաստելիս, այս հնարքը չի կիրառվել:

²³⁰ Կարախանյան, 2003, 306:

թերը, ի տարրերություն ստորև քննարկվող գավաթների ունկերի, ավելի մեծ են և հարմար՝ մատներով թռնելու համար: Այս անոթներն ունեն սև փայլեցված մակերևույթ, սև, դարչնագույն կամ գորշ աստառ և 12-13 սմ չափերով ըերանի ռացվածք: Սրանք ձևով նման են լայնարերան կճուճներին, ըայց, ինչպես տեսնում ենք, տարրերվում են վերջիններից ունկերի առկայությամբ ու փոքր չափերով (այդ թվում՝ նաև վզի ըարծրությամբ): Սակայն, հիշյալ կավանոթները չէին կարող ծառայել նաև որպես ըմպանակներ, եթե նույնիսկ, գավաթների նման, մեկ նուրբ կանթ ունենային, քանի որ օժտված են դուրս փռված հաստ շուրթերով, որոնք չեն նպաստում դրանցով հեղուկ խմելուն:

Գտածոների մեջ քիչ չեն գավաթները: Ազարակում հայտնարերված կուր-արաքսյան գավաթները ոչ մեծ չափերի միականթ ըմպանակներ են՝ 7-12,5 սմ մեծությամբ ըերանի ռացվածքով: I տիպին դասվող նմուշները վեցն են, որոնցից հինգն օժտված են շուրթից սկսվող և դեպի վզի հիմքն իջնող միջին մեծության կամ փոքր կանթերով, Սրանց ըողորի վզի տակ սաղր հորիզոնական ակոս է արված: Ջարդարանված ամբողջական գավաթներից մեկն ունի ներճկված փոքրիկ հատակ, դեպի ցած նեղացող հատակամերձ մաս, ուռուցիկ իրան, գրեթե գլանաձև վիզ և դուրս թեքված ըարակ շուրթ: Նրախեցի գարդարանված անոթի մակերևույթը սև փայլեցված է, աստառը՝ ըաց դարչնագույն (աղ. XIX,₁): Սև փայլեցված մակերևույթով ու դարչնագույն աստառով երկրորդ գավաթը չափերով և ձևով մոտ է առաջինին (աղ. XIX,₂): Երկթեք կանթով ու փոսիկով օժտված մյուս գավաթը ձևով նման է նախորդներին, սակայն ավելի փոքր է և ունի առավել ըարակ կողապատեր (աղ. XIX,₃): Վերջինիս կանթից ցած առկա է սաղր, ըայց մեծ փոսիկ: Նույնատիպ մի գավաթ ավելի փոքր չափերի է (386/2001): Թույլ ներճկված գլանաձև վզով, պատկերազարդ սև փայլեցված մակերևույթով ու մոխրագույն աստառով մեկ այլ անոթ գավաթների շարքն է դասվել ենթադրարար, քանի որ առկա ինցարեկորի վրա կանթը ըացակայում է (213/2004): II տիպի մի գավաթի կիսագնդաձև ունկը տեղադրված է վզին՝ շուրթից ցած և ուսի վերին մասում: Անոթի աստառը դեղնադարչնագույն է, սև փայլեցված մակերևույթը կոպիտ է հարդարված, շրջված կոնաձև հատակամերձ մասից կտրուկ անցում է կատարվում դեպի գրեթե ուղղաձիգ (քիչ ուռուցիկ) ուսը, իսկ գլանաձև վիզն ավարտվում է թույլ ընդգծված և սրվող շուրթով, որի վերականգնվող տրամագիծը 12,5 սմ է (6/2002): Վերջինս ձևով նման է և չափերով հա-

մեծատական Գառնիում հայտնաբերված գավաթներից մեկին²³¹: III տիպին պատկանող նմուշներից երկուսն ունեն բարձր, թույլ ներձկված վիզ և շեշտված անցումներ: Սրանցից մեկի ուսերն ու վզի հիմքը զարդաբանված են (աղ. XIX,4), երկրորդ ինքնատի վզի հիմքում միայն հորիզոնական ակոս է արված (178/2002): Երկու խեցաբեկորների վրա էլ կանթերը չեն պահպանվել և վերջիններս գավաթ են համարվում պայմանականորեն²³²: Երկուսն էլ ունեն 10 սմ մեծությամբ շուրթի տրամագիծ: IV տիպին պատկանող խեցաբեկորներից մի քանիսը ենթադրաբար են գավաթների շարքը դասվում, քանի որ դրանցից երեքի վրա կանթը չի պահպանվել (աղ. XIX,5, 174/2002, 32/2005): Այն հազիվ է նշմարվում շուրթից զուրկ մի օրինակի վզի հիմքում (32/2002), իսկ մեկի կանթը պահպանվել է: Այն սկսվում է անոթի շուրթից և իջնում մինչև վզի և ուսի սահմանը (392/2001): Հիշյալ տիպի գավաթներն օժտված են թույլ ներձկված կարճ վզով, նրբախեցի են, ունեն սև կամ մոխրագույն փայլեցված, որոշակի հատվածներում զարդաբանված մակերևույթ և դարչնագույն, բաց դարչնագույն կամ սև աստառ: Արանց շուրթերի տրամագիծը փոփոխվում է 10-12,5 սմ-ի սահմաններում:

Սև փայլեցված մակերևույթով ու դարչնագույն աստառով մեկ այլ ըմպանակ կարելի է բաժակ-գավաթ անվանել: Այն ունի բարձր, հավանաբար՝ դեպի վեր լայնացող վրզ, որը, ըստ երևույթին, օժտված է կիսազնդածև կանթով²³³ և զարդաբանված է: Նրբախեցի այս անոթի հարթ, նեղ, հազիվ ընդգծված շուրթի տրամագիծը ≈ 9 սմ է (365/2001):

Պեղումներով ձեռք բերված ինքեղեն հավաքածոյում հանդիպում են նաև սեղմված-գլանաձև իրանով ոչ մեծ անոթներ, որոնց ճիշտ կլիմի ընդհանուր անվանել: Արանց բերանի բացվածքը փոքր-ինչ մեծ է հատակի տրամագծից: Նմուշներից մեկը գտնվել է H₁₀ քառակուսուց, ունի ներձկված հատակ և օժտված է երկու զարդագոտիով (աղ. XX,1): Մյուս զեղեցիկ անոթն ի հայտ է եկել H₁₂ քառակուսում, վաղբրոնզեդարյան անխաթաբ շերտում: Այն օժտված է սև փայլեցված մակերևույթով, վարդագույն աստառով, հարթ հատակով և զարդարանված է (աղ.

²³¹ Խանգադյան, 1969, 67, նկ. 66, պերիցը:

²³² Շուրթից սկսվող կանթով օժտված նման մի գավաթ, հայտնի է, օրինակ, Բաբադերվիչից (Исмаилов, 1978, 35-36, рис. 3): չր բացառվում, որ կանթ կարող էր ունենալ նաև Քոսի մոթերում գտնված թերի անոթը, որը թե՛ ձևով, թե՛ զարդարանվածքով համապատասխանում է քննարկվող նմուշներից առաջինին. տե՛ս Ханзадян, 1963, 155-156, рис. 5,1.

²³³ Կանթից պահպանվել է միայն աննշան հեաք և այն օղակող ակոսից մի հատված:

XX,2): Բաժակի վերին հատվածը, ցավոք, չի պահպանվել, ուստի այդ մասում զարդաբանվածքի գոյության և պոունկի բացվածքի վերաբերյալ հնարավոր չէ ճշգրիտ եզրակացություն անել, իսկ հատակի վերականգնվող տրամագիծը 8 սմ է: Նման խեցանոթներ գտնվել են Գանձակի տարածաշրջանում, Արմավիրում²³⁴, Շենգավթում²³⁵, Ջրվեժում²³⁶, Գառնիում²³⁷, Էլառում²³⁸, Թագավորանիստում (Վանաձոր)²³⁹ և այլուր: Դրանց մի մասն օժտված է կանթով: Բաժակաձև խեցանոթներ հայտնաբերվել են նաև Հայաստանի պղնձեքարեդարյան հուշարձաններում, որոնցից մեկը չափերով մոտ է քննարկվող օրինակներին, սակայն վերջիններից տարբերվում է հատակի, պսակի ձևերով և զարդաբանվածքի բացակայությամբ²⁴⁰:

Ազարակում հայտնաբերվել են վաղբրոնզեդարյան երկու տիպի գավեր՝ անկանթ ըմպանակներ, որոնց բերանի բացվածքը մոտավորապես հավասար է անոթի բարձրությանը կամ քիչ է տարբերվում դրանից: Ըստ ամբողջացող մի օրինակի, առաջին տիպի գավերն ունեն թույլ ներճկված հատակ, շրջված հատած կոնաձև հատակամերձ մաս, ուռուցիկ իբան, ներս թեքվող վիզ և դեպի դուրս շեշտված շուրթ (198/2004): Մեկ ուրիշ գավի ուսը, կտցավոր շուրթի տակ, օժտված է ելունդով (աղ. XX,3): Այս անոթի մակերևույթին առկա են նաև երկու սադր փոսիկներ: Սովորաբար, գավի բերանի բացվածքի չափը 9-9,5 սմ է (360/2001), սակայն հանդիպում են նաև շատ փոքրիկ ու նրբագեղ գավեր, որոնց շուրթի տրամագիծն ընդամենը 5-7 սմ է (աղ. XX,4, 348/2002): Երկրորդ տիպի անոթներն օժտված են գլանաձև վզով: H_{11} քառակուսում գտնված նրբախեցի փոքրիկ մի գավ օժտված է սև փայլեցված մակերևույթով, վարդագույն աստառով, վզի հիմքում հորիզոնական ակոս է արված: Նստուկը չի պահպանվել, միջնամասն ուռուցիկ է, 7 սմ տրամագիծ ունեցող շուրթը՝ ձվաձև, դեպի դուրս ընդգծված (աղ. XX,5): Հիշյալ բոլոր գավերն ունեն սև փայլեցված մակերևույթ, դաբչնագույն, մոխրագույն, սև կամ շագանակագույն աստառ: Սրանց վզի հիմքով հորիզոնական խորադիր գիծ է անցնում, ո-

²³⁴ Куфтин, 1944, 91-92, таб. XX,2.4.

²³⁵ Խանգաղյան, 1967, աղ. XI:

²³⁶ Թունանյան, 1993, 10, աղ. V,2:

²³⁷ Խանգաղյան, 1969, 57, նկ. 54:

²³⁸ Խանգաղյան, 1979, 53, նկ. 76:

²³⁹ Հիշյալ խեցանոթը, թյուրիմացաբար, դիտարկվել է որպես «քրեղան». տե՛ս Դևեջյան, 2001, 23, աղ. V,6:

²⁴⁰ Թորոսյան, 1976, 81, տախտ. V,2:

րից ցած դիմային մասը զարդաբանված է փոսիկներով և համակենտրոն շրջաններով, Նման գավերը սփռված են կուր-արաքսյան մշակութային ողջ տարածաշրջանում:

Հուշարձանում հայտնաբերվել են նաև ավելի մեծածավալ, լայն հիմքով գլանաձև, հատած կոնաձև և տակառաձև անոթներ²⁴¹: Գլանաձև անոթներից մեկի հատակի տրամագիծը 37 սմ է: Այն օժտված է սև փայլեցված մակերևույթով և համագույն աստառով: Հատակի կողային մասի մակերևույթը զարդաբանված է (390/2001)²⁴²: Հատած կոնաձև կավաման գտնվել է N₄ քառակուսուց: Սա ունի հարթ, 16,5 սմ տրամագծով հատակ, որի կողային հատվածն արտաքուստ պստկերազարդված է (ադ. XXI,1): Տակառաձև մի կավանոթ հայտնաբերվել է K₈ քառակուսում: Սրա շրջանաձև հատակի տրամագիծը 14,5 սմ է, չզարդաբանված մակերևույթը փայլեցված է՝ սև գույնի, աստառը՝ դարչնագույն (22/2001): Համապատասխան խեցանոթներ հայտնի են Նախճավանի Մոխրաբլուրից²⁴³, Ամիրամիսգորայից²⁴⁴ և կուր-արաքսյան այլ բնակատեղերից: Այս տիպի անոթներն ակնհայտ արիափկ տեսք ունեն և հանդիպում են նաև պղնձեքարեդարյան հուշարձաններում²⁴⁵:

Գնդաձև անոթները նույնպես եղել են գործածական: Սրանց ուռուցիկ կողապատերն անոթի վերին մասում սահունորեն վերածվում են հարթ եզրի: Բոլորն ունեն սև փայլեցված մակերևույթ: Աստառները տարբեր գույնի են՝ վարդագույն, գորշ, դարչնագույն կամ դեղնադարչնագույն: Թեև դրանք իրարից տարբերվում են նաև իրենց չափերով, այդ թվում՝ բերանի բացվածքով (16-ից մինչև 36 սմ) և խեցու հաստությամբ, սակայն բոլորի մակերևույթի վերին հատվածը՝ եզրից ցած, զարդաբանված է, մեծ մասամբ՝ նույնակերպ (331/2001²⁴⁶, 13/2002, 193/2002, 31/2005, 42/2005):

Յուրաքանչյուր բնակելի համալիրում հայտնաբերված կուր-արաքսյան խեցեղենի մեջ զգալի քանակ են կազմում սափորները: Դրանք հարթ կամ թույլ ուռուցիկ հատակով, ձվածիր կամ մոտավոր գնդաձև իրանով և կոնաձև-շեփորաձև բարձր վզով կավանոթներ են, ո-

²⁴¹ Վերջին երկուսը շատ չեն տարբերվում գլանաձև անոթներից, միայն կողապատերը փոքր-ինչ թեքված են դեպի ներս (ադ. XXI,1) և դուրս (22/2001)՝ հիմքի հետ կազմելով 90⁰-ից համապատասխանաբար փոքր և մեծ անկյուններ:

²⁴² Badalyan, Avetisyan, 2007, 31, pl. V,6.

²⁴³ Абибуллаев, 1982, 132, 301, таб. XXI,1.

²⁴⁴ Чубинишвили, 1963, рис. 15,29.

²⁴⁵ Абибуллаев, 1982, 69, 290, таб. X,3.

²⁴⁶ Badalyan, Avetisyan, 2007, 31, pl. V,6.

րոնց մեջ հեղուկ է լցվել: Հանդիպում են նաև ուռուցիկ իրանով և ներճկված կարճ ու նեղ վզով սափորներ: Այս անոթները, սովորաբար, օժտված են մեկից երեք կիսազնդած կանթերով, որոնք տեղադրված են վզի հիմքում կամ իրանի միջնամասում: Ազարակում գտնված սափորները ներկայացված են վզերի և իրանների ռեկորներով: Քննարկվող խեցատների գերակշիռ մասն ունի սև փայլեցված մակերևույթ: Առաջին տիպի խեցանոթներից մեկի աստառը ռաց վարդագույն է, ուսը թեքված է դեպի ներս, ստորին հատվածում կոնաձև վիզը զարդարանված է երկրաչափական պատկերներով (աղ. XXI,₂): Մեծ ու գեղեցիկ մի այլ սափորի կոնաձև վզի հիմքը նույնպես պատկերազարդ է (387/2001)²⁴⁷: Մեկ ուրիշ սափորի երկար վիզը նմանապես զարդարանված է (47/2005): Արանցից ոչ մեկի շուրթը չի պահպանվել, իսկ վզի հիմքը լայն է՝ 23-29 սմ: Երկրորդ տիպին դասվող մի սափոր ներկայացված է զարդարանված հիմքով նեղ, վերևում լայնացող վզով (աղ. XXI,₃): Արա վզի պահպանված հատվածի առավելագույն տրամագիծը ≈ 13 սմ է: Երրորդ տիպին պատկանող խեցանոթներից մեկն օժտված է փայլատ նարնջագույն մակերևույթով և աստառով, ուռուցիկ իրանով և ներճկված կարճ ու նեղ վզով: Վերջինիս ռեքանի ռացվածքը 11 սմ է, իսկ դուրս շեշտված հաստ շուրթն ունի կտցաձև ելուստ (111/2002): Նկարագրված տիպերի սափորներ հայտնաբերվել են ընդամենը հուշարձաններում: Թեք ուսերով և շեփորաձև վզով սափորներ գտնվել են, մասնավորապես՝ Կառնուտում²⁴⁸, Քոսի ճոթերում²⁴⁹, Գեղարոտում²⁵⁰ և այլուր: Մոխրարլուրում հայտնաբերված նեղվիզ սափորը, ըստ երևույթին, անզարդ է²⁵¹: Զարդարանված նեղ վզով սափորներ հայտնի են Հառիճից²⁵², Լորուտից²⁵³, Լուսաղբյուրից²⁵⁴, Գառնիից²⁵⁵ և այլ հնավայրերից:

Պեղումներով ի հայտ են եկել նաև կարասների մի շարք ռեկորներ: Դրանց հիման վրա վերականգնվող կարասները շատ մեծ չեն, սակայն ընդհանրապես տարրողունակ, լայնաբերան և հաստախեցի անոթներ են, որոնք հաճախ են հանդիպում կուր-արաքսյան ընկալատեղերում: Ազա-

²⁴⁷ Badalyan, Avetisyan, 2007, 31, pl. V,₁.

²⁴⁸ Badalyan, Avetisyan, 2007, 142-143, pl. V,_{1,2}, VI,₁.

²⁴⁹ Դևեջյան, 2001, աղ. XI,_{1,2}:

²⁵⁰ Badalyan, Avetisyan, 2007, 104, pl. IV,_{2,3}.

²⁵¹ Արեշյան, 1974, 149, նկ. 6:

²⁵² Хачатрян, 1975, 64, рис. 20, верхний справа.

²⁵³ Դևեջյան, 2001, 11-12, նկ. 1:

²⁵⁴ Badalyan, Avetisyan, 2007, 206, pl. III,₃.

²⁵⁵ Խանգաղյան, 1969, 71, նկ. 69:

րակի կարասների ինքնին երկշերտ է, մակերևույթը՝ հիմնականում, սև փայլեցված, աստառը՝ վարդագույն, դարչնագույն կամ գորշ: Դրանցից մեկի պահպանված հատվածի տրամագիծը 43 սմ է, իսկ մակերևույթին այժմի պատկեր կա (աղ. XXI,₄): Այս զարդապատկերին մենք դեռ կանդորադամնանք, սյստեղ նշենք միայն, որ իրանի ոչ մեծ բեկորով ներկայացված սույն կարասի տիպը, առայժմ, անորոշ է մնում: Մյուս հաստախեցի անոթի իրանի բեկորի մակերևույթի զարդաբանվածքն արծն-կարազյան տիպի է (աղ. XXI,₅): Դատելով վզի պահպանված մի փոքրիկ հատվածից և հիշյալ տիպի անոթների ձևը նկատի ունենալով, կարելի է եզրակացնել, որ քննարկվող կավանոթն ունեցել է մոտավորապես գլանաձև լայն վիզ (I տիպ): Հաջորդ տիպի փոքր կարասներից մեկը ներկայացված է ներձկված-գլանաձև վզի ու դուրս փռված և ուղղաձիգ կտրված շուրթի բեկորով (II տիպ): Սրա բերանի բացվածքը 25 սմ է, իսկ վզի վրա պահպանվել է հավանաբար կիսագնդաձև կանթի հիմքի դժվարությամբ նկատվող մի հատված (520/2001): Նմանատիպ մեկ այլ կարասի բերանի բացվածքն ավելի լայն է՝ 28 սմ, այս խեցաբեկորի վրա կանթի հետք չի պահպանվել (271/2002): Շրջված կոնաձև պսակով (տրամագիծը՝ 46 սմ) և ուռուցիկ ուսով ինքատը, ըստ երևույթին, նույնպես կարասի բեկոր է (208/2004): Հաստախեցի և լայնաշուրթ այս մեծ անոթը պատկանում է Ագարակում հայտնաբերված վաղբրոնզեդարյան կարասների III տիպին: IV տիպին դասվող՝ փայլատ սև մակերևույթով և դեղին աստառով կարասի բեկորի սեղմված-գլանաձև վզին խուլ կանթ կա, վզի հիմքում՝ սադր ակոս: Բերանի տրամագիծը 37 սմ է, պռունկը հարթ է, դրսից՝ թեք կտրած (203/2004): Վերջինս թեև զարդաբանված չէ, սակայն ձևով նման է Հառիճի N 34 դամբարանում հայտնաբերված կարասին²⁵⁶, իսկ միայն շուրթի ձևով՝ Հառիճի²⁵⁷, Թագավորանիստի²⁵⁸, Գառնիի²⁵⁹ և Շենգավթի²⁶⁰ վաղբրոնզեդարյան համապատասխան մեծ անոթներին: Ներձկված-գլանաձև վզով կարասներ հայտնի են Ջբահովտից, Շենգավթից²⁶¹: Գտնվել են նաև նարնջագույն մակերևույթով խոշոր անոթների հաստ հատակներ և շուրթերի բեկորներ (202/2004, 207/2004):

Ստվար խումբ են կազմում կավաթուրծ խուփերը, որոնց առկայու-

²⁵⁶ Хачатрян, 1975, 60, 69, рис. 31а, средний ряд, слева.

²⁵⁷ Хачатрян, 1975, 60, рис. 16.

²⁵⁸ Դևեջյան, 2001, 23, աղ. V,₁:

²⁵⁹ Խանգաղյան, 1969, 48, նկ. 38:

²⁶⁰ Սարդարյան, 1967, 179, աղ. LIII:

²⁶¹ Խանգաղյան, 1967, 62, նկ. 11, վերինը:

թյունն արձանագրված է կուր-արաքսյան մշակութային ընդհանրության զբաղեցրած ողջ տարածքում: Թեև իրենց գործառնական նշանակությամբ սրանք անխզելիորեն կապված են այն խեցանոթներին, որոնց բերանը ծածկելու համար էլ հենց պատրաստվել են, սակայն խիտրից շատերը դիտարժան են նաև որպես վաղբրոնզեդարյան խեցեգործական արվեստի առանձին ստեղծագործություններ: Ուրույն կերտվածքով և զարդաբանվածքով այս առարկաները հնարավոր չէ շվտթել ուրիշ որևէ դարաշրջանի միևնույն նշանակության այլ օրինակների հետ: Կուր-արաքսյան խավերը, մեծ մասամբ, սկավառակաձև են, բարակ եզրերով, դեպի ներս հաստացող թեք ու լայն կողերով, սովորաբար, վերին կենտրոնական հատվածը գոգավոր-ներճկված է: Համդիպում են նաև այլ տիպի՝ երկեղմանի հարթ խփեր: Գրեթե բոլոր խփերն ունեն կոսագնդաձև կանթեր: Որոշ խփեր օժտված են միջանցիկ անցքերով, որոնք արվել են, ակներևաբար, գուլորչին անոթից դուրս թողնելու համար: Սրանց մակերևույթը, հաճախ, զարդաբանված է օղակաձև գոտիներով:

Կ₁₁ քառակուսում հայտնաբերված ամբողջական մի խուվու պատկանում է երկկողմանի հարթ տիպին: Այն ունի 22 սմ տրամագիծ և 2 սմ - հաստություն, իսկ 6 սմ տրամագծով կիսագնդաձև կանթը տեղադրված է կենտրոնում (աղ. XXII,₁): Քննարկվող օրինակո մակերևույթը հարթ շարունակվում է մինչև եզրը, ի տարբերություն Թալինում հայտնաբերված կափարիչի, որը եզրում կոնաձև հաստանում է²⁶²: Մյուս խփերը պատկանում են գոգավոր-ներճկված մակերևույթով տիպին: Այդպիսի մի թերի խուվի ունի փայլատ դեղնակարմիր մակերևույթ, 29 սմ տրամագիծ և ≈ 2 սմ առավելագույն հաստությամբ կող (աղ. XXII,₂): Սև վայլեցված մակերևույթով մեկ այլ խուվի դեպի կենտրոն ճկվող թեք մասում ժապավենաձև գարդ է կոում: Սրա վերականգնվող տրամագիծը ≈ 29 սմ է, եզրի հաստությունը՝ 2 սմ (աղ. XXII,₃): Դեղնավարդագույն փայլեցված մակերևույթով, ≈ 23 սմ տրամագծով և 2 սմ հաստությամբ թրձակավե կավարիչի փոքրիկ բեկորը կողային հատվածում մրոտ է, իսկ դեպի կենտրոն ճկվող մասում՝ զարդաբանված (346/2001): Այժմ փայլատ վարդագույն մակերևույթով, 22 սմ տրամագծով և 1,85 սմ - հաստությամբ ևս մի խուվի կենտրոնում օժտված է 5,3 սմ տրամագիծ

²⁶² Badalyan, Avetisyan, 2007, 244, 247, pl. III,₃. Ի դեպ, այս խփի վերին մակերևույթը նաև զարդաբանված է: Երկկողմանի հարթ, զարդաբանված մակերևույթով խուվիերը ընդհանրապես Արծն-Կարագի սառրին շերտերին (Кышарева, 1993, рис. 26,₆₂₋₆₅), Գեոյ թեփեի K շերտին (Burton Brown, 1951, 38, pl. IV,₃₅):

ունեցող կիսագնդաձև կանթով: Մեկ ուրիշ խփի կողային բարձր հատվածն արտահայտված է օղակաձև հորիզոնական թմբիկի տեսքով, որը զարդաբանված է սեղմունով արված բեկյալով և կարճ գծիկներով: Վերջինիս տրամագիծը 28 սմ է, հաստությունը՝ 2,7 սմ, սև և դեղնադարչնագույն մակերևույթը վերին հատվածում փայլեցված է, կանթը չի պահպանվել (190/2002): Պեղնակարմրավուն փայլատ մակերևույթով ևս մեկ խուփի (214/2002) ավելի մեծ է (D=31 սմ), սակայն զիջում է նախորդին հաստությամբ (H=2,2 սմ):

Ազարակի կուր-արաքսյան համալիրի պեղումներով ձեռք բերված առարկաների թվում կան նաև առայժմ եզակի բեկորներով ներկայացված խեցանոթների նմուշներ, որոնց զուգահեռները, սակայն, նույնպես քաջ հայտնի են համաժամանակյա հուշարձանների խեցեղեն հավաքածուներից: Այդպիսի արտեֆակտներից հիշատակման են արժանի այժմ փայլատ սև մակերևույթով և վարդագույն աստառով, 32 սմ տրամագիծ ունեցող երկկողմանի ընդգծված պսակով սկուտեղը, փայլատ դեղնանարնջագույն մակերևույթով և աստառով, շեշտված հարթ նստուկով, 23 սմ տրամագծով կտցավոր եզրով ափսեճ (92/2002), փայլատ դեղնասև մակերևույթին փայլեցման հետքերով և աղյուսագույն աստառով, կողապատերից հորիզոնական ակոսով առանձնացված և ուղղահայաց հատույթում ուղղանկյուն բարձր պսակով (տրամագիծը՝ 26 սմ) ու ձվաձև իրանով անոթը (534/2001), միայն քառանկատ բրգաձև ծորակով (մակերևույթը սև փայլեցված, աստառը՝ գորշ) ներկայացված խեցանոթը (354/2001) և այլ կավամաններ: Պեղումներով հայտնաբերվել են նաև բազմաթիվ խեցաբեկորներ, որոնց միջոցով ամոթի ձևը դժվար է վերականգնել, այսինքն, դրանց պատկանելությունը որևէ տիպի կավանոթի հնարավոր չէ միանշանակ հավաստել: Ուստի կարելի է եզրակացնել, որ խեցանոթների տիպաբանական կազմը իրականում ավելի ընդգրկուն է, քան հնարավոր եղավ ներկայացնել:

Հայկական լեոնաշխարհի վաղբրոնզեդարյան խեցանոթների ամենաբնորոշ տարրերից մեկը, իհարկե, կիսագնդաձև կանթն է, տարածված է նաև շուրթից սկսվող երկթեք կանթը: Երբեմն հանդիպում են հորիզոնական հատույթում եռանկյունաձև խուլ բոնակներ (219/2004)²⁶³, ինչպես նաև արմնկաձև ունկեր, որոնք, սովորաբար, սկսվում են միակամք զավաթների շուրթից և իջնում ուսին²⁶⁴: Կուր-արաքսյան խեցա-

²⁶³ Хачатрян, 1975, 64, рис. 20, нижний справа.

²⁶⁴ Абибуллаев, 1982, 302, таб. XXII, 10, 11. Burney, 1961, 151, pl. LXXII, 34.

նոթներին ընդհանուր են նաև ներձկված հատակները, որոնք բազմիցս հայտնաբերվում էին պեղումների ընթացքում (ադ. XXIII,1-3): Մասնավորապես, ներձկված հասակ ունեն վաղորոնգեղարյան բոլոր կճուճները, որոնք գտնվել են Ագարակի I տեղամասում: Մի փոքրիկ լրացում է: Դաշտային հնագիտական աշխատանքների ընթացքում խիստ հաճախակի առնչվում էինք այն փաստին, որ կիսագնդաձև կանթերը հանդիպում էին ամբողջական տեսքով, առանց հավելումների, այլ իոսքով՝ անոթի մյուս մասերից անջատ: Այս երևույթը մեզ հուշեց, որ կիսագնդաձև կանթերը, հավանաբար, պատրաստվել են առանձին և հետո են տեղադրվել անոթի անհրաժեշտ մասում բացված անցքի մեջ: Կանթի հիմքում՝ ողջ պաշտպանով, ակոս է արվել, իսկ կավամանի իրանի համապատասխան մասի եզրերը սրվել են ու կանթն անըացվել է իրանին՝ սուր եզրերը ակոսի մեջ հագցնելով և թաց կավո սեղմելու միջոցով:

Այժմ անդրադառնանք ինքնանոթների լրահարդարմանը: Բաց վարդագույն մակերևույթով կավամաններից մեկի շուրթը եռանկյուն պրիզմայաձև ելուստի տեսքով շարունակվում է դեպի դուրս: Նման հորինվածքները հայտնի են «կեղծ կանթ» անունով, Այս ելուստի դիմային մասը երկու կլոր փոսիկների և մեկ հորիզոնական ակոսի օգնությամբ ձևավորված է: սյնպես, որ այն մարդու դեմք է հիշեցնում (նկ. 40,3, ադ. XXIII,4): Մարդու դեմքի նմանվող ելուստներով վաղորոնգեղարյան քերեղաններ գտնվել են Գառնիի պեղումներում, սակայն՝ վերջիններիս ելուստներն ուղղված են դեպի ներս²⁶⁵: Մարդակերպ և կենդանակերպ լրահարդարումներով անոթներ հայտնի են կուր-արաքսյան այլ հուշարձաններից է: Դիշենք, որ Քեթիում հայտնաբերված քերեղաններից մեկի երկու կանթն էլ պատրաստված են իոյի գլխի ձևով²⁶⁶:

Կենդանիների պատկերներն ի հայտ են գալիս նաև խեցանոթների մակերևույթին²⁶⁷: Վերը հպանցիկ անդրադարձանք նման զարդարանման կարասներից մեկին, որի մակերևույթին այժապատկեր կա (ադ. XXI,4): Կենդանին պատկերված է հարթուռուցիկ եղանակով, այժի գա-

²⁶⁵ Խանգաղյան, 1969, 62-63, նկ. 61:

²⁶⁶ Петросян, 1989, 44, таб. 33,6.

²⁶⁷ Ուշադրության է արժանի այն փաստը, որ Քոսի ճոթերում հայտնաբերված մի խեցաբեկորի վրայի պատկերը ստացել է երկակի մեկնարանություն. այն մի դեպքում եամարվել է գորտի (Մեսրոպյան, 1968, 5, նկ. 5), իսկ մեկ այլ դեպքում՝ մարդու (կնո՞ջ — Գ.Թ.) խորհրդանշական պատկեր (Կարախանյան, 2003, XLVI,1): Դետալքրքիրն այն է, որ այս երկու տարրեր մեկնարանությունները գուցե և չեն հակասում իրար և այստեղ կարելի է տեսնել գորտ-կնոջ կամ այլ խոսքով՝ Նար առավածուհու պատկերը: Վերջին համադրության առնչությամբ տես Բոյան, 1950, 7-11:

վակր ցցուն է, եղջյուրներն աղեղնածև իջնում են դեպի կոր մեջքը, բերանի բացվածքն արտահայտված է սուր անկյան տեսքով: Կարասի բեկորի վրայի այս պատկերն իր արտահայտչականությամբ խիստ ուշագրավ է թվում նույնիսկ մյուս՝ ոչ պակաս գեղեցիկ զարդաբանված, կուր-արաքսյան խեցաբեկորների կողքին: Այծերի փորագրված պատկերներով խեցանոթ է հայտնարեքվել Շենգավթում²⁶⁸: Չնայած կատարման եղանակի տարրերությանը, այծապատկերներից մեկը (ցցուն գավակ, ճկված մեջք, կոր եղջյուրներ) ոճական ընդհանրություն է դրսևորում մեր օրինակի հետ: Իսկ կատարման եղանակով Ագարակի կարասի զարդարանվածքը միանգամայն համադրելի է Հոռոմբ²⁶⁹ և Թալինի²⁷⁰ վաղբրոնզեդարյան խեցանոթների կենդանակերպ պատկերներին և Գառնիի²⁷¹, Գեղարոտի²⁷², Հառիճի²⁷³, Ամիրանիսգորայի²⁷⁴ ու Կիկեթի²⁷⁵ կարասների վրայի հարթուճուցիկ թռչնապատկերներին:

Իհարկե, կուր-արաքսյան խեցեղենի պատկերային հորինվածքն աչքի է ընկնում իրիստ ինքնատիպ ոճով և կատարման յուրահատուկ վարպետությամբ, որի շնորհիվ այն հնարավոր չէ շփոթել որևէ այլ մշակույթի խեցեղենի պատկերազարդման հետ: Հատկապես սիրված է ուռուցիկ-ներճկված զարդարանվածքը, որոնցով օժտված են շրեշրուր-նոխրարլուրյան խմբի խեցանոթների «նավակածև հիմքով» պատկերային հորինվածքները: Արանց հետ միասին հանդես են գալիս նախքան թոժելը ժապավենա-անկյունագծային հորինվածքով և կետ-գծային եղանակով զարդաբանված կավամաններ²⁷⁶, որոնք ստացել են «կառնուտ-շենգավթյան խմբի խեցեղեն» անվանումը: Ուրույն զարդաբանվածքի հիման վրա առանձնացվել են նաև խեցեղենի վանածորյան (անոթի վզի հիմքը զարդաբանված է գծային-երկրաչափական պատկերների նեղ ժապավենով, իսկ ուսերը՝ ուռուցիկ ուղղանկյուններով, որոնք լցված են ներճկված հատիկազարդերով) և արծն-կարագյան (իրար զուգահեռ վերադիր ընկվող թմբիկներ և համակենտրոն շրջաններ կամ ուռուցիկ ներճկված պարույր) հավաքածոները: Ագա-

²⁶⁸ Սարդարյան, 1967, 186, աղ. 60,2: Սարդարյան, 2004, 229, աղ. XCIX,2:

²⁶⁹ Badalyan et al, 1992, 37-38, fig. 5,11.

²⁷⁰ Badalyan, Avetisyan, 2007, 244, 247, pl. III,9-11.

²⁷¹ Խանգաղյան, 1969, 77-78, նկ. 74:

²⁷² Badalyan, Avetisyan, 2007, 101, 105, pl. V,3.

²⁷³ Хачатрян, 1975, 64, рис. 21, средний ряд, справа.

²⁷⁴ Чубинишвили, 1963, 23, 102, рис. 3.

²⁷⁵ Куфтин, 1944, 88, 100, рис. 47,2, 55,4, таб. XXI,1,2.

²⁷⁶ Хачатрян, 1975, 64-68.

րակի կուր-արաքսյան խեցեղենի զարդարանվածքն ուսումնասիրելիս մեզ հաջողվեց նկատել մի շարք օրինաչափություններ: Սկսենք կճուճների պատկերագրությունից, քանի որ դրանք խեցեղեն հավաքածոյում ամենաբազմաքանակ խումբն են կազմում, իսկ դրանց վրայի ուռուցիկ-ներճկված գարդապատկերները ամենատարածվածն են կուր-արաքսյան մշակույթում: Այս գարդարանվածքն է գերիշխում ինչպես երկրորդ տիպի (լայնարերան), այնպես էլ երրորդ տիպի (նեղբերան) կճուճների մակերևույթին: Ագարակյան կճուճների գարդարող պատկերները տեղավորված են բացառապես իրանի միջին հատվածում, հատակամերձ մասի կամ վզի վրա դրանք բացակայում են: Սակայն, եթե II տիպի ամանների վրա «տիեզերական ծառի զույգ ճյուղերը» ներկայացված են իրար զուգահեռ երեք լայն ակոսների միջոցով (աղ. XVII,¹⁻⁶, 394/2001), ապա III տիպի անոթների վրա նույն պատկերն ստացվել է ընդամենը երկու ակոսներով (աղ. XVIII,¹⁻², 385/2001, 393/2001, 211/2004): Եռակոս գարդարանվածքով կճուճների շարքում չենք ընդգրկել ևս մեկ այդպիսի կավաման զուտ այն պատճառով, որ այն ներկայացնող խեցաբեկորի վրա գարդապատկերը թերի է պահպանվել (XVII,⁷): Սակայն հիշյալ խեցատի մակերևույթի գարդապատկերը ուշագրավ է թեկուզ այն տեսակետից, որ սրա վերին հատվածը՝ որպես առանձին հորինվածք, հանդիպում է շեշբուր-մոխրաբլուրյան թասերից մեկի վուս²⁷⁷: Իսկ III տիպի մի անոթ պատկերագարված է քիչ այլ կերպ: Վերջինիս ուսին ելունդ կա, որտեղից թեքությամբ ցած են իջնում իրար զուգահեռ երկու ակոսներ, որոնցից վերինն ավարտվում է պարույրով, իսկ ակոսների միջև խորադիր հատիկագարդեր են (382/2001): Ջարդարանման նման սկզբունքը խորթ չէ մոխրաբլուրյան խեցեղենին²⁷⁸: Հետաքրքիր է, որ գարդապատկերը (բացառությամբ հորիզոնական ակոսների) երբեք չի ընդգրկում որևէ կճուճի ողջ շրջագիծը: Թույլ ներճկված գլանաձև վզով (II տիպի I ենթատիպ) անոթների վզերին բեկյալ ժապավեններ են լցված կետ-գծային պատկերներով (30/2005, 33/2005, 45/2005): Ներճկված կարճ վզով ոչ մեծ կճուճները (III տիպի առաջին ենթատիպ) վզի հիմքում օժտված են քրգաձև կամ կիսաձվաձև փոքրիկ ելունդով ընդհատվող հորիզոնական խորադիր գծով (347/2001, 348/2001, 35/2002): Անվիզ կճուճների խմբում (I տիպ) մեկ խեցատ գարդարանված է ակոսներ-ներճկված պարույր համադրությամբ (58/2001): Այդ տիպի կճուճները, ավելի հաճախ, ուսերին

²⁷⁷ Խանգաղյան, 1964, 221, աղ. I,²:

²⁷⁸ Աարդարյան, 1967, 195, աղ. LXVI,⁵:

կրում են կելծ կանթեր (272/2002, 323/2002), հորիզոնական կամ ուղղածիզ ելունդներ (383/2001, 26/2005): Չատկապես շատ են այն կճուճները, որոնց շուրթը կամ պսակը բացակայում է, սակայն պահպանվել է զարդաբանվածքի որոշակի հատված (աղ. XXIV,¹⁻³, 358/2001, 391/2001, 298/2002 և այլն): Նման դեպքերում, օգտվելով վերոհիշյալ դիտարկումներից, կարելի է փոքրիկ խեցատի հիման վրա որոշել անոթի տիպը: Այսպես, «նավակածն հիմքով կենաց ծառի» վերականգնվող պատկերով եռակուս խեցատներից երկուսը (աղ. XXIV,¹, 358/2001), հավանաբար, պատկանում են կճուճների II (լայնաբերան) տիպին, իսկ երկու ակոսներով կազմված ճյուղերով մեկ այլ խեցաբեկոր (աղ. XXIV,²) կճուճների III (նեղբերան) տիպին: Կան նաև խեցատներ, որոնց մակերևույթին «մակույկածն հիմքով կենաց ծառը» հանդես է գալիս պատկերազարդման այլ տարբերակով: «Ճյուղեր» խորհրդանշուր աղեղնածն երկար զուգահեռ ակոսների միջակայքը լցված է կարճ խորադիր գծերով, իսկ երկու ճյուղերի միջև եղած տարածքում թռչնի ոճավորված պատկեր կա (աղ. XXIV,³, 391/2001, 298/2002): Դժվար չէ նկատել, որ բերված օրինակներում իսպառ բացակայում են պարույրները, փոսիկները կամ համակենտրոն շրջանները, որոնք բնորոշ են «կենաց ծառի» սխեմատիկ պատկերների մյուս տարբերակներին: Չիշյալ զարդաբանվածքով օժտված կավամանների ամբողջական օրինակների հանգամանալից ուսումնասիրությունը հնարավոր կդարձնի քննարկվող խեցաբեկորները անոթների այս կամ այն տիպին դասելը:

Առաջին տիպի թաղարների հայտնաբերված բեկորները զարդաբանված չեն: Թաղարների մյուս տիպերում կան զարդաբանված օրինակներ, սակայն սրանց հատակամերձ մասերը, ինչպես և կճուճներինը, ազատ են թողնված: Բավարար չափով պահպանված նմուշների դիտարկումից երևում է, որ ինչպես լայնաբերան կճուճների, այնպես էլ թաղարների պատկերագրությունը ներառում է «մակույկածն հիմքով և եռակուս ճյուղերով կենաց ծառի» տարբերակները: Երկրորդ տիպի հաստախեցի թաղարներից մեկի իրանի միջին մասի մակերևույթին պահպանվել են հատվածներ նավակածն հիմքից և պարույրի զալարներից (աղ. XXIV,⁴): Չիշյալ պատկերը համեմատաբար ավելի լավ է պահպանված մեկ այլ խեցատի մակերևույթին, որտեղ հստակ երևում են նավակածն հիմքը, իրար զուգահեռ երեք լայն ակոսներով ներկայացված աջակողմյան ճյուղը և վերջինից կախված բազմազալար պարույրը (աղ. XVI,³): Լեկ այլ խեցաբեկորի (III տիպ) մակերևույթի զարդապատկերը նույն բովանդակությունն ունի, միայն վերևում լրացված է թռչն սխեմատիկ պատկերով, որի մաքրման արտահայտված է զու-

գահեռ ակոսների մեջ ամփոփված խորադիր կարճ գծերով, պարանոցը՝ ուղղաձիգ գծով, գլուխն ու կտուցը՝ շեղանկյամբ, զլխի ետևի ոլորված փետուրը՝ միազալաբ պարույրով (25/2005): Մոտավորապես նույնն է պատկերված IV տիպի թաղարների մակերևույթին՝ պսակից ցած (316/2001, 319/2001), իսկ մի դեպքում՝ օլխի ետևի պարույրին փոխարինում է փոսիկը (315/2001):

Քերեղանների առաջին (վզով օժտված) տիպին դասվող մի խնցատի վզից ցած՝ ուսին, հորիզոնական ակոսներով կազմված զարդագոտում, պատկերված են իրար կցված հակադիր եռանկյունիներ կամ, այլ կերպ, քառանկյունիներ՝ անկյունագծերով հանդերձ (աղ. XV,₁): Այս տիպը ներկայացնող խնցատներից մյուսի ներձկված վզի հիմքը զարդարանված է նախքան թոժելը սեղմումով պատկերված բեկյալ ժապավեններով և հատիկներ հիշեցնող իրար զուգահեռ կարճ գծիկներով (աղ. XV,₂): Պայմանականորեն այս տիպին դասվող մեկ այլ խնցարեկոր ուսին կրում է նույն եղանակով և ոճով կատարված պատկեր՝ խորադիր զուգահեռ գծերի ժապավեններով կազմված ու գագաթներով հակառակ ուղղված եռանկյունիներ և ժապավենները լցնող փորագիր կարճ գծիկներ (33/2002): Երկրորդ տիպի (ղուրս՝ թեքվող ու սրվող պսակով) քերեղաններից մեկի ուսին հորիզոնական գիծ է իազված: Այդ գծից վեր՝ մինչև պսակի հիմքը, իրարից 1 սմ ու ավելի հեռավորությամբ զուգահեռ գծերով կազմված բեկյալ ժապավեններ են իազված, որոնց լայնությամբ նույնպես զուգահեռ գծեր են անցնում (278/2001): Ի դեպ, հիշյալ զարդապատկերն անոթի մակերևույթին հագիվ է նշմարվում: Ընտիր կոկված սև մակերևույթով մեկ ուրիշ բեկորի պսակից 1,5 սմ ցած պահպանվել է 1,3 սմ տրամագծով կիսազնդածն ելունը, որի շրջագծի ստորին հատվածը սահմանարաժան դեր է կատարում ամանի ուսի և հատակամերձ մասի միջև: III տիպի քերեղանների ուղղաձիգ պսակները կողապատերի հետ թուփ անկյուն են կազմում: Սրանցից մեկի պսակի արտաքին մակերևույթը հիմքից մինչև պոունկը՝ 1,7 սմ լայնությամբ ժապավենով, զարդարանված է սաղր գծիկներով կազմված և որոշ թեքությամբ ցած իջնող կարճ գծերով ոչ ամբողջությամբ լցված և գագաթներով իրար հակառակ ուղղված եռանկյունիներով (245/2002): Մինչև նույն պատկերագարողումով նման տիպի քերեղան հայտնաբերվել է Գեղարոտում²⁷⁹: IV տիպի քերեղանները՝ ինչպես եզրից անմիջապես ցած տեղադրված կիսազնդածն կանթե-

²⁷⁹ Հայրապետյան, 2002, 29, աջակողմյան հինգերորդը՝ վերևից: Smith et al, 2004, 19, fig. 12, օ. Badalyan, Avetisyan, 2007, 105, pl. V,₁₁.

րով օժտվածները, այնպես էլ անկանթ խեցաբեկորներով ներկայացվածները, պատկերազարդված չեն: Այսպիսով, քննարկվող քերեղանների բոլոր զարդաբանված նմուշների պատկերագրությունը կառուցում-չենգավիթյան ոճի է: Դրանց շարքում առայժմ բացակայում են մոխրաբլուր-շրեշբլուրյան լայնակոս ներճկված-ուռուցիկ զարդաբանվածքով օժտվածները: Սև փայլեցված մակերևույթով միայն մի թասի իրանը՝ հատակամերձ մասից վեր, զարդաբանված է էլառյան ոճով՝ փոսիկով և թեք ակոսներով (աղ. XVI,₁):

Առաջին տիպի գավաթներից մեկի մակերևույթը միջնամասում, կանթի հակադիր կողմում ներճկումով արված մոխրաբլուր-շրեշբլուրյան պատկերային հորինվածք է կրում (աղ. XIX,₁): Ըստ որում, այստեղ «կենաց ծառի ճյուղից» ոչ թե պարույր է կախված, ինչը որ բնորոշ է կճուճների զարդաբանվածքին, այլ՝ զուգահեռագիծ հիշեցնող երկրաչափական պատկեր: Այս զարդապատկերը խորթ չէ շրեշբլուր-մոխրաբլուրյան խեցերլենին²⁸⁰: Ենթադրաբար այս տիպի գավաթների շարքը դասված մեկ այլ անոթի մակերևույթը զարդաբանված է թեք ակոսներով և կարճ գծիկներով լցված երկրաչափական պատկերներով (213/2004): Դրշյալ զարդապատկերի պարզեցված տարբերակը նույնպես հանդիպում է շրեշբլուր-մոխրաբլուրյան խեցերլենի մակերևույթին²⁸¹: Մի ուրիշ գավաթի կանթից ցած առկա է սաղր, րայց մեծ փոսիկ (աղ. XIX,₃), նույն կերպ է լրահարդարված նրբախեցի և շատ փոքրիկ մեկ այլ գավաթ (386/2001): Եբկորդ ախպը ներկայացնող եզակի մի օրինակի կիսազնդած կանթի տակ 1,3 սմ տրամագծով փոսիկ է արված (6/2002): Երրորդ տիպին դասվող գավաթներից մեկը զարդարանված է վանաձորյան ոճով (աղ. XIX,₄): Վճի հիմքը զարդաբանված է գծային-երկրաչափական պատկերների նեղ ժապավենով, իսկ ուսերը՝ ուռուցիկ ուղղանկյուններով, որոնք լցված են ներճկված հատիկազարդերով: Նման պատկերազարդ խեցանոթներ հայտնի են Քոսի ճոթերից²⁸², Լաշտոցի ըլուրից²⁸³, Ալավերդու շրջանից²⁸⁴, իսկ միայն ուսերի զարդաբանվածքով՝ Գառնիից²⁸⁵: Թույլ ներճկված կարճ վզով (IV տիպի) բոլոր գավաթների վաղի հիմքով զույգ հորիզոնական ակոսներով ընդգծված ժապավեն է անցնում, որը զարդարված է կետ-գծային երկ-

²⁸⁰ Байбуртян, 1937, 212. Խանգաղյան, 1964, 221, աղ. I,₆:

²⁸¹ Խանգաղյան, 1964, 225, աղ. II,₆:

²⁸² Ханзадян, 1963, 156, рис. 5,₁.

²⁸³ Խանգաղյան. 1967, 74, նկ. 22, աղ. XXII:

²⁸⁴ Դևեթյան, 2001, աղ. I,₂:

²⁸⁵ Խանգաղյան, 1969, 51, նկ. 42:

րաչավական պատկերներով: Մի անոթի վրա՝ ունկի ստորին հատվածի մակարդակում, զարդաբանված է կառնուտյան ոճով: Այն է՝ գավաթի վզի հիմքն օղակող ծոպերիզի վրա բեկյալների նեղ ժապավեններ են լցված իրար զուգահեռ կարճ գծիկներով (392/2001): Կետ-գծային եղանակով զարդաբանված անոթներից երեքի մակերևույթի պահպանված հատվածները վզից ցած զուրկ են պատկերներից: Դրանցից մեկն օժտված է կանթով (392/2001), մեկ այլ ինքատի շուրթը ելնդավորված է (174/2002), երրորդի վրա՝ օղակող ժապավենի վրա նախկինում զարդապատկերի առկայությունը (հագիվ նշմարվող բեկյալներ) կարելի է միայն ենթադրել (521/2001): Մյուս երկու գավաթների ուսերը ևս զարդաբանված են լայն ակոսներով (32/2002, 32/2005), իսկ առաջինի վզի հիմքում հագիվ նշմարվում է կանթի հետքը:

Բաժակ-գավաթի վրա, կանթի ստորին հատվածի մակարդակում զարդաբանված է նեղ ժապավենով: Մեկ զույգ սադր, հորիզոնական զուգահեռ ակոսների միջև նախքան թծելը սեղմունով արված և գազաթներով հակառակ ուղղված եռանկյունիներ են, որոնք լցված են հորիզոնական խորադիր կարճ գծերով (365/2001): Բաժակներից մեկի հատակից անմիջապես վեր, հորիզոնական ակոսների միջև ընկած ժապավենը լցված է ներճկված հատիկազարդերով: Քիչ ավելի լայն մեկ այլ զարդագոտու օգնությամբ բաժակի 7,1 սմ տրամագիծ ունեցող բարձր պսակն առանձնացված է իրանի մնացած մասից (ադ. XX,₁): Մյուս օրինակի՝ հարթ հատակից վեր գտնվող ուռուցիկ մասը կրում է քննարկվող մշակույթին հատուկ «բուսական» զարդագոտի (ադ. XX,₂): Հատկանշական է, որ պատկերազարդվել են նաև բաժակների կրնկաձև շեշտված ստորին հատվածները, ի տարբերություն կճուճների, որոնց հատակամերձ մասերն ազատ են թողնվել:

Չեռք բերված բոլոր այն գավերը, որոնք դասվել են առաջին տիպին, այս կամ այն կերպ զարդաբանված են: Սրանց վզի հիմքով հորիզոնական խորադիր գիծ է անցնում, որից ցած դիմային մասը զարդաբանված է վուսիկներով կամ ուռուցիկ-ներճկված համակենտրոն շրջաններով, որոնք երբեմն նույն բարձրության վրա կից զույգերով են հանդես գալիս (ադ. XX,₃, XXIV,₅, 360/2001, 348/2002, 198/2004): Այս պարզ ու անպաճույճ լրահարդարումը, հավանաբար, ունեցել է ոչ միայն գեղագիտական, այլ նաև՝ գործնական նշանակություն: Բանն այն է, որ գավերի մակերևույթը զարդարող փոսիկները, գրեթե միշտ, արված են մաքուր մատների չափով և իբանի այնպիսի հատվածում, որ հարմար լինի գավը բռնելու համար: Երբեմն, կիրառական նույն նպատակը կարող էին ունենալ նաև այս տիպի ըմպանակների ելունդ-

ները²⁸⁶: Հիշյալ կարծիքը կարող է հաստատվել նաև մեր դիտարկումների արդյունքում: Քննարկվող գավաթից մեկը կտցավոր է, որից ցած ուսին, ելունդ է թողնված ու վերջինիս տակ փոսիկ է արված (ադ. XX,₃): Գավը բոնողի բութ մատը չի կարող դուրս սահել փոսիկից, քանի որ անմիջապես վերևում գտնվող ելունդը դրան արգելք կհանդիսանա²⁸⁷: Փոսիկ է արված նաև հանդիպակաց կողմում, որն արդեն հարմար է միջնամատը դնելու համար: Իսկ կանթով օժտված գավաթների վրայի փոսիկները և ելունդները, ընկանարար, ծառայել են բացառապես անոթների գեղարվեստական հարդարմանը և կիրառական նշանակություն ունենալ չէին կարող:

Գլանաձև մեծ անոթի հատակի կողային մասը դրսից զարդաբանված է իրար գուգահեռ ուղղածիզ սադր գծերով կիսով չափ լցված ու գագաթներով հակառակ ուղղված ներձկված եռանկյունիներով (390/2001)²⁸⁸: Հիշենք, որ այս զարդաբանվածքը հանդիպում է կողապատերի հետ բութ անկյուն կազմող ուղղածիզ պռունկով (III տիպ) քերեղաններից մեկի պսակի վրա (245/2002): Այսպիսով, եթե գլանաձև անոթի դեպքում հիշյալ պատկերաչառը տեղադրվել է կավամանի ամենաստորին մասում, ապա քերեղանի դեպքում՝ ամենավերին հատվածի մակերևույթին: Հատած կոնաձև ինքնանոթի մակերևույթով, հատակից 1,7-2 սմ բարձրության վրա հորիզոնական խորադիր լայն գիծ է անցնում: Վերջինից ցած՝ հատակի մակարդակում, կավամանը զարդարված է հատակից մինչև խորադիր գոտին հասնող իրար գուգահեռ թեք ակոսներով (ադ. XXI,₁):

Խիստ հետաքրքիր են գնդաձև անոթների պատկերագրության ուսումնասիրության արդյունքները, որոնցից մեկի մակերևույթին նույնպես հանդիպում է հակադիր ուղղված ու գծածածկ եռանկյունների վերոհիշյալ պատկերագրոտին, որը, ինչպես քերեղանի դեպքում, տեղադրված է կավամանի ամենավերին հատվածում, եզրի և դրանից 2,7 սմ ցած անցնող հորիզոնական ակոսի միջև (331/2001)²⁸⁹: Նման հորիզոնական խորադիր գոտիների օգնությամբ մյուս գնդաձև անոթների եզրերին կից նույնպես առանձնացվել են լայն ժապավեններ, որոնցից յուրաքանչյուրը զարդարանված է կրում: Դրանցից մեկի մակերևույթին պատկերված են լայնակոս ռեկյալներ, որոնցով առաջացած անկ-

²⁸⁶ Куптин, 1944, 99.

²⁸⁷ Ասվածից, իհարկե, չի հետևում, որ ելունդի առկայությունը պարտադիր է: Կան նաև կտուցի տակ միայն փոսիկով օժտված գավեր. տե՛ս Խանգադյան, 1969, 30-31, նկ. 28:

²⁸⁸ Badalyan, Avetisyan, 2007, 31, pl. V,₅.

²⁸⁹ Badalyan, Avetisyan, 2007, 31, pl. V,₆.

յունները լցված են դեպի վեր և դեպի ցած ուղորվող միազալար պարույրներով (193/2002): Դժվար չէ նկատել, որ մեր օրինակի վրա նույնությամբ կրկնվում է մոխրաբլուրյան ամանների զարդամոտիվներից մեկը²⁹⁰: Ինչ վերաբերում է մյուս երեք նույնատիպ անոթներին, ապա սրանք զարդաբանված են գրեթե միակերպ՝ լայնակոս բեկյալներով (երբեմն՝ գույգ գծերով), որոնց միջև եղած տարածությունը զբաղեցնում են ներճկված-ուռուցիկ համակենտրոն շրջանները, փոսիկները և հատիկազարդերը կամ խոբադիր, լայն ու երկար գծերը (13/2002, 31/2005, 42/2005): Թեև դժվար է վերջնական եզրակացության հանգել, քանի որ պատկերները հեռու են ամբողջական լինելուց, այնուամենայնիվ, դրանցից առնվազն առաջին երկուսը բուսական խորհրդանիշներ են թվում: Միայն այս ինքնատիպ զարդարանվածքի հիման վրա, հավանաբար, հնարավոր է վերականգնել ողևէ անոթի պատկանելությունը գնդաձև դասին, եթե նույնիսկ դրա եզրը պահպանված չլինի:

Սափորներից մեկի կոնաձև վիզը ստորին հատվածում զարդաբանված է ներճկված հատիկներով լեցուն բեկյալ նեղ ժապավեններով, հատիկաշար պարույրով և երկբաջափական պատկերների բարդ հորինվածքով (աղ. XXI,₂): Մեկ ուրիշ սափորի կոնաձև վզի հիմքը օղակված է հատիկաշար ոլոբանախշի և եռանկյունիների ժապավենով (387/2001)²⁹¹: Մի այլ սափորի բարձր վրզը պատված է, գալարազարդերով, ներդրված շեղանկյուններով ու եռանկյուններով, որոնց միջակայքը լցված է կաբճ գծիկներով (47/2005): Արա վզին նույնպես հատիկաշար միազալար պարույր է առկա: Բոլոր զարդագոտիները լայն են և ներառված հորիզոնական գույգ ակոսների միջև, որոնցից ստորինը ռաժանում է անոթի ուսագլուխը վզի հիմքից: Սափորների II տիպը ներկայացնող խեցաբեկորը նույնպես զարդաբանված է: Սրա վզի հիմքում պատկերված են զուգահեռ կողմերով, գագաթներով հակառակ ուղղված հավասարասրուն եռանկյունիներ՝ միջնագծերով հանդերձ (աղ. XXI,₃): Ջարդաբանվածքը կատարվել է թօծումից առաջ՝ թաց կավի վրա սեղմելու եղանակով, Այսպիսով, Ազարակում մինչ այժմ հայտնաբերված սափորներից ոչ մեկի ուսերը պատկերազարդ չեն: Դրանք զբաղեցնում են միայն անոթի վզի հիմքը և նման են կառնուտ-շենգավիթյան խմրի խեցեղենի զարդապատկերներին:

Իր տեղում արդեն խոսվել է Ազարակում հայտնաբերված (չճշգրտված տիպի) կարասի մի բեկորի վրայի հարթուռուցիկ այծա-

²⁹⁰ Խանգաղյան, 1964, 221, աղ. I,₂: Սարգսյան, 1967, 189, աղ. LXII,₃:

²⁹¹ Badalyan, Avetisyan, 2007, 31, pl. V,₁.

պատկերի մասին (աղ. XXI,⁴): Այժմ պատկերումը խեցանոթի մակերևութին կարող է հուշել, որ այն նախատեսված է եղել քրի (հեղուկի՞ – Գ.Թ.) համար²⁹²: Կարասների I տիպին պատկանող մյուս հաստախեցի անոթի իրանի ընկորի մակերևութի զարդաբանվածքն արծն-կարազյան տիպի է՝ իրար զուգահեռ վերադիր բեկվող թմբիկներ և համակենտրոն շրջանագծեր կամ ուռուցիկ պարույր (աղ. XXI,⁵): Հիշյալ զարդաբանվածքով և սև փայլեցված մակերևութով ինքատներ գտնվել են Կարագում, Պուլուրում²⁹³, Էլաոում²⁹⁴, Բեշտաշենում²⁹⁵ և այլուր:

Ազարակի կուր-արաքսյան խփերի մակերևութը, հաճախ, զարդաբանված է օղակաձև զուտիներով, որոնց մեջ սեղմունով արված բեկյալ գծեր են և երկար հատիկազարդեր: Ներձկված-զոգավոր մակերևութով մի խուփ՝ րարձր կողից դեպի կենտրոն ճկվող թեք մասում, ժապավենաձև զարդաբանված է բեկյալ ակոսներով, որոնցով կազմված անկյունները լցված են իւփի (նաև՝ պատկերազարդ ժապավենի) շրջագծին զուգահեռ խորադիր երկար հատիկազարդերով՝ (աղ. XXII,³): Նմանատիպ մի խուփ էլ կողաթմբիկից դեպի կենտրոնական հատված ճկվող մասում զարդարանված է ուղղաձիգ կարճ գծերով ոչ ամբողջությամբ լցված և սաղր գծիկներով կազմված ու զազաթներով իրար հակառակ ուղղված եռանկյունիներով (346/2001): Մեկ ուրիշ խուփ, որի կողային բարձր հատվածն արտահայտված է օղակաձև հորիզոնական թմբիկի տեսքով, նույնպես զարդարանված է սեղմունով արված բեկյալով և ուղղաձիգ կարճ գծիկներով (190/2002): Հիշենք, որ վերջին երկու խփերի զարդապատկերը հանդիպում է նաև III տիպի մի քերեղանի պսակի, զնդաձև անոթներից մեկի եզրամերձ հատվածի և գլանաձև անոթի ստորին մասի վրա: Հետաքրքիր է, որ Արևիկում²⁹⁶, Նախնավանում²⁹⁷, Համիճում²⁹⁸, Հոռոմում²⁹⁹, Շիրակավանում³⁰⁰, Ջրածորում³⁰¹ գտնված խփերը ևս զարդարված են երկրաչափական պատկերներով

²⁹² Антонова, 1984, 128.

²⁹³ Koşay, 1970, phot. 6,7. Ըստ լուսանկարների մակագրության, դրանք համարվում են թևավոր րոչունների պատկերներ:

²⁹⁴ Լալայան, 1931, 61, նկ. 13:

²⁹⁵ Куфтин, 1944, 102, рис. 57.

²⁹⁶ Ханзадян, 1969, 158, рис. 1,4.

²⁹⁷ Абибуллаев, 1982, 133, таб. XXI,^{9,14}.

²⁹⁸ Хачатрян, 1975, 73-74, рис. 34.

²⁹⁹ Badalyan et al, 1992, 37, 39, fig. 6,7.

³⁰⁰ Թորոսյան և այլք, 2002, 13, աղ. IV,¹²:

³⁰¹ Հակոբյան և այլք, 1993, 107, աղ. CXVI,⁶:

(հիմնականում՝ ռեկյալ գծերով), որոնք նույնպես դասավորված են օդակաձև ժապավենով, սակայն դրանք, հաճախ, ծածկում են դեպի եզրը իջնող թեք հատվածը: Ըստ երևույթին, նույն հատվածարածնում են տեղադրված նաև Կառնուտում ի հայտ եկած խփերի զարդապատկերները³⁰²: Իսկ Ազարակում, առայժմ, չի հայտնաբերվել որևէ խուփ, որի եզրին կից թեք մասը զարդարանված լինի:

Ազարակում պեղումներով գտնված ամոթի հենակներից կամ հենակ-պատվանդաններից միայն մեկն է զարդարանված: Սրա պսակի ներսի եզրին, շրջագծի և դրան զուգահեռ խորադիր գծի միջև 1,5 սմ - լայնությամբ ժապավենի վրա, պատկերված են հակադիր գագաթներով հավասարասրուն եռանկյունիներ և դրանց միջնագծերը: Սադր գծիկներից կազմված զարդապատկերը կատարված է սեղմելու եղանակով, հիշյալ իրը թոժելուց առաջ (ադ. XIV,1): Լևա հիշեցնում է Լ տիպի սափորներից մեկի վրի հիմքի զարդարանվածքը:

Ինչպես վերև արդեն ասվել է, սովորաբար, պատկերազարդ է տակդիրների կամ եռոտանի պատվանդանների միայն մեկ կողմը՝ դիմային մասը: Ըստ, որում, զարդարանվել է ոչ միայն կողմնային միստը, որը ստորին մակարդակում աղեղնաձև իրար է կապում երկու ռտքերը, այլև վերջիններիս համապատասխան հատվածները ևս: Երկմիստ անկյուն հիշեցնող ռտքերը վերին հարթակի նկատմամբ տեղադրված են որոշ թեքությամբ, այդպիսով հենման կետերը դարձնելով ավելի կայուն: Յետաքրքիր է, որ Շիրակավանում³⁰³ և Քեթիում³⁰⁴ հայտնաբերված նմուշների վերին հարթ մակերևույթը նույնպես պարուրազարդ է:

Տակդիրների Լ տիպը ներկայացնող «ոտքի» ռեկորի մի կողմը զարդարանված է ներքևում անկյուն կազմող ակոսներով և խորադիր խոշոր հատիկազարդերով, որոնք պարուրում են դիմային միստի եզրերը (145/2002): Այուս թերի տակդիրից պահպանվել է վերին հատվածը, որը հնարավորություն է տալիս լրացնել նախորդ զարդապատկերի րացակայող մասերից մեկը, քանի որ երկրորդ գտածոյի թերի պահպանված միստերից մեկի վրա արված են կողերին զուգահեռ (վերևում անկյուն կազմող) ակոսներ, եզրերին նույնպես առկա են խորադիր թեք հատիկաձև զարդեր, իսկ թեքությամբ դեպի վերին անկյունը ձգվող զուգահեռ ակոսների միջև հորիզոնական խորադիր հատիկազարդեր են (244/2002): Ամենազեղեցիկ և համեմատաբար լավ պահպանված ե-

³⁰² Бадалян, 1984, 231.
³⁰³ Թորոսյան և այլք, 2002, 14, ադ. 11,8:
³⁰⁴ Петросян, 1989, 39, 45, таб. 34,4.

ռոտանի պատվանդանն օժտված է ընտիր փայլեցված սև մակերևույթով: Արա մեկ նիստը զարդարանված է հետևյալ կերպ. հորիզոնական ակոսով առանձնացված մեդ. եզրածոփորին զույգ խորադիր զուգահեռ կարճ գծիկներով կազմված ռեկյալ է պատկերված: Դրանից վեր՝ երկար ակոսներով կազմված անկյուններ են և ներճկված-ուռուցիկ միագալար պարույր (ադ. XIV₂): Հաջորդ եռոտանի պատվանդանի նիստերից մեկին նույն եզրազարդերն են և ակոսավոր «շրջանակը», որի ներսում երևում է ներճկված-ուռուցիկ զարդարանվածքը՝ մասամբ պահպանված պարույրներ կամ համակենտրոն շրջանագծեր, ադեդնաձև ակոս և զուգահեռ թեք խորադիր գծերի միջև հորիզոնական դիրքով իրար տակ դասավորված ներճկված սերմնազարդեր կամ «աստիճանազարդ» (388/2001): Ոչ նույնական, բայց սկզբունքորեն նման ոճով է զարդարանված ևս մեկ տակդիրի նիստի ոչ մեծ խեցարեկորը (192/2002): Մի ուրիշ տակդիրից պահպանվել է պատկերազարդ նիստի հատվածը: Եզրին նույն թեք խորադիր սերմնազարդերն են և «շրջանակի» հորիզոնական ակոսը, իսկ վերևում՝ զուգահեռ կողմերով և հակառակ ուղղված զազաթներով եռանկյունիներ են՝ միջնագծերով հանդերձ: Եռանկյունների զուգահեռ կողմերի միջակայքը լցված է ներճկված սերմնազարդերով, իսկ ներսում՝ միջնագծի մի կողմում, միագալար պարույր է, մյուս կողմում՝ հորիզոնական հաջորդական դասավորությամբ խորադիր գծեր (381/2001): II տիպի եռոտանի պատվանդանները ներկայացված են ոտքերի երկու զարդարանված ռեկորներով (543/2001, 209/2004): Քիչ բան կարելի ասել սրանց զարդապատկերների մասին: Առաջին ոտքի վրա պահպանվել են միայն երկու խորադիր հատիկաձև եզրազարդ և երկու ակոսներով կազմված և ցած ուղղված զազաթով անկյան մի փոքրիկ հատված, որը հավանաբար մնացել է նիստը եզերող շրջանակից (543/2001): Երկրորդ ոտքի վրա դիտվում է նիստը եզերող ակոսավոր շրջանակի քիչ ավելի մեծ մի հատված, որի ներսում լայնակոս ադեդ է և «աստիճանազարդ» (209/2004): Այսպիսով, ազարակյան վաղորոնգեդարյան խեցեզործարվեստագետը նախազարդ շրջանակի մեջ է առել եռոտանի տակդիրների նիստերից մեկը և այն ամբողջությամբ «նկարազարդել»: Տակդիրների I տիպի զարդապատկերներն իրար հետ ընդհանրություններ են դրսևորում ինչպես հորինվածքի, այնպես էլ ոճական առումով: Թեև դրանք լիովին չեն նույնանում շրեշրլուր-մոխրարլուրյան խմրի

տակդիրների զարդարանվածքին, այնուամենայնիվ, դրանց հետևս ոճական մի շարք աղբյուրներ ունեն: Ավելի կարևոր է այն հանգամանքը, որ ընդհանուր են պատկերազարդման սկզբունքները: Մոխրաբլուր-շրեշբլուրյան տակդիրները նույնպես օժտված են միակողմանի զարդապատկերով, որը դիմային նիստը ծածկել է ամբողջությամբ³⁰⁵:

³⁰⁵ Խանզադյան, 1964, 225, աղ. II, 7: Խանզադյան, 1967, աղ. XVIII, ստորինը:

Տնտեսության հիմնական և օժանդակ ճյուղերը

Ինչպես պարզ դարձավ Ագարակի վաղբրոնգեղարյան բնակատեղի բնակարանաշինությունն ու արհեստներն ուսումնասիրելու ընթացքում, հիշյալ հնագիտական համալիրը նմանություններ է դրսևորում շենգավիթյան մշակույթի հուշարձաններին, հատկապես՝ նախալեռնային գոտում գտնվողներին: Իսկ այդ տիպի բոլոր հուշարձանները՝ Քոսի ճոթերը, Գառնին, Էլառը և մյուսները, ներառյալ մշակույթի անվանադիր հնավայրը՝ Շենգավիթը, նպաստավոր պայմաններ ունեին թե՛ երկրագործության, թե՛ անասնապահության զարգացման համար: Տնտեսության հիմնական ձևը երկրագործությունն էր, անասնապահության հետ գուգակցված³⁰⁶: Երկրագործությունը և անասնապահությունը վաղբրոնգեղարյան բոլոր այս բնակավայրերի տնտեսության հիմքն էին կազմում, իսկ որսորդությունն ու ձկնորսությունը օժանդակ դեր էին կատարում³⁰⁷:

ա) Երկրագործությունը

Այսրկովկասը (իմա՝ Հայկական լեռնաշխարհը) հետազոտողներին վաղուց հայտնի է որպես կարևորագույն տարածաշրջան, որտեղից ծագում են հացահատիկի, ընդեղենի, խաղողի և պտղատու ծառերի բազմաթիվ տեսակներ³⁰⁸: Այս ընաշխարհը վայրի և մշակովի խաղողի կազմավորման հիմնական օջախն է³⁰⁹, այստեղ է սկիզբ առել խաղողագործությունը և ծիբանենու մշակությունը³¹⁰: Հայկական րարծրավանդակը ցորենի փափուկ տեսակների, աշորայի կամ տաըեկանի, վուշի (կտավատի), առվույսի բնօրրաններից է³¹¹:

Ագարակի կուր-արաքսյան համալիրի պեղումներով ձեռք բերված

³⁰⁶ Սարդարյան, 1967, 230:

³⁰⁷ Ханзадян, 1963, 155. Խանզադյան, 1969, 23-25: Կարծիքը, որ Էլառի վաղբրոնգեղարյան տնտեսությունը «հիմնականում անասնապահական ընկույթ ուներ» (Խանզադյան, 1979, 56-59), չի կարելի եիմնավորված համարել:

³⁰⁸ Вавилов, 1940, 63, 65.

³⁰⁹ Лисицына, Прищепенко, 1977, 19.

³¹⁰ Вавилов, 1930, 226.

³¹¹ Вавилов, 1931, 163.

հնարուսարանական տվյալները, ցավոք, չափազանց աղքատիկ են, ուստի առայժմ չենք կարող հանգամանալից խոսել տեղի բնակիչների կիղմից մշակվող բույսերի, ինչպես նաև տարբեր նպատակներով օգտագործված վայրի տեսակների մասին: Այնուամենայնիվ, նմանօրինակ որոշ փաստեր արդեն գտնվել են: Պեղումների ընթացքում բազմիցս հայտնաբերվել են հացաբույսերի հատիկների և կտրտված-մանրացված հարդի հետքեր, որոնք, բարեբախտաբար, պահպանվել էին հում (չթրծած) աղյուսների, կլոր կացարանների պատերի ծեփի և հատակների կավասվաղի, ինչպես նաև հարդախառն խեցեղենի մակերևույթին³¹²: Ինչպես հայտնի է, հարդը ստացվում է հացահատիկի ցողունների կտրտված մնացորդներից (կալսումից)³¹³, ուստի հիշյալ մնացորդներն ակներև վեայություններ են հացահատիկի գործածության վերաբերյալ: Բացի այդ, M₆ քառակուսուց գտնվել է հացաբույսի ածխացած հատիկ: Հնարուսարանական տվյալների կապակցությամբ, առիթից օգտվելով, հիշենք նաև փտած եղեգնի ծածկույթի առկայությունը: Ի դեպ, եղեգնի խրձերը գործածվել են ոչ միայն ծածկերի համակարգում, այլև դրանցով պատվել են հացահատիկի ամբար-մթերապահոցների հատակն ու կիղերը: Ինչպես տեսնում ենք, բնակավայրում երկրագործության մակաբղակի մասին պատկերացում կազմելու համար միայն այս կարգի տվյալները, ամեն դեպքում, իսիստ անբավարար են:

Ասկայն, հնագիտական հետազոտությունների ոչ պակաս կարևոր այլ արդյունքներ կան, որոնք մեզ հիմք են տալիս տնտեսության վերաբերյալ եզրակացություն կայացնել: Տեղական տնտեսության ընդգծված երկրագործական բնույթն են վեայում պեղումներով հայտնաբերված մթերապահոց-ամբարները, աշխատանքի գործիքները, կենցաղային առարկաները և այլ «կռղմնակի» փաստեր: Ինչպես արդեն ասվել է, N 2 կլոր կացարանի կցակառույցի մի հատվածը երկու քարաբեկորների օգնությամբ առանձնացված է եղել մնացած տաբածքից (նկ. 25) և, հավանաբար, ծառայել է որպես մթերապահոց-ամբար: Այստեղ, ըստ երևույթին, հացահատիկ է պահվել: Ամենայն հավանականությամբ, նման ամբար եղել է նաև N 1 բնակելի շինությանը կից կառույցում: Գիշտ չի լինի ենթադրել, որ վաղբրոնզեդարյան կացարանների կցա-

³¹² Եթե առաջին երկու դեպքում այդ հետքերը օրգանական մնացորդների փտելու արդյունք են, ապա վերջինում դրանք առաջացել են խեցանոթների թրծման ժամանակ բուսական խառնուրդների այրվելու հետևանքով:

³¹³ Կարախանյան, 2003, 150:

կառույցները ծառայել են որպես գուտ ամբարատներ, որոնց մասին քիչ չեն ազգագրական տեղեկությունները³¹⁴: Ասկայն, ակնհայտ է, որ դրանք նաև մթերանոցներ են եղել, հատկապես, երբ բնակելի տունը միայն մեկ կցակառույց է ունեցել: Հավանական է, որ այստեղ պահվել են այլևայլ պարագաներ, այդ թվում՝ աշխատանքի գործիքները:

Հացահատիկն ու այլ բույսերը ենձելու կամ հավաքելու ժամանակ, երկրագործական մթերքները վերամշակելիս, հողամշակման և ոռոգման աշխատանքների ընթացքում լայնորեն կիրառվել են քարե գործիքները: Հացաբույսերը հնձում էին կայծքարե (հազվադեպ՝ վանակատե) ներդիրներից կազմված պահանգավոր մանգաղներով (աղ. II, 1-6) և վանակատե կամ կայծքարե երկար, նեղ շեղբերով՝ հնձի դանակներով (աղ. II, 7-9): Հացահատիկն աղում էին քարե աղորիքներով (նկ. 35), ու բոնցից Ազարակում գտնվել են տասնյակ օրինակներ: Ամնդերն ու սանդկոթերը գործածվել են ձավար ծեծելու (հացահատիկը թեփազերծելու), քարաղ փշրելու, հավանգներն ու հավանգակոթերը՝ կորիզներ ու պտուղներ, զանազան ընդեղեն, բույսերի պճեղներ (կոճղեզներ) ու արմատներ, ներկատու բույսեր մանրելու համար: Ազարակում հավանական է համարվում վստորոնգեղսրյան ժայռակերտ սանդերի առկայությունը: Համարժեք նպատակներով գործածվել են նաև քարե տրորիչներ և թակեր: Հողամշակման և ոռոգման աշխատանքներ կատարելիս, ըստ երևույթին, օգտագործվել են գետաքարե րրիչներ: Ամեն դեպքում, դժվար չէ նկատել, որ Ամրերը գետակի բարձրադիր ափին «բազմած» բնակավայրի դիրքը հնարավորություն էի ընձեռում առափնյա հողերի մշակության եամար՝ առանց լրացուցիչ ու աշխատատար ջանքերի: Ասկայն, իհարկե, կարող էին օգտագործվել ոչ միայն գետափնյա հողակտորները: Այս կապակցությամբ հարկ է ընդգծել սայլերի առկայությունը, որը կարելի է վերականգնել սայլանիվների բազմաթիվ մանրակերտերի և եզան արձանիկի հայտնաբերման հիման վրա: Ի դեպ, հարևան Շիրակո տարածքում՝ Հառիճում, հայտնաբերվել են կուր-աըաքայան սայլերի ամրողջացող մանրակերտեր³¹⁵, որոնք նույնպես մեր եզրահանգումը հաստատող կարևոր փաստեր են: Բերքը, հավանաբար, բնակավայր է տեղափոխվել սայլերով, որոնց գոյությունը կարելի է ապացուցված համարել:

Կան նաև հնագիտական այլ կարգի փաստեր, որոնք նույնպես կարելի է կողմնակի վկայություններ համարել գարգացած երկրագոր-

³¹⁴ Մարության, 1987, 68:

³¹⁵ Хачатрян, 1975, 73-74, 77, рис. 35, 37, верхний справа.

ծության, մասնավորապես՝ այգեգործության, գոյության վերաբերյալ: Մենք, նախ և առաջ, նկատի ունենք տարրեր տիպի կարասների ռազմաթիվ ռեկորդների առկայությունը հնագիտական հուշարձանի կուր-արաքյան շերտում: Դրանք, ինչպես հայտնի է, նախատեսված են եղել հացահատիկ³¹⁶ կամ գինի պահելու համար: Ջարգացած խաղողագործության և գինեգործության վերաբերյալ կողմնակի վեսայություններ կարելի է համարել նաև խոշոր սափորների, նրրագեղ գավերի ու գավաթների, զուցե նաև՝ ծորակավոր անոթի ագարակյան գտածոները³¹⁷: Իսկ սաջերի առկայությունը հուշում է հաց թխելու և հատիկներ աղանձելու մասին, այսինքն, դրանց գոյությունը պայմանավորված է որպես սննդամթերք հացահատիկի գործածությամբ: Ագարակի կուր-արաքյան խեցեղենի զարդարանվածքը նույնպես կարող է հուշել, թե տնտեսության որ ճյուղն էր առաջնայինը: Տեղին է կրկին հիշել շրեշբուր-մոխրարլուրյան խմորին պատկանող կավամանների պատկերագրողման սիրված թեման՝ «մակույկաձև հիմքով» հորինվածքները, որոնք համարվում են կենաց (իմա՝ *տիեզերական*) ծառի խորհրդանշական պատկերներ: Ամեն դեպքում, աչքի է զարնում զարդարանման ռուսական ոճը, իսկ ռազմաթիվ խեցանոթների մակերևույթը զարդարում են ներճկված հատիկաշարերը: Կարծում ենք, որ Ագարակում հասկազարդ անոթների ի հայտ գալը զուտ ժամանակի խնդիր է³¹⁸:

Այսպիսով, մեր ուսումնասիրությունների արդյունքում պարզվում է, որ պեղումներով հայտնարերված քարե գործիքների մեծ մասը կիրառվել է ռուս երկրագործության մեջ և դրանից ստացված մթերքների վերամշակման ասպարեզում: Այդ մթերքները պահելուն են կոչված եղել մթերանոց-ամրարները և կարասները: Խեցանոթների մի շարք տեսակներ ծառայել են գինի մատուցելու և օգտագործելու նպատակին: Ուստի, սխալ չի լինի եզրակացնել, որ Ագարակի շենգավիթյան ընակավայրի տնտեսության մեջ երկրագործությունն առաջատար դեր է խաղացել:

³¹⁶ Հացահատիկ պահելու համար նախատեսված կարասները, սովորաբար, հատակին կամ հատակամերձ մասի վրա անցք են ունեցել. տե՛ս Хачатрян, 1975, 62-63. Бадалян, 1984, 232-233. Մարության, 1987, 68: Ներսում օգի շրջանառությունն ապահովելու նպատակով կարող էր անցք բացվել նաև անոթի վզին (Дедабришвили, 1969, 68-69, рис. 18,1):

³¹⁷ Հայկական լեոնաշխարհում վաղ որոնգի դարաշրջանի հնձանների, գինեգործության և խաղողագործության վերաբերյալ տե՛ս Թումանյան, 2008ա, 10-11:

³¹⁸ Նման անոթներ գտնվել են Շենգավիթում (Մարդարյան, 1967, 192, աղ. LXIV,7: Sagona, 1984, fig. 117,118), Շրեշ բլուրում (Խանգաղյան, 1967, 72, նկ. 20), Քոսի ճոթերում (Մեսրոպյան, 1968, 2-3, նկ. 1), Արևիկում (Ханзадян, 1969, 168, рис. 9,1):

բ) Անասնապահությունը

Վաղբրոնզեդարյան անասնապահության մասին են վկայում, նախ և առաջ, ընտանի կենդանիների ոսկորները, որոնք հայտնաբերվել են համապատասխան շերտում: Սրանց շարքում ամենից ուշագրավը կուր-արաքսյան մոխրաշերտում (I₁₁ քառակուսի, խոր. 2,60 մ) հայտնաբերված ցլի գանգն է³¹⁹: H₁₂ քառակուսում, 1,25-1,85 մ խորությունում գտնվել են նաև շան (1 միավոր), խոզի՝ (1 միավոր), կովի (28 միավոր), ոչխարի (1 միավոր), ոչխարի և/կամ այծի (20 միավոր) ոսկորներ³²⁰: Այսինքն, ակներև է կաթի ու կաթնամթերքների գործածությունը: Միևնույն ժամանակ, քիչ չեն նաև քարե այն առարկաները, որոնք կարող էին գործածված լինել անասնապահական մթերքները վերամշակելիս: Դրանք, նախ և առաջ, հնավայրի պեղումներով հայտնաբերված վանակատե և կայծքարե գործիքներն են, որոնք կարող էին կիրառվել անասունները (նաև՝ որսի կենդանիները) մորթելու, քերթելու, միսը կտրատելու համար: Դրանց թվում կան քերիչներ, երկրորդական հարդարումով ծլեփներ, «ղանակներ», «ծակրղ կամ ելուստավոր գործիքներ»: Կան միջանցիկ անցքով օժտված բազմաթիվ քարեր, որոնք կարող էին օգտագործված լինել բրդյա թելերից գործվածքներ հյուսելուն ծառայող մանածագործական հաստոցներում՝ որպես ծանրոցներ (աղ. III, 1-4): Հիմնականում, դրանք տորածն են, փուխր (չեչաքար, ծակուտկեն տուֆ) քարերից պատրաստված: Մի դեպքում ծանրոցը եռանկյուն պրիզմայած է, վերևում արված անցքով (աղ. III, 1), մեկ այլ նմուշ գլանած է, որի անցքն անցնում է վերջինիս բարձրությամբ: Ազարակում հանդիպում են ինչպես ամբողջական, այնպես էլ թերի օրինակներ: Բրդից թել մանելուն էին ծառայում հլիկները. որոնց քարե գլխիկները նույնպես հայտնաբերվել են պեղումներով (աղ. IV, 1, 2):

Անասնապահության վերաբերյալ անուղղակի վկայություն կարելի է համարել խոյագլուխ վերջավորություններով պայտածև հենակների, կենդանակերպ (ցլի մարմնով) շարժական հենակի, եղջերավոր հենակի առկայությունը: Հարցի մասին պատկերացում կազմելուն կարող են օգնել նաև կենդանիների փոքրիկ կավե արձանիկները: Հիշենք, որ Ա-

³¹⁹ Թյուբինգենի համալսարանի պրոֆեսոր Հ.Պ. Ուերփմանի ընտրոշմանը ցույց եղել է առնվազն 4 տարեկան:

³²⁰ H₁₂ քառակուսուց հայտնաբերված կենդանիների ոսկորները ընտրոշել է Ջ. Պիրոն (ԱՄՆ):

գարակի կուր-արաքսյան համալիրի պեղումներով գտնվել են եզան, խոյի, շան, խոզի թրծակավե մանրաքանդակներ: Եզան վզին արված կլոր միջանցիկ անցքը նշանակում է, որ կենդանին պատկերված է լծված վիճակում: Ինչպես տեսնում ենք, օջախի հենակների և թրծակավե մանրաքանդակների պատկերագրության ուսումնասիրության արդյունքները, հիմնականում համընկնելով հնակենդանաբանական հետազոտությամբ ստացված տվյալներին, հաստատում և մասամբ լրացնում են իրար:

գ) Որսորդությունը և ձկնորսությունը

Որսորդության վերաբերյալ կողմնակի վկայություն կարելի է համարել զենքի առկայությունը: Ազարակի կուր-արաքսյան համալիրի պեղումներով հայտնաբերված զենքերը քարից են պատրաստված: Վաղրոնզեդարյան անխաթար շերտից գտնվել է վանակատե մետասւլաք՝ հիմքում եռանկյունաձև փորվածքով (աղ. V,1): Սրա ծայրը փոքր-ինչ կտրված է, սայրին երկկողմանի մանր քառթեր են արված: Երկկողմ հարդարված տերևաձև մեկ այլ մետասւլաք պատրաստված է կայծքարից (աղ. V,2): Կուր-արաքսյան մոխրաշերտից հայտնաբերված գուրզը պատրաստված է բաց մոխրագույն քարից, գնդաձև է, ողորկ մակերևույթով, օժտված է միջանցիկ անցքով, Հայտնաբերվել են մեծ թվով գնդաձև քարեր, այսպես կոչված՝ «արկեր»: Դրանք նետելուն հարմար, կարծր փոքր քարեր են: «Արկերը» շատ լավ տեղավորվում են ձեռքի ափի մեջ, սակայն կարող էին նախատեսված լինել նաև պարսատիկով նետելու համար: Փորձառու նշանառուի ձեռքում, այդ քարերը կարող էին ազդու զենք դառնալ:

Հիշենք նաև, որ կարասներից մեկի մակերևույթին վայրի կենդանի՝ լեռնային (բեզդարյան) արու այծ է պատկերված³²¹: Այս անուղղակի փաստից ելնելով, միգուցե, կարելի է խոսել նաև նման կենդանիների հնարավոր որսի մասին:

Լեռնային Ամբերդ գետակի ափին բնակվողները, անշուշտ, զբաղվել են ձկնորսությամբ ևս: Ազարակում հայտնաբերվել են կարծր քարերից պատրաստված ծանրոցներ, որոնք, ըստ երևույթին, գործածվել են ուռկանի համակարգում՝ որպես սուգազնդիկներ:

³²¹ Բնորոշումը՝ ՀՀ ԳԱԱ կենդանաբանության ինստիտուտի առաջատար գիտաշխատող Ն.Յ. Մանասերյանի:

Աշխարհայացքի և գաղափարաբանության որոշ կողմերը

Ըստ հնագետ Պ.Ս. Ավետիսյանի, մ.թ.ա. III հազարամյակի առաջին քառորդում Ազարակի հուշարձանախմբի ողջ տարածքն իբեների ժայռակերտ պաշտամունքային մի վիթխարի համալիր է ներկայացրել: Աիքանի տասնյակ հեկտարներով տարածվող տուֆե ժայռահարթակի մակերևույթը մարդու միջամտությամբ վեր է ածվել քարե հսկայական կոթողի: Ժայռակերտ բազմաբնույթ կառուցվածքների շարքում նշվում են ժայռախորշերը, ուղղանկյուն և կլոր ավազանները, դրանք իրար միացնող առվակները, աստիճանները, զոհարանները և այլն: Արշավախմբի ղեկավարի կարծիքով, ժայռափոր կառուցվածքների մեծ մասը վերաբերում է Ազարակի վաղբրոնզեդարյան բնակավայրին: «Արբազան բնատեսքի» այս բացառիկ երևույթը պետք է հաշվի առնել կենտրոնական Փոքր Ասիայի և Հայկական լեռնաշխարհի մշակութային վաղնջական փոխառնչությունների հարցերը մեկնաբանելիս³²²:

Առայժմ պեղումներն ընդգրկել են հնագույն բնակատեղի տարածքի մի փոքր մասը միայն և բազմաթիվ հարցեր, որոնք կոչված են նպաստելու հիմնախնդրի պարզաբանմանը, դեռևս պատասխան չեն ստացել³²³: Այնուամենայնիվ, կարծում ենք, որ հայտնի տեղեկություններն արդեն այժմ հնարավորություն են տալիս իտեսել նաև տեղաբնիկների աշխարհայացքային որոշ պատկերացումների մասին, չմոռանալով, որ դրանցում իրականությունը, հաճախ, արտացոլվում էր պայմանական, հուզական-երևակայական ձևերով: Հին հասարակություններում ստեղծված և կիրառված իրերի հատկանիշներն արդյունք են դրանք պատրաստած մարդկանց աշխարհընկալման, որի հիմքում ընկած էր

³²² Аветисян, 2003, 54. Avetisyan, 2008, 41-44. Badalyan, Avetisyan, 2007, 26.

³²³ Մասնավորապես, դեռևս անհայտ են ընկատեղի իրական չափերը, կառուցապատման եատակագիծը, տեղեկություններ չկան պաշտամունքային կառույցների վերաբերյալ և այլն:

առասպելարանական մտածողությունը³²⁴: Ողջ ասվածից կարելի է եզրակացնել, որ Ագարակի կուր-արաքսյան համալիրի ընկալման գաղափարարանությունը ընկալման գաղափարը: Պտղարերությունն այն բարձրագույն նպատակն էր, որին միտված էր վաղորդնգեղարյան մարդու դիցարանական մտածողությունը:

Վաղորդնգեղարյան ընկալման գաղափարարանությունն իր կարևոր արտահայտություններից մեկն է գտել օջախները և դրանց կավաթուրծ հենակները պատրաստելիս: Հետագոտողների կրդմից դրանք ընկալվում են որպես կուր-արաքսյան հասարակության հոգևոր խորհրդանիշներ³²⁵: Հայ հնագետներից առաջինը Ե.Յ. Բայրուրյանն է անդրադարձել շենգավիթյան օջախների պաշտամունքային նշանակությանը³²⁶: Հնդեվոդական լեզվարանության տվյալներով, ծիսական օջախը և զոհարանը կոչվում էին միևնույն բառով³²⁷: Ըստ ազգագրական տեղեկությունների, ընտանիքի բարեկեցությունը կախված էր օջախից, այն մի կենտրոն էր, որի շուրջն էր կազմակերպվում գերդաստանի կյանքը³²⁸: Հին հավատալիքներով, օջախի կրակը պահպանելը սրբազան պարտականություն էր և ընտանիքի հարստության խորհրդանիշ³²⁹: Օջախը տան կենտրոնն էր, որտեղ գտնվում էր կրակը, որը, իր հերթին, կապված էր *բարի բախտի* հետ³³⁰: Այն ուներ բացառիկ ծիսա-պաշտամունքային նշանակություն³³¹: Օջախի երկրպագումը սերտորեն առնչվում էր ցլի պաշտամունքին: Վերն արդեն խոսք է գնացել I₁₁ քառակուսում հայտնաբերված ցլի զանգի մասին, որը գտնվել է կուր-արաքսյան մոխրաշերտում, գործածությունից դուրս եկած (շրջված և կտրված) օջախի հենակից ոչ հեռու: Կարելի է ենթադրել,

³²⁴ Антонова, 1984, 188.

³²⁵ Пхакадзе, 2003, 62.

³²⁶ Байбуртян, 1938, 257-259. Հաշվի առնելով մշակութային չտարբերակվածության գործոնը, իեարկե, չի կարելի բացառել նաև դրանց կենցաղային նշանակությունը. տե՛ս Арешян, 1981, 90. Пхакадзе, 2003, 62:

³²⁷ Гамкрелидзе, Иванов, 1984, 808, 884.

³²⁸ Հետազոտողները գտնում են, որ հունական Հեստիայի կլոր օջախն ընկալվել է որպես «պորտ», որի միջոցով տունն արմատավորվել է հողում (Топоров, 1974, 36-37):

³²⁹ Իսրայելյան, 2008, 201:

³³⁰ Иванов, Топоров, 1965, 72-73, 168.

³³¹ Гамкрелидзе, Иванов, 1984, 700.

որ ցլի գանգը, սկզբնապես, թաղված է եղել օջախի տակ³³²: Նման երևույթ փաստագրված է վսղտրիպոյան Լուկա-Վրուրլեվեցկայա ընկալատեղում³³³: Ցլի գանգի հայտնաբերումը օջախի տակ վկայում է վերջինիս անմիջական առնչվածությունը պտղարերությանը: Հայոց մեջ հարսանիքի համար մորթվող խոշոր եղջերավոր կենդանին ընկալվում էր իրրև մի զոհ, որն արվում էր մի նոր տուն ու կրակարան հիմնելու նպատակով³³⁴: Հնուց հայտնի է նաև կրակի և խոյի խորհրդանշական նույնացումը³³⁵: Ասվածի լավագույն վկայությունն են օջախի խոյազլուխ հենակները³³⁶: Կարելի է ասել, որ քննարկվող մշակույթում օջախի և խոյի պաշտամունքները հանդես են գալիս գիրկընդխառն, համատեղելով կրակի թարերեր ուժը և խոյի արգասավորությունը: Իր ընդհանրական ընդհանրիկ, Հայկական լեռնաշխարհի տեղարմիկների վաղրոնգեղարյան գաղափարարանությունը, ըստ երևույթին, օժտված էր ապշեցուցիչ կենսունակությամբ, քանի որ կուր-արաքսյան օջախների և օջախների հենակների պատրաստման ավանդույթները, որոնք ժամանակին արդեն տարածվել էին Լեռնաշխարհից շատ հեռու, մասնավորապես՝ հյուսիսում՝ մինչև Կովկաս, առանց էական փոփոխությունների, շարունակում են գոյատևել հյուսիս-մերձսևծովյան տարածքներում՝ մ.թ. II-III դարերում³³⁷:

Թրծակավե մանրակերտերը, որոնք Հայաստանի կուր-արաքսյան համալիրների գանգվածային գտածոներից են, նույնպես սերտորեն կապված են հնոց աշխարհայացքի և գաղափարարանության հետ: Հին երկրագործների կերտած արծանիկների իմաստարանությունը, հավանարար, ըստ է տիեզերքի (մասնավորապես՝ երկրի) վերաբերյալ եղած պատկերացում-խորհրդանիշների համակարգից: Մասնավորապես, պղնձեքարեղարյան նստած դիրքով մարդկանց արծանիկների փոխարինումը կանգնածներով կարող էր պայմանավորված լինել տիեզերական «ծառի-լեռան-մարդակերպ էակի» և աշխարհի արարչագործության պատկերացումների առնչվածությամբ, երբ ընդունվում էր տիե-

³³² Այս ենթադրությունը հավանական է, քանի որ հին պատկերացումների համաձայն զոհը տեղայնացվում է աշխարհի կենտրոնում, որտեղ գտնվում է «տիեզերքի պորտը» (Топоров, 1974, 37):

³³³ Бибиков, 1953, 266, рис. 33, 34.

³³⁴ Գլտչյան, 1912, 78:

³³⁵ Махабхарата V, 367.

³³⁶ Խոյազլուխ հենակների պաշտամունքային մշանակության վերաբերյալ տես Խանգաղյան, 2002, 3-5:

³³⁷ Археология СССР, 1984, 322, таб. СXXXI, 10, 11, 18.

գերքի տարբեր մասերի ուղղաձիգ կապվածությունը³³⁸: Ազարակուն հայտնաբերված մարդակերպ արձանիկներն ունեն մի շարք ընդհանրություններ: Դրանց գլխամասերը վնասված են կամ իսպառ բացակայում են, պեղումներով չեն հայտնաբերվել նաև պոկված ոտքերի մնացորդները: Չայտնաբերված մանրաքանդակները, մեկ բացառությամբ, կերտված են միևնույն՝ հարթ-պայմանական ոճով, բոլորի ձեռքերի փոխարեն, բացի մեկից, ելուստներ են արված, ընդգծված են սեռական հատկանիշները: Կանանց արձանիկների մերկությունը և դրանցից մեկի գլխի եղջուրը հուշում են, որ դրանք կերպավորում են գերբնական էակների, իսկ սեռական հատկանիշների շեշտված լինելը վկայում է նրանց ակներև փոխառնչվածությունը պտղարերության գաղափարին: Թևերի դիրքից կարելի է ենթադրել, որ կանայք պատկերված են պայմանականորեն՝ ձեռքերը կրծքին ծալված, որը հետագոտողներն անվանել են «Պտղաբերության աստվածուհու ժեստ»³³⁹: Բացի այդ, հղի կնոջ հիշեցնող և, եավանաբար, Մայր աստվածությանը մարմնավորող արձանիկը պատկերված է կրծքին դրված ամբողջական ձեռքերով (աղ. VII,3): Այս փաստը ակնառու կերպով հաստատում է այն ուսումնասիրողների ճշմարտացիությունը, որոնց կարծիքով՝ թևերին փոխարինող ելուստները խորհրդանշում են կրծքին ծալված ձեռքերը³⁴⁰: Սարդակերպ արձանիկներից մի քանիսը կարող էին սկզբնապես տեղադրված լինել կլոր կացարանի ներսում, օջախի և աղորիքի հարևանությամբ, ինչպես նախկինում արձանագրվել է այլ հնավայրերի պեղումներով: Ազարակի հնագիտական հուշարձանի I₁₁ և H₁₁ քառակուսիներում համանման իրավիճակի վերականգնման համար կողմնակի վկայություն կարելի է համարել նաև այն փաստը, որ հիշյալ մանրակերտերը հայտնաբերվել են կլոր կացարաններին կից տարածքում, մասնավորապես՝ գործածությունից դուրս եկած և ջարդված ու շրջված վիճա-

³³⁸ Антонова, 1977, 105, 110.

³³⁹ Бибииков, 1953, 223, 224, 237, 271.

³⁴⁰ Հիշյալ մանրաքանդակների նման մեկնարանությանն արդեն անդրադարձել ենք: Այդ երևույթը դիտվում է նաև էգեյան աշխարհում: Կրծքին ծալված թևերով է պատկերված Կոստոսից ծագող մինոսյան թրձակավե արձանիկներից մեկը, որի ձեռքերը, ինչպես Ազարակի արձանիկներից մեկինը, կերտված են իրապաշտորեն (Томсон, 1958, 236, рис. 18): Կրետեում կիկլադյան տիպի մանրաքանդակներին նախորդում են կավե տափակ արձանիկները, որոնք ձևով ջութակ են հիշեցնում (Пендлбери, 1950, 53): Ի դեպ, կրծքին ծալված ձեռքերով են պատկերվել Չայաստանի տարբեր ազգագավառներում ամանորի կապակցությամբ թախիղ մարդակերպ փոքրիկ եացերը, որոնց մարմնի տարբեր մասերին չամիչներ էին դրվում. աե՛ն Բդոյան, 1972, 442, տախտ. CLXII: Օդարաշյան, 1978, 54:

կում գտնված օջախի օղակաձև հեմակի մերձակայքում:

Մյուս կողմից, ելնելով քննարկվող առաքյալների ձևաբանական առանձնահատկություններից, ինչպես նաև դրանց գույների, թրժման որակի, կավազանգվածի բաղադրության, պահպանվածության մակարդակի ակնհայտ տարբերություններից, կարելի է ենթադրել, որ սրանք գործառնական առումով համադրելի լինելով, այնուամենայնիվ, կարող էին կերպավորել գերրնական տարբեր էակների: Կավաթուղծ այս ստեղծագործությունների դիտարկումը ինչպես կուր-արաքսյան, այնպես էլ երկրագործական (-անասնապահական) այլ մշակույթներին պատկանող նման կերտվածքների համատեքստում, բերում է մեզ այն համոզման, որ դրանք վնասվել են դիտավորյալ՝ գուցե հենց պատրաստողների կողմից: Ասվածից կարելի է եզրակացնել, որ դիտավորյալ վնասված կանացի թրժակավե արձանիկները Մայր աստվածությունների ռոռշ գործառնություններով օժտված փոքրիկ «կուռքեր» են³⁴¹, որոնք պատրաստվել են կյանքի հարատևության, պտղաբերության, բերրիության, վերջ ի վերջո՝ արարչագործության հետ առնչվող ու պարբերաբար կրկնվող ծեսերի կամ իրադարձությունների՝ նախ և առաջ՝ ամանորյա տոնակատարությունների, կապակցությամբ և «կտտանքների ենթարկվելով» զոհաբերվել են՝ համաձայն իրենց ծիսական նախասահմանվածության³⁴²: Հավանական է՝ ծիսական համապատասխան գործածություն են ունեցել նաև կենդանիների կավե արձանիկները, սայլերի մանրակերտերը³⁴³: Այժը, խոյը, ցուլը, շունը

³⁴¹ Ուսումնասիրողները դրանց համարել են նաև ընտանիքի, տոհմի հովանավորների, նախամայրերի, տարբեր ոգիների կամ աստվածությունների մարմնավորումներ. տե՛ս Антонова, 1990, 76, 163-166. Антонова, Есаян, 1988, 234. Массон, Сарьяниди, 1973, 87: Քննարկվող ժամանակաշրջանում Փոքր Ասիայի արևմուտքում (Բեյչիսուլթան), մարմարից քանդակված նման արձանիկները նվիրարեցվում էին սրրարաններից (Lloyd, Mellaart, 1958, 104, pl. XXVIII, 6):

³⁴² Հայ ազգագրությունից քաջ հայտնի նման մի կերպար է Ակլասիզը, որը թոնրատան երվիկից կամ առաստաղից կախում էին Մեծ պասի առաջին օրը, իսկ վերջին օրը տանից դուրս էին նետում, «հալածում». տե՛ս Շահազիզ, 1987, 222: Բդոյան, 1950, 13-21:

³⁴³ Կենդանիների կավակերտ արձանիկների ծիսական տարբեր գործածությունների վերաբերյալ փաստեր են արձանագրվել նաև Հայկական լեռնաշխարհի պղնձեքարե դարյան հուշարձաններում, որտեղ դրանք նետվել են կրակի մեջ (Արուլյո) կամ դրվել դամբարանում (Օուկի). տե՛ս К.Х. Кушнарева, 1977, 52: Ըստ ազգագրական տեղեկությունների, Հայաստանում տարածված է եղել ամանորյա տոնակատարությունների կապակցությամբ երկրագործական առարկաների, կենդանիների և թռչունների նմանվող ձևավոր թխվածքներ պատրաստելու և ծաշակելու սովորությունը (Բդոյան, 1972, 443-444: Օդարաշյան, 1978, 53-55): Հատկանշական է, որ սվանների ամանորյա համանման սովորությունները եամատեղվում են նախնիների պաշտամունքի հետ և ընկալվում որպես զոհաբերություններ. տե՛ս Бардавелидзе, 1957, 162-170:

«տիեզերական» պաշտամունքի առարկա էին, երկնային կենդանիներ, որոնք նույնացվում էին համաստեղություններին³⁴⁴: Տեղին է հիշել նաև այս սրբազան կենդանիների առնչվածությունը տարրեր աստվածություններին, ինչպես նաև դրանց կապը տիեզերական ծառի հետ³⁴⁵: Հնագույն ժամանակներում «Սայլ» էի կոչվում «Մեծ արջի» համաստեղությունը, ըստ որում՝ նկատի էր առնվում քառանիվ ծանր սայլը, որին եզներ էին լծվում³⁴⁶: Հայկական լեռնաշխարհում, ինչպես և Փոյուզիայում, հայտնի էի սրբազան սայլի պաշտամունքը, որն ուրարտական ժամանակաշրջանում կապվում էի տերության զերագույն աստծո հետ³⁴⁷: Անիվը, որպես արևի արևի խորհրդանիշ, լծորդվում է հնագույն ծիսակատարությունների հետ³⁴⁸: Ամեն դեպքում, քննարկվող մանրաքանդակներով մարդը փոքր չափերի մեջ վերակերտել է տիեզերքի մանրակերտը՝ երկնականարը՝ լուսատուներով ու համաստեղություններով և շրջապատող աշխարհը, որը նաև ապագան գուշակելու նպատակ ուներ³⁴⁹:

Խեցեղենի պատկերազարդումը ևս սերտորեն կապված է վաղբրոնզեդարյան հասարակության աշխարհընկալման հետ: Այս առումով հատկանշական է ռուսական զարդապատկերների տաղածված լինելը: Հատկապես սիրված է ուռուցիկ-ներճկված զարդաբանվածքը, որոնցով օժտված շրեչրլուր-մոխրաբլուրյան իմրի ինքնանոթների «նավակածն հիմքով» պատկերային հորինվածքները համաընկած են «կենաց ծառի» ոճավորված արտահայտություններ³⁵⁰: Կավաթուրծ իրի մակերևույթը զարդարող պատկերը, որտեղ «զույգ ճյուղերը» ներկայացված են մեկական կամ իրար զուգահեռ երկու կամ երեք լայն ակոսների միջոցով, ավելի նպատակահարմար է անվանել *տիեզերական ծառ*, որն առավել ընդհանուր հասկացություն է արտահայտում: Վերջինս դիցաբանական մտածողությանը ընդունելի կերպար է, որը խորհրդանշում է կարգավորված տիեզերքը և մարմնավորում է դրա բազմակողմանի ըմբռնումը: Այս գաղափարի հանդես գալը պայմանավորված է մարդու ինքնաճանաչման ձգտումով, աշխարհում իր տեղն ու դերը ներդաշնա-

³⁴⁴ Մարտիրոսյան, 1973, 21-22, 30-32, 36-38:

³⁴⁵ Տե՛ս Իսրայելյան, 1973, 51, 67: Ригведа, 47. Старшая Эдда, 38. Флиттнер, 1958, 121. Демирханян, 1981, 31-32. Гамкрелидзе, Иванов, 1984, 576, 587, рис. 10 և այլն:

³⁴⁶ Гамкрелидзе, Иванов, 1984, 686, 725.

³⁴⁷ Պետրոսյան, 2005, 220:

³⁴⁸ Иванов, Топоров, 1965, 135.

³⁴⁹ Абрамян, 2005, 172-173.

³⁵⁰ Խանգաղյան, 1967, 72, աղ. XX:

կորեն սահմանելու ունակությամբ³⁵¹:

Այսպիսով, կուր-արաքսյան հնագիտական համալիրներին ընդրոշ նման հավաքածոները և գաղղսապատկերները այդ մշակույթը կրող մարդկանց աշխարհայացքի ու գաղափարարանության առարկայացված դրսևորումներից են և իրենց գործառնությամբ միտված են եղել օժանդակելու աշխարհի արարչագործությանը, ապահովելու ստղարերությունն ու արգասավորությունը, լիությունն ու առատությունը, իրենց արարող հասարակության ներդաշնակ կենսակերպը: Քննարկվող առարկայախմբերը, հավանաբար, օգտագործվել են վերը թվարկված հասկացություններին սերտորեն առնչվող իրադարձությունների ընթացքում, ամենից առաջ՝ նոր տարվա ծիսակատարությունների համակարգում:

³⁵¹ Топоров, 1980, 398, 405.

Ամփոփում

Ազարակի հուշարձանախումբը գտնվում է Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան հատվածում՝ Այրարատ բնաշխարհի նախալեռնային գոտում, Արագած լեռան հարավարևելյան փեշերին, պատմական Արագածոտն գավառի հնամենի Աշտարակ բնակավայրից 7 կմ - դեպի արևմուտք: Այն բազմաշերտ հուշարձան է, որտեղից առայժմ հայտնաբերված ժամանակագրորեն ամենավաղ հավաքածոները (Ազարակ I) կազմված են կուր-արաքսյան մշակույթին բնորոշ արտեֆակտներից: Կուր-արաքսյան մշակութային շերտն ընդգրկում է երկու հորիզոն, որոնցից երկրորդը, ակներևաբար, կապված է կլոր կացարանների բնակիչների կենսագործունեության հետ: Այն իրենից ներկայացնում է 0,40-0,45 մ միջին հզորությամբ մոխրաշերտ, որի մեջ պահպանվել են շինարարական առաջին (ստորին) հորիզոնի կառույցների որոշակի մնացորդներ:

